ՈՒՂԻՂ ԱՐԱՐԱՏԻ

Թիվ 2 (18). հոկտեմբեր – դեկտեմբեր. 2009 թ.

7 դեկտեմբեր 2009թ., Սպիտակ տուն, Օբամա-Էրդողան հանդիպումը Սպիտակի երկրաշարժի 21-րդ տարելիցի օրը:

«ՈՒԺՆ Է ԾՆՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ... ԻՐԱՎՈՒՆՔՆ ԷԼ ՈՒԺ Է ԾՆՈՒՄ»

Արա Պապյան
«Մոդուս Վիվենդի» կենտրոնի ղեկավար

Պարբերականի այս համարը ամբողջովին նվիրված է
Հայաստան-Թուրքիա Արձանագրությունների հարցերին:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստան - Թուրքիա Արձանագրություններ. նախադեպերը, հետապնդած նպատակները և վավերացումից բխող սպառնալիքները	էջ 1-5	
Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև նախաստորագրված արձանագրություններ	էջ 6-7	
Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ստորագրված արձանագրություններ	էջ 8-9	
Հայտարարություն թիվ 9	էջ 12-13	
Հայտարարություն թիվ 10	էջ 13-15	
Հայտարարություն թիվ 11	էջ 16	
Առաջարկ	էջ 16-17	
Բաց նամակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին	էջ 17-19	
ՀՀ քաղաքական դաշտի արձագանքները	էջ 19	
Երեք պայմանագիր	էջ 20-21	
Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև նախաստորագրված Արձանագրությունների վավերացումից բխող սպառնալիքը	էջ 22	
ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը հայ ժողովրդին	էջ 23-24	
Բաց նամակ	էջ 24-27	
Հայաստանի [առաջին] Հանրապետության ճանաչումը Միացյալ Նահանգների կողմից	էջ 28-29	Արա Պապյան
Հայ-թուրքական Արձանագրությունները հակասահմանադրական են	էջ 29	Արա Պապյան
«Անավարտ Նյուրնբերգ». Երիտթուրքերի դատավարության 90-ամյակի առթիվ	էջ 32-34	
Կարևոր անցքեր Յանիկյանի դատավարությունից	էջ 35	
Սողոմոն Թեհլիրյան	էջ36	
Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակը հերքում է	էջ 36	

Լրատվական գործունեություն իրականացնող «Ուխտ Արարատի» ՍՊԸ, հասցեն Կասյան 6/19, վկայական N-03A 069706, տրված 12.10.2005թ.

Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

Համարի թողարկման պատասխանատու՝ Տիգրան Փաշաբեզյան

Պարբերականի այս համարը պատրաստված է գունավոր պատճենահանման եղանակով:

Խմբագրության հասցեն՝ 375010, Երևան, Ագաթանգեղոսի 7բ
Հեռ. (37410) 52-51-90

Official periodical of "Oukht Ararati" LTD

EDITORIAL BOARD
Responsible of the issue: Tigran Pashabezyan

Address: 375010, Yerevan, Agatangeghos 7b
Tel. (37410) 52-51-90
E-mail: oukhtararadi@yahoo.com
www.oukhtararati.com

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:

Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:

Հայաստան - Թուրքիա Արձանագրություններ. նախադեպերը, հետապնդած նպատակները և վավերացումից բխող սպառնալիքները

(Յուսուֆ Քեմալ - Գեորգի Չիչերին, Ռիբենտրոպ - Մոլոտով պակտերի մերօրյա տարբերակը)

1.

Հայաստան-Թուրքիա Արձանագրությունների նախադեպերը, հետապնդած նպատակները: Այս արձանագրությունների ի հայտ գալը նորամուծություն չէ: Այն ունի նախապատմություն: Նման սցենարը իրականացվել է առնվազն երկու պատմական դրվագներում: Առաջինը՝ 1921 թ. մարտի 16-ին, երբ քեմալական Թուրքիան և բոլշևիկյան Ռուսաստանը կնքեցին Մոսկվայի պայմանագիրը, երկրորդը՝ 1939 թ. օգոստոսի 23-ին, երբ ֆաշիստական Գերմանիան և Խորհրդային Միությունը կնքեցին, այսպես կոչված, Ռիբենտրոպ-Մոլոտով պակտը՝ պայմանագիրը: Երկու դեպքում էլ կողմերը պայմանագիր էին կնքում երրորդ պետությունների համար՝ չունենալով դրա համար ոչ մի լիազորություն կամ իրավասություն, ավելին՝ իրավունք: Յուսուֆ Քեմալ - Գեորգի Չիչերին 1921 թ. մարտի 16-ին կնքված պայմանագիրը, անտեսելով ու շրջանցելով հայության և Հայաստանի շահերն ու բոլոր իրավունքները, ըստ Տրոցկու հայտնի ծրագրի՝ հանուն համաշխարհային հեղափոխության՝ պատճառաբանությամբ, նպատակ ուներ կազմել Թուրքիա-Հայաստան-Վրաստան ֆեդերատիվ պետություն, որպես Միջին Արևելքում և Ասիայում համաշխարհային հեղափոխություն տարածելու բոլշևիկյան «գործիք»: Նույն ծրագիրը իրականացվում է այժմ, միայն թե այն տարբերությամբ, որ, անկախ կովկասյան պլատֆորմի թուրքական առաջարկի ծրագրերից, վաղվա ստեղծվելիք Թուրքիա-Հայաստան-Վրաստան ընդհանուր պետությունը ենթակա է լինելու Նոր Եվրոպա պետությանը: Մինչդեռ Ադրբեջանը դեռևս մնալու է որպես Ռուսաստանի Դաշնության ազդեցության գոտի:

Յուսուֆ Քեմալ - Գեորգի Չիչերին պակտը. 16 մարտ, 1921թ., Մոսկվա

Ըստ էության, Ռուս-թուրքական 1921թ. ապօրինի պայմանագիրը՝ պակտը, հենց այս գիծն էր առաջ տանում, և դրա նպատակներից մեկն էլ Հայոց ցեղասպանությունը Արևելյան Հայաստանում ավարտին հասցնելն էր: Ինչպես այն ժամանակ, հիմա ևս այդ նպատակը մնում է նույնը: Դա ի հայտ է գալիս, այսպես կոչված, Հայաստան-Թուրքիա հարաբերությունները իբր կարգավորելու միտված չորս փաստաթղթերից, որոնք ինքնին կազմում են մեկ ամբողջական իրավական նորմատիվ փաթեթ: Արձանագրությունները ողջունողների խոսքերից կարելի է եզրակացնել, որ սա քաղաքական գործիք է՝ իրականացնելու վերը նշված, հեռուն գնացող, ծրագիրն ու ծրագրերը:

Այստեղ պարզապես հիշենք, որ 1921-ի մարտի 4-ին, Յուսուֆ Քեմալ-Գեորգի Չիչերին պակտի ստորագրումից մի քանի օր առաջ Տրոցկին հայերին խորհուրդ էր տալիս զոհաբերել ոչ միայն իրենց տարածքները, այլև իրենց ցեղակիցների խմբերին, որոնց շարունակում էին ոչնչացնել՝ ամբողջացնելով Օսմանյան կայսրության մեջ սկիզբ առած հայերի ցեղասպանությունը[1]: Հատկանշական է, որ 1939-ի օգոստոսի 22-ին, Ռիբենտրոպ-Մոլոտով պակտի ստորագրումից ընդամենը մեկ օր առաջ, Վերմախտի սպայակազմի առաջ իր ելույթում Հիտլերը նշում էր ֆաշիստական Գերմանիայի նոր ծրագրերը, որոնց նպատակը օկուպացվող երկրների տարածքներում տեղի բնակչության, իրենց բնորոշմամբ՝ ցածր ռասսաների, ոչնչացումն էր, նրանց՝ ցեղասպանության ենթարկելը[2], իսկ մնացորդածի՝ ստրկացումը:

Դավութօղլու-Նալբանդյան պայմանագիրը՝ պակտը իր նախորդներից տարբերվում է նրանով, որ փաստաթղթի տակ այլևս չի դրվում քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի ներկայացուցիչների ստորագրությունը: Բայց այդ փաստաթղթի պարունակած անօրինական դրույթները վերավավերացվում են, որովհետև փաստաթղթերի բովանդակությունը, ըստ էության, նույնն է՝ անտեսել հայության և Հայաստանի բոլոր իրավունքները, այժմ արդեն՝ հանուն գլոբալացման և եվրոպական ինտեգրման նոր հեքիաթների ու նոր կեղծ գաղափարների, սակայն նույն սարսափելի հետևանքներով, որոնք նախորդել կամ հետևել էին վերոհիշյալ երկու պայմանագրերին՝ պակտերին:

Նորամուծությունն այն է, որ այժմ, ի տարբերություն նախորդի, երկու կողմերը՝ Հայաստանն ու Թուրքիան են պարտավորություններ ստանձնում Նոր Եվրոպա պետության հանդեպ: Հասկանալի է, այս պարտավորությունն ու պարտադրանքը բխում է այն բանից, որ գերտերությունների պաշտոնյաներն այլևս չեն ցանկանում ռիսկի դիմել և չեն ցանկանում բացահայտ երրորդ երկրների համար պայմանագրեր կնքել՝ լավ հասկանալով, որ դա միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների կոպիտ խախտում է, ըստ այդմ, պատժի ենթակա հանցագործություն: Հիմա դա արվում է կողմերին պարտադրելու կամ հարկադրելու, նույնիսկ ստիպելու միջոցով, որտեղ իրենք, իբր թե դերակատար չեն և հետևաբար, իբր թե պատասխանատու չեն…

Սա է Դավութօղլու-Նալբանդյան պայմանագրի՝ պակտի իրողությունը, և հաշվի առնելով նախորդ փորձը, երբ ո՛չ Ռիբենտրոպ-Մոլոտով պակտը և ո՛չ էլ Յուսուֆ Քեմալ-Գեորգի Չիչերին պակտը խաղաղություն չբերեցին այդ փաստաթղթերին առնչվող ժողովուրդներին ու երկրներին, վստահորեն կարելի է ասել, որ այս նորօրյա պակտը ռազմա-քաղաքական նոր ցնցումների է ենթարկելու տարածաշրջանի բոլոր ժողովուրդներին ու պետություններին: Որքան էլ թուրքական և թուրքամետ ուժերն ու կողմերը ոգևորված լինեն դրանից, միևնույնն է, գոյություն ունի նաև դրա նախադեպը, երբ երիտթուրքերն էին ստանձնում Օսմանյան կայսրությունը «նոր ուղիով» առաջնորդելու խնդիրը: Թե ինչ եղավ կայսրության և երիտթուրքերի հետ՝ հայտնի է բոլորին. կայսրությունը փլուզվեց, իսկ երիտթուրքերը կանգնեցին ոչ միայն Օսմանյան ռազմական արտակարգ ատյանի, այլև պատմության դատաստանի առջև…[3]:

Այս դեպքում էլ պատմությունը կարող է կրկնվել, սակայն վերջին մասով միայն, որովհետև հայությունը՝ պատմական դաժան փորձից բխած զգուշավորության ու անվստահության պատճառով և ռազմա-քաղաքական նոր իրողություններից մեկնած, ինքնապաշտպանության դիմելու իրավական բոլոր հիմքերն ունի, և դա անելու է վստահաբար:

Դավութօղլու-Նալբանդյան պակտի մեկ այլ առանձնա-

հատկությունն էլ այն է, որ սրանով արևմուտքը փորձում է շրջանառությունից հանել ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքներն ու նորմերը, մասնավորապես, «Ցեղասպանության հանցագործության և դրա պատժի մասին» կոնվենցիան: Դա արվում է կոնվենցիան մոռացության մատնելու, հայության հայրենիքը ուրիշին որպես կաշառք «նվիրաբերելու»[4], պատերազմի նոր ձևերի և տեխնոլոգիաների մեջ ցեղասպանություն իրականացնելու ձևերը[5] պահպանելու, դրանց տխրահռչակ փորձը շատ մոտ ապագայում զարգացնելու նպատակով:

ԱՄՆ բանակի պաշտոնաթող սպա Ռալֆ Պիտերսը նշում է. «Հիշենք նաև 5 հազար տարվա վաղեմության մի փոքրիկ կեղտոտ գաղտնիք: Էքնիկական զտումն իր գործն անում է»[6]: Այլ կերպ ասած՝ «Կանաչ լույս» է վառվում նոր էքնիկական զտումների, իմա՝ նոր ցեղասպանություն իրականացնելու…

Հեռահար նպատակներից մեկն էլ ՆԱՏՕ-ի բանակի վերակազմավորումն ու համալրումն է նոր … «զինվորներով»: Նախնական հաշվարկներով ՆԱՏՕ-ն ակնկալում է հավաքագրել առաջիկա պատերազմներում շահագրգռություն և ակնկալիք ունեցող մի քանի միլիոն թուրք, քուրդ, ալբանացի, աֆղան և այլ ազգերի «զինվորներ»: ՆԱՏՕ-ի սպայակազմը լիովին բավարար է՝ ղեկավարելու և կազմակերպչական խնդիրները հոգալու համար:

2.

- **Արծանագրությունների և Մադրիդյան սկզբունքների հետապնդած մեկ այլ թաքուն նպատակ էլ կովկասյան եռակողմ՝ Ադրբեջան-Հայաստան-Վրաստան, պատերազմ հրահրելու հետևանքում ՆԱՏՕ-ի զորքերի տեղակայումն է Կովկասում[7]:** Փաստորեն, առաջին քայլն արված է. պատրաստվում են Նախիջևանը հռչակել անկախ պետություն, հնարավոր է՝ քրդական (ինչպես նախատեսել էին Քեմալն ու Լենինը դեռևս 1919-1920 թթ.), իբր հակակշիռ ԼՂՀ-ին, իրականում, սակայն, դա այն երաշխիքն է, որը որպես կաշառք տրվելու է քրդերին, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի տարածքում ստեղծվելիք, սկզբում՝ ինքնավար, հետագայում անկախ՝ պետությունը քրդերը կստանան, եթե ՆԱՏՕ-ի բանակներում համաձայնեն պատերազմելու Իրանի, Սիրիայի, Աֆղանստանի ու Պակիստանի[8], հնարավոր է նաև՝ Հնդկաստանի ու Չինաստանի[9] տարածքներում, ձևավորելու համար Պենտագոնի կողմից գծված քարտեզը[10], ինչը համաձայնեցված է ՆԱՏՕ-ի և Նոր Եվրոպայի հետ: Երբ Ի. Ալիևը թուրքալեզու պետությունների ղեկավարների հետ Նախիջևանում հանդիպման ժամանակ հարցը բարձրացրեց, դա Ադրբեջանի շտապողականության հետևանք չէր, քանի որ Նոր Եվրոպայի կառավարման կաբինետը վստահ էր, թե վավերացումը տեղի կունենա հոկտեմբերի 13-ին: Վավերացումը խանգարվեց Եվրոմիության կազմավորման ներքին խնդիրների պատճառով, որը մեկ ամիս ետ ընկավ ժամանակացույցից: Այժմ Եվրոմիություն-Իսրայել-ԱՄՆ ալյանսը, պարզապես, անհամբերությամբ սպասում է Հայաստան-Թուրքիա Արծանագրությունների վավերացմանը:

Ռիբենտրոպ - Մոլոտով պակտը. 23 օգոստոս, 1939թ., Մոսկվա

3.

- **Եվրոմիությունը արդեն ունի նախագահ, արտաքին հարաբերությունների և անվտանգության հարցերի նախարար:** Հարց է ծագում, իսկ ինչո՞ւ են լիազորությունները ստանձնում ոչ թե դեկտեմբերի 1-ից, այլ հունվարի 1-ից: Կարծում ենք, որ ակնկալում են Կովկասում եռակողմ պատերազմը հրահրել դեկտեմբեր-հունվար շրջանում, եթե ստացվի Թուրքիային պարտադրել Արծանագրությունները վավերացնել, հետո Հայաստանին ևս պարտադրել դրանք վավերացնել և վավերագրերը փոխանակել, որից հետո արդեն Նախիջևանը կարող է հռչակել իր անկախությունը և ռազմական գործողություններով փորձել Զանգեզուրի հարավից միջանցք բացել՝ Ադրբեջանի հետ կապվելու համար:

Հայտնի է, որ դեկտեմբերի 20-ից մինչև հունվարի 20-ը աշխարհի բոլոր երկրների դիվանագիտական կորպուսները տոնական հանգստի մեջ են, նույն վիճակում է նաև գրեթե բոլոր երկրների մամուլը: Ինչպես հայտնի է փորձից, սովորաբար արևմտյան նմանատիպ բոլոր գործողությունները սկսվում են հենց այդ ժամանակահատվածում, երբ աշխարհը ի վիճակի չէ իմանալ, թե ինչ է կատարվում և հետևաբար միջոցներ չի կարող ձեռնարկել իրավիճակը վերահսկելու համար: Այնպես որ, արդեն հունվարի սկզբին, երբ լրիվ ընթացքի մեջ կլինի կովկասյան եռակողմ պատերազմը՝ Նոր Եվրոպա գերտերության նախագահը, ՆԱՏՕ-ի հետ միասին, կփորձի քայլեր ձեռնարկել ՆԱՏՕ-ի զորքերը, առաջնահերթորեն դրանցում ներգրավված թուրքական արագ արձագանքման ուժերը, համաձայն՝ Վրաստանի ու Ադրբեջանի խնդրանքի և Հայաստան-Թուրքիա Արծանագրությունների պահանջի, տեղակայել կովկասյան երեք հանրապետություններում, միաժամանակ դնելով նաև այդ երեք հանրապետությունների բանակների զինաթափման հարցը, որպես թե պատերազմը կանխելու «միակ» միջոց:

Պարզվում է, այս գործողություններն իրականացնելու և այդ քայլերի «իրավականությունը» ապահովելու նպատակով՝ ՀՀ օրենքում արդեն իսկ ներառված է համապատասխան դրույթ, որպեսզի ոչ Սահմանադրական դատարանը և ոչ էլ Ազգային ժողովը չփորձեն արգելակել՝ պատճաբանելով, թե հայկական բանակը զինաթափելը հակասում է ՀՀ Սահմանադրությանը: Սահմանադրական արգելքի կարիքը չի լինի, որովհետև գործող օրենքը թույլատրում է: Օրենքը ընդունվել է 2007-ի փետրվարին[11] ինչը նշանակում է, թե գործողությունը նախատեսված էր սկսել դեռևս 2008-ի վրաց-օսական հակամարտության և կովկասյան ընդհանուր պատերազմի սցենարով: Բայց քանի որ այդ փորձը ձախողվեց, իսկ վրացական սցենարը կրկին գործարկելը գրեթե անհնար է, ապա առաջին պլան է մղվում Նախիջևանի անկախության ինքնահռչակման նոր տարբերակը: Հիշենք, որ 1990 թ. Գորբաչովի իշխանության ժամանակ և նրա թողտվությամբ ադրբեջանցիները քարուքանդ արեցին դեռևս գոյություն ունեցող ԽՍՀՄ պետական սահմանի նախիջևանյան հատվածը, իսկ ԽՍՀՄ սահմանապահ ուժերը լքեցին իրենց վերապահված դիրքերը:

4.

- **Այս ամենը արվում է նույն Կոսովոյի փորձված տարբերակով: Համաշխարհային զինուժի վերածված ՆԱՏՕ-ի ռազմաբազաները ծրագրում են տեղակայել Կոնգոյում, Կոսովոյում, Կովկասում[12]: Կովկասը** Կոսովոյի օրինակով 2010-ի հունվարի 1-ից ծրագրում են վերածել ՆԱՏՕ-ի տեղակայման բազաների, որոնք մտադիր են տեղակայել հայկական տարածքներում, որովհետև տեղի բնիկ ժողովուրդը հայերն են: Ադրբեջանական մասը, ըստ ծրագրի մեջ կատարված փոփոխության, դեռևս մնում է ռուսական ազդե-

ցության տակ: Այս ամենը գալիս է հաստատելու, որ ծրագրերը համաձայնեցված են ռուսական քաղաքական գծի հետ: **Կոսովոն** ամբողջությամբ տրվում է ՆԱՏՕ-ին, իր ժողովրդով, ենթակառուցվածքներով, ամեն ինչով, որի դերը եվրոպական երկրների վրա հսկողություն սահմանելն է: Այդ բանակում չեն կարող ներառվել եվրոպական երկրների զինվորներ, իսկ ալբանական թուրքերն ու եվրոպական քրդերը, ինչպես նաև եվրոպական երկրների միգրատների ճամբարներում գտնվող աֆղան և այլ ազգերի փախստականները եվրոպական զինված ուժերում հանգիստ կարող են գործածվել եվրոպական երկրների խաղաղ բնաչության դեմ, եթե վերջիններս փորձեն ինչ-ինչ հարցերում ընդվզել վերազգային, վերպետական իշխանությունների դեմ: **Կոնգոյում** և հարակից տարածքներում ռազմա-քաղաքական զարգացումները արդեն երկու-երեք տարի է ինչ ընթացքի մեջ են:

Տեղի է ունենում ՆԱՏՕ-ի ձևափոխումը արևմտյան համաշխարհային զինուժի, որի վրա ոչ մի պետություն ազդեցություն չի կարող ունենալ: Սա է համամարդկային նշանակության ամենամեծ վտանգը: Փաստորեն, համաշխարհային զինուժ ՆԱՏՕ-ն առանձին-առանձին ճնշելու է նաև եվրոպական երկրներին:

5.

- **Պետք է հատուկ ընդգծել, որ ներկայում էականորեն փոփոխված են նաև պատերազմելու ձևերն ու տեխնոլոգիաները:** Պատերազմական իրադարձություններին նախորդում են օրենսդրական-սահմանադրական ագրեսիաները: Թիրախ պետությունների օրենսդրությունը համապատասխանեցվում է երկրի պաշտպանական ներուժի անկման, տնտեսության փլուզման, սոցիալական արդարության և ժողովրդավարության վերացման, իրավական ճգնաժամի հաստատման, տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների ուռճացման հաշվին՝ պետության ամբողջության տրոհման, պետության ինքնալուծարման, բանակի զինաթափման ծրագրերին: Դրանց իրականացման նպատակով, մեր աչքի առաջ, իբր թե՝ խորհրդատվական, իրականում՝ քայքայիչ, դանդաղ, բայց ամենօրյա հետևողական աշխատանքներ ու գործողություններ են իրականացվում:

Այնուհետև կարող են գործի դրվել միջազգային ահաբեկչության հայտնի դրսևորումները, երբ բանակներն արդեն պատերազմում են խաղաղ բնակչության դեմ: Դրա ներմուծման պատճառն այն է, որ մարդկությունը հոգնել է պատերազմներից, իսկ արևմուտքը պատերազմելու համար զինվորներ չունի: Վարձու զինվորներն են կռվում անզեն բնակչության դեմ:

Առաջին աշխարհամարտից սկսած գործի դրված պատերազմելու դասական ձևերը լրացվել են ներառելով նոր տեխնոլոգիաներ, այդ թվում՝ միջազգային տուրիզմի, արհեստական միգրացիաների միջոցով երկրի ու տարածաշրջանի ազգագրական պատկերը փոխելու ձևը, երբ բնիկ ժողովուրդը, իր երկրում, իր համար անսպասելի հայտնվում է փոքրամասնության կարգավիճակում:

6.

- **Ի՞նչ անել:** Ճշմարիտն ասած, նախօրոք՝ 1994-ի հրադադարից հետո, պետք էր անել. հետապնդել մեր խնդիրները իրավունքի ոլորտում և հնարավոր բոլոր միջոցներով, այդ թվում, և, առաջին հերթին, պետական բոլոր լծակներով: Դա չի արվել, իսկ այսօր ժամանակ քիչ է մնացել, ինչը նշանակում է, որ արդեն պետք է մտածել պաշտպանության այլ միջոցների ու ձևերի մասին: Պետք է պատրաստվել դիմակայության բոլոր ճակատներում և, ի տարբերություն 1988-94 թթ., դիմակայելու պատերազմի դասական և ժամանակակից բոլոր ագրեսիաներին, այդ թվում՝ օրենսդրական-սահմանադրական նոր ագրեսիաների, միջազգային տեռորիզմի ներթափանցման, համաճարակային տարատեսակ թռչնի և խոզի գրիպների, խմելու և ոռոգման ջրի զանգվածային թունավորումների, տնտեսական արհեստական ճգնաժամի ու սովի, շրջափակման խստացման, նաև, այսպես կոչված, «օրինական» և ոչ օրինական կրոնական փոքրամասնությունների միջոցով հրահրվելիք արհեստական խժդժությունների սցենարներին…

Ամենակարևորը, պետք է իմանալ, որ հիմնական թշնամին, եթե նախկինում հանուն համաշխարհային հեղափոխության եզրն էր ու հորինված պատճառաբանությունը, ապա այսօր՝ հանուն գլոբալացման, եվրո-ինտեգրման նոր կեղծ հեղափոխական թեզերն ու տրամաբանությունը: Դա չի նշանակում արդյո՞ք, որ գործ ունենք նեոբոլշևիզմի այլ կատարման և նոր նեոբոլշևիկ կոմիսարների հետ: Թուրքերը, քրդերը, ալբանացիները… ընդամենը գործիք են: Իսկ գործիքը ինքը չի որոշում, չի էլ կարող որոշել իր անելիքը: Պարզապես, դա նրան շահեկան է թվում, ավելին նրան թվում է, թե ունի անպատիժ սպանելու, թալանելու, կողոպտելու «իրավունք», նաև անպատիժ մնալու հնարավորություն: Սա ամենևին չի նշանակում, թե գործիքի դեմ նույնպես չպետք է պայքարել, քանզի, եթե չհաղթես գործիքին, պարտվում ես գործիքն օգտագործողին: Այլ հարց է, որ թե մենք, թե աշխարհի շատ հին ժողովուրդներ ու երկրներ, որոնք նույնպես հարվածի տակ են համաշխարհային այս մեծ աղետի հրահրման պահից սկսած, պետք է սովորեն դիմակայել չարիքը նշված բոլոր մակարդակներում, դիմագրավելու ու հակագրոհի անցնելու համապատասխան ձևերով ու ծրագրերով: Դրա փորձը, ի տարբերություն թիրախ մյուս ժողովուրդների ու երկրների, հայությունը 1988-ից սկսած դաժան փորձի միջոցով բավականին տիրապետել է:

Դավութօղլու-Նալբանդյան պակտը. 10 հոկտեմբեր, 2009թ., Յուրիխ

Ավելին, հայ հասարա-քաղաքական, իրավական միտքը հիմա նույնը չէ, ինչ դարասկզբին էր: Նա ուսանելի ու բովանդակային մեծ ճանապարհ է անցել: Ուստի, մեր առաջնային պարտքն է վերականգնել նրա պատասխանատվություն ստանձնելու և արագ գործելու մեծ ունակությունը: Եթե խաղաղ պայմաններում դա իրոք դժվարին գործ է, ինչպես և հաշվել են արևմուտքի տեսաբանները, ապա վտանգի ու սպառնալիքի առկայության դեպքում նա ինքնակազմակերպման մեծ ներուժ ունի: Դա հայության ընդհանրական մտածողության բնական մեխանիզմն է, որը ենթակա չէ ծրագրավորման, անգամ ՀՀ իշխանությունների կողմից, ուր մնաց՝ արևմուտքի:

Փաստորեն, «Չկա չարիք, առանց բարիքի»: Ամբողջովին մենակ ենք. անգամ իշխանությունները ժողովրդի հետ չեն: Իսկ մենք հաղթում ենք, երբ մենակ ենք, նույնն էր 1918-ին, նույնն էր 1988-ին: Չկա ռուսական հույսը, չկա ամերիկյանը[13], իսկ բարի դրացի Եվրոպան շուտով իսկ պատռելու է իր դիմակը: Մեծ հարձակումը իրականացվելու է ողջ հայության նկատմամբ. հարվածներ կարող են լինել Ջավախքում, ԼՂՀ-ում, ՀՀ-ում, մոտակա և հեռավոր սփ-

յուրքում, Միջին Արևելքում, Եվրոպայում, ԱՄՆ-ում: Հիշենք, թե ինչպես ԱՄՆ-ում, ցեղասպանությունից հետո, ուզում էին հայերին երկրից վտարել ու սովի մատնել: Իսկ հեռավոր արևելքում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, չգիտես ինչո՞ւ, նույնիսկ ճապոնացիներն էին հետապնդում տեղի սակավաթիվ հայերին[14]:

Այնպես որ, հենց այստեղ էլ պետք է մարտն ընդունել և հաղթել: Կհաղթենք, քանզի պարտվելու իրավունք չունենք: Հազարամյակներ ժառանգած մեր ազգային հարստությունը, այդ թվում՝ ազգային տարածքները, պարտավոր ենք պաշտպանել, պահպանել ու ժառանգել մեր սերունդներին: Եթե հայոց ներուժը 10 միլիոն հայության 10 տոկոսն է, որը նշանակում է 1 միլիոն աշխարհազորային, ուրեմն, առաջիկա սպառնալիքներին մենք պարտավոր ենք ապահովել ու հակադրել հենց այդքան ինքնակազմակերպվող ու ինքնակառավարվող զինուժ: Եթե ՄԱԿ-ի հիմնարար փաստաթղթի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի պահանջը, այն է՝ **«քանզի անհրաժեշտ է օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները, որպեսզի նա, որպես վերջին միջոց, հարկադրված չընդվզի բռնակալության ու ճնշման դեմ»**, անտեսվում է, ուրեմն, գործում է **բռության և ճնշման դեմ ընդվզելու** հայության իրավունքը:

<u>Ծանոթագրություն</u>

1. **«Եթե Թուրքիայում մնացած հայությունը կառավարության կողմից այժմ հետապնդվի ու ճնշվի, միևնույնն է, Հայաստանին, մի որոշ ժամանակ, ոչինչ չի մնում անել, քան հաշտվել ստեղծված դրության հետ և հանուն համաշխարհային հեղափոխության շահերի զոհաբերել, թե՛ իր նախկին տերիտորիաները և թե՛ Թուրքիայում մնացած սեփական ժողովրդի մի մասը»,** - Լև Տրոցկի, ստորագրել է Ա. Սկաչկո կեղծանվամբ, «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածը լույս է տեսել Ազգային գործերի ժողովրդական կոմիսարիատի «Ժիզն նացիոնալնոստեյ» պարբերականում՝ 4 մարտի, 1921թ., Մոսկվա, Ռուսթուրքական պայմանագրի ստորագրումից ընդամենը 12 օր առաջ:

2. Հիտլերը իր նախկին խորհրդատուի (Շոյբների), որը 1915-ին էրզրումի գերմանական հյուպատոսն էր, միջոցով լավ տեղյակ լինելով հայերին ոչնչացնելու երիտթուրքերի գործողություններին, 1939-ի օգոստոսի 22-ին Վերմախտի բարձր հրամանատարության առջև իր ելույթում հեգնաբար ակնարկեց պետական հանցագործությունների հարցում մարդկային խղճի մոռացկոտության մասին. **«Ես հրաման եմ տվել… այն, որ պատերազմի նպատակը որոշակի բնագծերի ձեռքբերումը չէ, այլ հակառակորդի ֆիզիկական ոչնչացումը… Ո՞վ է այսօր խոսում հայերի ոչնչացման մասին»**: (Akten zur deutschen auswartigen Politik 1919-1945, Serie D, VII, Nr. 193. S. 171, Anm. 1): Թեսսա Հոֆման (Գերմանիա), Հայկական հարց հանրագիտարան, Երևան 1996, էջ 103:

3. «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրտ., 1989:

4. ԱՄՆ բանակի պաշտոնաթող սպա Ռալֆ Պիտերսի նախասիրած արտահայտությունն է, իր հոդվածում գրել է այսպես. «Իսկ մի սարսափելի չարագործություն, ինչպիսին է հայերի հանդեպ հոգեվարքի մեջ գտնվող Օսմանյան կայսրության ցեղասպանությունը, երբեք չի կարող փոխհատուցվել տարածքային **նվիրատվությամբ**»: Խոսքը, անշուշտ, Հայոց հայրենիքը հայերին չ**նվիրաբերելու** մասին է, որպեսզի հիմքեր ապահովի այդ հայրենիքը ուրիշներին **նվիրաբերելու** և կամ գոնե որպես կաշառք առաջարկելու:

5. «ՀՈԴՎԱԾ 1. <u>Պայմանավորվող կողմերը</u> հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից, կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը <u>նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար</u>: ՀՈԴՎԱԾ 2. Սույն Կոնվենցիայում ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ. (ա) այդ խմբի անդամների սպանությունը, (բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը, (գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը, (դ) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը, (ե) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին»:

6. Տե՛ս, Ռալֆ Պիտերս, «Միջին արևելքի նոր քարտեզը ըստ արյունակցական կապերի և հավատի նմանությունների», «Armed Forces Journal» կայքէջ, 20.08.2006: Տե՛ս, «Ազգ» օրաթերթ, 25.08.2006:

7. 2007-2008 թթ.՝ «Ուխտ Արարատի» պարբերականի խմբագրականներում և հայտարարություններում, բազմիցս անդրադարձել ենք այդ խնդրին:

Միջին Արևելքի 2006-ին վերագծված քարտեզը՝ ըստ Ռալֆ Պիտերսի

8. 2009-ի ապրիլին 7-ին Թուրքիայի Ազգային ժողովում ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբաման հատուկ ընդգծեց, որ Թուրքիան այսուհետ պետք է պայքարի ոչ միայն Քրդական Բանվորական Կուսակցության, այլև Ալ Քաիդայի դեմ, ինչը նշանակում էր, որ թուրքական զինված ուժերը ՆԱՏՕ-ի կազմում պետք է մասնակցեն Աֆղանստանում ընթացող խաղաղապահ գործողություններին: Ըստ ԱՄՆ Պետքարտուղարության ծրագրավորման՝ Հայաստան - Թուրքիա Արձանագրությունները նպաստելու են հենց այդ ծրագրի իրականացմանը: Եվ ահա ճշմարտության ժամը հնչել է. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հերթական՝ 21-րդ տարելիցի օրը՝ 2009-ի դեկտեմբերի 7-ին, Վաշինգտոնի Սպիտակ տանը, հանդիպում են Բարաք Օբաման ու Ռեջեփ Թայիբ Էրդողանը, հնարավոր է՝ այդ ընդարձակ ծրագրի վերջին մանրամասները պայմանավորվելու համար:

9. Տե՛ս, «Հայաստանն ընդգրկվել է

«ստրկացված ժողովուրդների» ամերիկյան ցուցակում» նյութը, որտեղ, մասնավորապես, ասված է. «Որպես «ազատագրման» օբյեկտներ «86-90 օրենքի» տեքստում թվարկված են **Լեհաստանը, Հունգարիան, Չեխոսլովակիան, Ռումինիան, Բուլղարիան, Լիտվան, Լատվիան, Էստոնիան** (այս երկրներն արդեն իսկ ընգրկված են ՆԱՏՕ-ի ընդլայնման առաջին և երկրորդ ալիքներում), **«Հյուսիսային Վիետնամը, Հյուսիսային Կորեան, Ալբանիան և մյուսները», Վրաստանը, Ադրբեջանը, Հայաստանը, Ուկրաինան, Բելառուսը** (որն անվանված է «Բելայա Ռուտենիա»), **«Թուրքեստանը** (այսինքն «Արեւմտյան Թուրքեստանը», որ ներառում է ներկայիս Ղազախստանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը եւ «Արևելյան Թուրքեստանը»՝ Չինաստանի Սինցզյան-Ույգուրական ինքնավար մարզը), **Տիբեթը**, վերջապես, **«Իդել-Ուրալն» ու «Կազակիան»**: Վերջին անվանումով նշված է Հյուսիսային Կովկասն ու Կովկասի նախալեռները, իսկ Իդել-Ուրալը (Իդելը Վոլգայի թաթարական անվանումն է) ՌԴ-ի Վոլգաուրալյան տարածաշրջանն է»: /PanARMENIAN.Net/ 18.07.2008,

10. Խոսքը Ռալֆ Պիտերսի «Միջին Արևելքի նոր քարտեզը...» հոդվածին կից քարտեզի մասին է:

11. Միջազգային պայմանագրերի մասին (22. 02. 2007թ.) ՀՀ Օրենքում Միջազգային պայմանագրերի սուբյեկտների և այդ պայմանագրով կարգավորվող հարաբերությունների Գլուխ 2-ի հոդված 7-ի 2-ում գրված է. «1. Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների ռազմական բազաներ ստեղծելու, 2. օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների զինված ուժեր Հայաստանի Հանրապետության տարածքում ընդունելու, տեղակայելու, 3. միջազգային վեճեր լուծելու, 4. **զինաթափման**, 5. ռազմական պարտավորություններ ստանձնելու»:

12. Մանրամասն տե՛ս, «Ուխտ Արարատի», թիվ 2 / 13, 2007, էջ 15-22:

13. Բեռլինի պատի փլուզման 20-ամյակի հանդիսություններին ներկա ԽՍՀՄ **պերեստրոյկայի** մեծ վարպետ Միխայիլ Գորբաչովը հայտարարեց, որ ամերիկացի ժողովուրդը ընտրելով բարեփոխումների ճանապարհը և քվեարկելով Բարաք Օբամայի թեկնածության օգտին, փաստորեն, սկիզբ է դրել ԱՄՆ-ի **պերեստրոյկայի** գործընթացներին: Իսկ թե դա ինչպե՞ս է ընթանում և ինչո՞վ ավարտվում, հայտնի է բոլորիս:

14. Հեռավոր արևելքի՝ Սինգապուրի, Ինդոնեզիայի, Մալլակայի, Պենանգի, Հոնկոնգի և Մակաոյի փոքրիկ հայկական գաղթավայրերի ճակատագիրը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին որոշեցին ճապոնական միլիտարիստները. **«Ինդոնեզիայի հայ բնակչությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ չկարողացավ հեռանալ: Կռահելով սպասվող աղետը, հայերը նախօրոք թաքցրին հայոց եկեղեցու թանկարժեք գույքը, սպասքները, դիվանը, գրադարանը և այլն: Զավթողական իշխանությունների հատուկ հրամանով այստեղ էլ հայերը դիտվեցին որպես ճապոնական կայսրության թշնամիներ և 1943 թ. դեկտեմբերի 20-ին բոլոր հայ ընտանիքները՝ մեծով ու փոքրով, նետվեցին արգելափակոցների մեջ: Արգելափակոցներում շատերը զոհ դառան սովին ու համաճարակին: Արգելափակոցի սարսափներից ազատված հայերը վերադարձին իրենց բնակարանները մինչև վերջին ասեղը կողոպտված գտան: Գրեթե իսպառ վերջացավ Բանդունգի համայնքը: Արգելափակոցներից ազատվեց միայն մեկ ընտանիք: Դադարեց հայկական կյանքը նաև Մակասարում: Ծանր հարված ստացավ Ինդոնեզիայի երբեմնի ամենից ծաղկուն գաղութը՝ Բաթավիան (Ջակարտա): Բանը հասավ այնտեղ, որ ազգային իշխանության կենտրոնը տեղափոխվեց Սուրաբա: Հայկական կյանքը խամրեց նաև երկրի մյուս մեծ ու փոքր քաղաքներում»**: Ա. Գ. Աբրահամյան, «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության», Բ հատոր, «Հայաստան» հրտ., Երևան, 1967, էջ 311-312:

Քրդերի բնակության վայրերը «Եվրոնյուզի» ներկայացմամբ

Турецким курдам предоставят больше прав

Улучшить положение курдского населения в Турции. Такова цель проекта реформ, которые представил в парламенте страны министр внутрениих дел Безир Аталайа. Среди конкретных мер: расширение сферы свободного использования курдского языка, в том числе, возможность возвращения наименований населенным пунктам, разрешение на создание политических и общественных организаций и расширение участия в политической жизни страны на всех уровнях власти.

Депутат турецкого парламента, курд по присхождению, призвал своих коллег одобрить проект: “Самые серьезные проблемы курдов напрямую связаны с ошибками государственной политики. Давайте вместе найдем решение этой проблемы, чтобы последующие поколения гордились нами и следовали нашему примеру.”

Большинство курдов проживает на юго востоке Турции. В течение четверти века Анкара ведет борьбу против курдских сепаратистов, которые требуют создания независимого государства Курдистана.

Волна насилия пошла на спад, после того как армия стала проводить воздушные рейды по экстремистским базам на территории северного Ирака.

Курдской проблемой правительство Турции решило заняться вплотную в том числе для того, чтобы выполнить критерии для вступления страны в Евросоюз.

13.11.2009; 20:18 / http://ru.euronews.net/2009/11/13/turkey-proposes-reforms-for-kurds/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԱԽԱՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը համաձայնեցին սկսել ներքին քաղաքական խորհրդակցություններ՝ շվեյցարական միջնորդությամբ իրականացվող բանակցությունների ընթացքում նախաստորագրված հետևյալ երկու արձանագրությունների շուրջ. «Արձանագրություն երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» և «Արձանագրություն երկկողմ հարաբերությունների զարգացման մասին»:

Հիշյալ երկու Արձանագրությունները սահմանում են խելամիտ ժամկետում երկկողմ հարաբերությունների կարգավորման շրջանակ: Ներքին քաղաքական խորհրդակցությունները կավարտվեն վեց շաբաթվա ընթացքում, որից հետո երկու Արձանագրությունները կստորագրվեն և կներկայացվեն համապատասխան խորհրդարաններին՝ վավերացման համար: Երկու կողմերը կգործադրեն իրենց առավելագույն ջանքերը վավերացման արագ առաջընթացի համար՝ համաձայն իրենց սահմանադրական և օրենսդրական գործընթացների:

Դավութօղլու-Նալբանդյան պակտը. 10 հոկտեմբեր, 2009թ., Ցյուրիխ

Երկկողմ հարաբերությունների կարգավորումը կնպաստի տարածաշրջանային խաղաղությանն ու կայունությանը:

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը հանձն են առնում շարունակել համատեղ ջանքերը Շվեյցարիայի օժանդակությամբ:

Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն, մամուլի և տեղեկատվության վարչություն
01-09-2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը.

Ձգտելով հաստատել բարիդրացիական հարաբերություններ և զարգացնել երկկողմ համագործակցությունը քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում՝ ի շահ իրենց ժողովուրդների՝ համաձայն հարաբերությունների զարգացման մասին նույն օրը ստորագրված Արձանագրության,

Վկայակոչելով ՄԱԿ-ի Կանոնադրությամբ, Հելսինկյան եզրափակիչ ակտով, Նոր Եվրոպայի համար Փարիզյան խարտիայով իրենց ստանձնած պարտավորությունները,

Վերահաստատելով հավասարության, ինքնիշխանության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքները հարգելու իրենց երկկողմ և բազմակողմ պարտավորությունները,

Հաշվի առնելով երկու երկրների միջև՝ ամբողջ տարածաշրջանում խաղաղության, անվտանգության և կայունության ամրապնդմանը նպաստող, հավատի և վստահության միջավայր ստեղծելու, ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից զերծ մնալու, վեճերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման մթնոլորտ ստեղծելու կարևորությունը,

Վերահաստատելով երկու երկրների միջև գոյություն ունեցող ընդհանուր սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով,

Կարևորելով իրենց որոշումը՝ բացելու ընդհանուր սահմանը,

Հաստատելով իրենց հանձնառությունը՝ ձեռնպահ մնալ բարիդրացիական հարաբերությունների ոգուն չհամապատասխանող քաղաքականություն վարելուց,

Դատապարտելով ահաբեկչության, բռնության և ծայրահեղականության բոլոր ձևերը՝ անկախ դրանց պատճառներից և խոստանալով ձեռնպահ մնալ նման գործողություններ խրախուսելուց ու հանդուրժելուց և համագործակցել դրանց դեմ պայքարում,

Հաստատելով ընդհանուր շահերի, բարի կամքի, փոխըմբռնման, խաղաղության և ներդաշնակության խթանման վրա հիմնված հարաբերությունների նոր ձևեր և ուղիներ մշակելու իրենց պատրաստակամությունը,

Համաձայնեցին հիմնել դիվանագիտական հարաբերություններ սույն Արձանագրության ստորագրման օրվանից՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի 1961թ. կոնվենցիայի համապատասխան, և փոխանակել դիվանագիտական ներկայացուցչություններ:

Սույն արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների զարգացման մասին Արձանագրությունը ուժի մեջ են մտնում միևնույն օրը՝ վավերացման գործիքների փոխանակմանը հաջորդող ամսվա առաջին օրը:

Կատարված է ...., հայերեն, թուրքերեն և անգլերեն հավասարազոր կրկնօրինակներով: Մեկնաբանության տարաձայնության դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը.

Ղեկավարվելով նույն օրը ստորագրված Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրությամբ,

Նկատի ունենալով վստահության և երկկողմ շահերի հարգման վրա հիմնված երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները,

Որոշելով զարգացնել և խորացնել իրենց երկկողմ հարաբերությունները քաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտի, մշակույթի, գիտական, տեխնիկական և այլ ոլորտներում՝ հիմնվելով երկու երկրների ընդհանուր շահերի վրա,

Աջակցելով երկու երկրների միջև համագործակցության զարգացմանը միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններում, մասնավորապես ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, Եվրոպայի Խորհրդում, Եվրատլանտյան գործընկերության

խորհրդում և ՍԾՏՀ-ում,

Հաշվի առնելով երկու պետությունների ընդհանուր նպատակը՝ համագործակցելու տարածաշրջանային կայունության և անվտանգության ամրապնդման ուղղությամբ՝ հանուն տարածաշրջանի ժողովրդավարական և տևական զարգացման ապահովման,

Վերահաստատելով իրենց հանձնառությունը տարածաշրջանային և միջազգային վեճերի և հակամարտությունների խաղաղ կարգավորմանը՝ միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների հիման վրա,

Վերահաստատելով իրենց պատրաստակամությունը ակտիվորեն սատարելու միջազգային հանրության գործողություններին՝ ընդդեմ տարածաշրջանում և աշխարհում անվտանգության և կայունության դեմ առկա սպառնալիքների, ինչպիսիք են ահաբեկչությունը, անդրազգային կազմակերպված հանցագործությունը, թմրանյութերի և զենքի ապօրինի առք ու վաճառքը,

1. Համաձայնեցին բացել ընդհանուր սահմանը սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում,

2. Համաձայնեցին նաև - երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև պարբերաբար անցկացնել քաղաքական խորհրդատվություններ,

- **իրականացնել** երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկների ձևակերպման համար,

- **առավելագույնս օգտագործել** երկու երկրների միջև գոյություն ունեցող ճանապարհային, հաղորդակցության, էներգետիկ ենթակառուցվածքներն ու ցանցերը և միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ,

- **զարգացնել** երկկողմ իրավապայմանագրային դաշտը՝ երկու երկրների միջև համագործակցությունը խթանելու նպատակով,

- **համագործակցել** գիտության և կրթության ոլորտներում՝ համապատասխան հաստատությունների միջև հարաբերությունների խրախուսման և մասնագետների ու ուսանողների փոխանակումը խթանելու միջոցով, և աշխատանք տանել երկու կողմերի մշակութային ժառանգության պահպանման և համատեղ մշակութային ծրագրեր իրագործելու նպատակով,

- **համագործակցություն հաստատել** հյուպատոսական բնագավառում՝ հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի 1963թ. կոնվենցիայի համաձայն՝ երկու երկրների քաղաքացիներին անհրաժեշտ աջակցություն ապահովելու նպատակով,

- **ձեռնարկել** կոնկրետ միջոցներ երկու երկրների միջև առևտուրը, զբոսաշրջությունը և տնտեսական համագործակցությունը զարգացնելու նպատակով,

- **երկխոսություն ծավալել** և ամրապնդել համագործակցությունը բնապահպանական հարցերում,

3. Համաձայնեցին ստեղծել միջկառավարական երկկողմ հանձնաժողով, որը կունենա առանձին ենթահանձնաժողովներ՝ սույն Արձանագրության վերը նշված երկրորդ գործառութային պարբերության հանձնառությունների անմիջական իրագործման նպատակով: Միջկառավարական հանձնաժողովի և նրա ենթահանձնաժողովների աշխատաձևերի մշակման նպատակով, սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 2 ամիս անց, կստեղծվի աշխատանքային խումբ՝ երկու արտգործնախարարների ղեկավարությամբ: Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում այդ աշխատաձևերը կհաստատվեն նախարարական մակարդակով: Միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը կկայանա նշված աշխատաձևերի ընդունումից անմիջապես հետո:

Դավութօղլու-Նալբանդյան պակտը. 10 հոկտեմբեր, 2009թ., Ցյուրիխ

Ենթահանձնաժողովները կսկսեն իրենց աշխատանքը դրանից ոչ ուշ քան մեկ ամիս անց և կգործեն շարունակաբար մինչև իրենց մանդատի ավարտը:

Ըստ անհրաժեշտության, միջազգային փորձագետները կմասնակցեն ենթահանձնաժողովների աշխատանքներին:

Սույն Արձանագրության իրագործման համար երկուստեք համաձայնեցված ժամանակացույցը և տարրերը ներկայացված են հավելվածում, որը հանդիսանում է սույն Արձանագրության անբաժան մաս:

Սույն Արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրությունը ուժի մեջ են մտնում միևնույն օրը՝ վավերացման գործիքների փոխանակմանը հաջորդող ամսվա առաջին օրը:

Ստորագրված է ....., հայերեն, թուրքերեն և անգլերեն հավասարազոր կրկնօրինակներով: Մեկնաբանության տարածայնության դեպքում գերակայությունը տրվում է անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ ...
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ ...

Թուրքիայի և Հայաստանի միջև 2009-ի ապրիլի 23-ին ստորագրված «ճանապարհային քարտեզը»

Հրապարակված է Թուրքիայի և Հայաստանի միջև ապրիլի 23-ին ստորագրված «ճանապարհային քարտեզի» ամբողջական տեքստը: Ինչպես հաղորդում է trend.az գործակալությունը հղում կատարելով Sabah թերթին՝ կողմերի միջև ստորագրված «ճանապարհային քարտեզը» պարունակում է հինգ կետ:

1. Հայաստանը պարտավորվում է ճանաչել Թուրքիայի և այլևս նախկին ԽՍՀՄ-ի միջև 1921 թ. ստորագրված Կարսի պայմանագիրը:

2. Պետք է ստեղծվի պատմաբանների հանձնաժողով, որը պետք է հետաքննի հայերի կողմից պնդվող Գենոցիդի փաստը, հանձնաժողովին կարող են միանալ նաև երրորդ երկրներ:

3. Երկու երկրների միջև սահմանները բացվելու են, և պետք է ստորագրվի համապատասխան համաձայնագիր առևտուր սկսելու մասին:

4. Այն բանից հետո, երբ Հայաստանի և Թուրքիայի դեսպանները Վրաստանում կհաստատագրվեն Անկարայում և Երևանում, կսկսվի դիվանագիտական կապերի հաստատում:

5. «Ճանապարհային քարտեզի» այն հարցերը, որոնք օրենսդիր մարմնի կողմից պետք է հաստատվեն, պետք է անցնեն խորհրդարանական քննարկումներով:

Sabah թերթի հաղորդման համաձայն՝ Ղարաբաղյան հարցը փաստաթղթում արտացոլված չէ, սակայն մոտեցման գործընթացը պետք է ընթանա հակամարտության կարգավորմանը զուգընթաց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը համաձայնեցին սկսել ներքին քաղաքական խորհրդակցություններ՝ շվեյցարական միջնորդությամբ իրականացվող բանակցությունների ընթացքում նախաստորագրված հետևյալ երկու արձանագրությունների շուրջ. «Արձանագրություն երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» և «Արձանագրություն երկկողմ հարաբերությունների զարգացման մասին»:

Հիշյալ երկու Արձանագրությունները սահմանում են խելամիտ ժամկետում երկկողմ հարաբերությունների կարգավորման շրջանակ: Ներքին քաղաքական խորհրդակցությունները կավարտվեն վեց շաբաթվա ընթացքում, որից հետո երկու Արձանագրությունները կստորագրվեն և կներկայացվեն համապատասխան խորհրդարաններին՝ վավերացման համար: Երկու կողմերը կգործադրեն իրենց առավելագույն ջանքերը վավերացման արագ առաջընթացի համար՝ համաձայն իրենց սահմանադրական և օրենսդրական գործընթացների:

Դավութօղլու-Նալբանդյան պակտը. 10 հոկտեմբեր, 2009թ., Ցյուրիխ

Երկկողմ հարաբերությունների կարգավորումը կնպաստի տարածաշրջանային խաղաղությանն ու կայունությանը:

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը հանձն են առնում շարունակել համատեղ ջանքերը Շվեյցարիայի օժանդակությամբ:

Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն, մամուլի և տեղեկատվության վարչություն
01-09-2009

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը,

ձգտելով հաստատել բարիդրացիական հարաբերություններ և զարգացնել երկկողմ համագործակցությունը քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում, ի շահ իրենց ժողովուրդների՝ համաձայն հարաբերությունների զարգացման մասին նույն օրը ստորագրված Արձանագրության,

վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ, Հելսինկյան եզրափակիչ ակտով, Նոր Եվրոպայի համար փարիզյան խարտիայով իրենց ստանձնած պարտավորությունները,

վերահաստատելով իրենց երկկողմ և միջազգային հարաբերություններում հավասարության, ինքնիշխանության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքները հարգելու և հարգումը երաշխավորելու իրենց հանձնառությունը,

հաշվի առնելով ամբողջ տարածաշրջանում խաղաղության, անվտանգության և կայունության ամրապնդմանը նպաստող երկու երկրների միջև հավատի և վստահության մթնոլորտ ստեղծելու և պահպանելու կարևորությունը, ինչպես նաև վճռական լինելով զերծ մնալ ուժի կիրառումից կամ այն կիրառելու սպառնալիքից, խրախուսել վեճերի խաղաղ կարգավորումը, պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները,

հաստատելով երկու երկրների միջև գոյություն ունեցող սահմանի փոխադարձ ճանաչումը, ինչպես սահմանված է միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով,

կարևորելով ընդհանուր սահմանը բացելու իրենց որոշումը,

վերահաստատելով իրենց հանձնառությունը՝ ձեռնպահ մնալ բարիդրացիական հարաբերությունների ոգուն չհամապատասխանող քաղաքականություն վարելուց,

դատապարտելով ահաբեկչության, բռնության և ծայրահեղականության բոլոր ձևերը՝ անկախ դրանց պատճառներից, խոստանալով ձեռնպահ մնալ նման գործողությունները խրախուսելուց ու հանդուրժելուց և համագործակցել դրանց դեմ պայքարում,

հաստատելով ընդհանուր շահերի, բարի կամքի վրա հիմնված հարաբերությունների նոր ձևեր ու ուղիներ մշակելու և խաղաղության, փոխըմբռնման ու ներդաշնակության ճգտելու իրենց պատրաստակամությունը,

համաձայնեցին հաստատել դիվանագիտական հարաբերություններ՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի 1961 թվականի կոնվենցիային համապատասխան, սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվանից և փոխանակել դիվանագիտական ներկայացուցչություններ:

Սույն Արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին Արձանագրությունն ուժի մեջ են մտնում նույն օրը՝ վավերագրերի փոխանակմանը հաջորդող առաջին ամսվա առաջին օրը:

Ստորագրված է Ցյուրիխ քաղաքում 2009 թվականի հոկտեմբերի 10-ին, հայերեն, թուրքերեն և անգլերեն հավասարազոր երկու բնօրինակներով: Մեկնաբանության տարբերության դեպքում անգլերեն տեքստը կգերակայի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ ԷԴՎԱՐԴ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ ԱՀՄԵՏ ԴԱՎՈՒԹՕՂԼՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը,

ղեկավարվելով նույն օրը ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրությամբ,

նկատի ունենալով վստահության և միմյանց շահերի հարգման վրա հիմնված երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները,

որոշելով զարգացնել և ամրապնդել իրենց երկկողմ հարաբերությունները քաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտի, գիտական, տեխնիկական, մշակույթի և այլ ոլորտներում, հիմնվելով, երկու երկրների ընդհանուր շահերի վրա,

աջակցելով երկու երկրների միջև համագործակցության խթանմանը միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններում, հատկապես ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Եվրոպայի

խորհրդի, Եվրաատլանտյան գործընկերության խորհրդի և ՍԾՏՀ-ի շրջանակներում,

հաշվի առնելով երկու պետությունների ընդհանուր նպատակը՝ համագործակցել տարածաշրջանի կայունության և անվտանգության ամրապնդման ուղղությամբ, տարածաշրջանի ժողովրդավարական և տնական զարգացման ապահովման համար,

վերահաստատելով միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների հիման վրա տարածաշրջանային և միջազգային վեճերն ու հակամարտությունները խաղաղ կարգավորելու իրենց հանձնառությունը,

վերահաստատելով իրենց պատրաստակամությունը, ակտիվորեն սատարել միջազգային հանրության գործողություններին, դիմակայելու համար տարածաշրջանում և աշխարհում անվտանգության և կայունության դեմ առկա ընդհանուր սպառնալիքներին, ինչպիսիք են ահաբեկչությունը, անդրազգային կազմակերպված հանցավորությունը, թմրանյութերի և զենքի ապօրինի շրջանառությունը,

1. համաձայնում են բացել ընդհանուր սահմանը սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում.

2. համաձայնում են՝

երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև կանոնավոր կերպով անցկացնել քաղաքական խորհրդակցություններ, իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների անկողմնակալ գիտական ուսումնասիրություն՝ առկա խնդիրների սահմանման ու առաջարկների ձևակերպման համար,

առավելագույնս օգտագործել երկու երկրների միջև գոյություն ունեցող՝ տրանսպորտային, հաղորդակցության և էներգետիկ ենթակառուցվածքներն ու ցանցերը և միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ,

ստեղծել երկկողմ իրավական դաշտ՝ երկու երկրների միջև համագործակցությունը խթանելու նպատակով,

համագործակցել գիտության և կրթության ոլորտներում համապատասխան հաստատությունների միջև հարաբերությունները խրախուսելու, ինչպես նաև մասնագետների և ուսանողների փոխանակումը խթանելու միջոցով և աշխատանք տանել երկու կողմերի մշակութային ժառանգության պահպանման և համատեղ մշակութային ծրագրեր սկսելու նպատակով,

համագործակցություն հաստատել հյուպատոսական բնագավառում՝ Հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի 1963 թվականի կոնվենցիայի համաձայն, երկու երկրների քաղաքացիներին անհրաժեշտ աջակցություն և պաշտպանության ցուցաբերելու նպատակով,

ձեռնարկել կոնկրետ միջոցներ երկու երկրների միջև առևտուրը, զբոսաշրջությունը և տնտեսական համագործակցությունը զարգացնելու նպատակով,

սկսել երկխոսություն և ամրապնդել համագործակցությունը քնապահպանական հարցերով.

3. համաձայնում են ստեղծել միջկառավարական երկկողմ հանձնաժողով, որը բաղկացած կլինի առանձին ենթահանձնաժողովներից, սույն Արձանագրության՝ վերը նշված երկրորդ գործառութային կետում նշված հանձնառությունների արագ իրականացման նպատակով: Միջկառավարական հանձնաժողովի և նրա ենթահանձնաժողովների աշխատաձևերի մշակման նպատակով սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 2 ամիս անց կստեղծվի աշխատանքային խումբ երկու արտգործնախարարների ղեկավարությամբ: Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, այդ աշխատաձևերը կհաստատվեն նախարարների մակարդակով: Միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը կկայանա նշված աշխատաձևերի ընդունումից անմիջապես հետո: Ենթահանձնաժողովները կսկսեն իրենց աշխատանքը դրանից ոչ ուշ, քան մեկ ամիս անց, և կգործեն շարունակաբար՝ մինչև իրենց մանդատի ավարտը:

Դավութօղլու-Նալբանդյան պակտը. 10 հոկտեմբեր, 2009թ., Ցյուրիխ

Ըստ անհրաժեշտության, միջազգային փորձագետներ կմասնակցեն ենթահանձնաժողովների աշխատանքներին:

Սույն Արձանագրության իրագործման համար երկու կողմերի համաձայնեցրած ժամանակացույցը և տարրերը ներկայացված են հավելվածում, որը սույն Արձանագրության անբաժանելի մասն է:

Սույն Արձանագրաթյունը և Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրությունը ուժի մեջ են մտնում նույն օրը՝ վավերագրերի փոխանակմանը հաջորդող առաջին ամսվա առաջին օրը:

Ստորագրված է Ցյուրիխ քաղաքում 2009 թվականի հոկտեմբերի 10-ին, հայերեն, թուրքերեն և անգլերեն՝ հավասարազոր երկու բնօրինակներով: Մեկնաբանության տարբերության դեպքում անգլերեն տեքստը կգերակայի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ ԷԴՎԱՐԴ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ ԱՀՄԵՏ ԴԱՎՈՒԹՕՂԼՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Կովկասը շարունակում է սուր մրցակցության դաշտ մնալ ռուսների ու ամերիկացիների համար

Ըստ ամենայնի, ՌԴ-ի ու ԱՄՆ նախագահներ Մեդվեդևի ու Օբամայի այս տարվա ընթացքում արդեն երկրորդ հանդիպումն, Հարավային Կովկասի ճակատագրին վերաբերող մասով, ևս ավարտվեց առանց արդյունքի, գտնում է հայ քաղաքագետ **Սերգեյ Շաքարյանցը**: Ըստ նրա, առնվազն մինչ ռուսների ու ամերիկացիների հաջորդ շփումը Կովկասը կմնա սուր մրցակցության դաշտ և չի բացառվում, որ ԱՄՆ-ի «լիազոր ներկայացուցիչը» կրկին Թուրքիան կլինի: PanARMENIAN.Net-ի թղթակցի հետ զրույցում Շաքարյանցը հայտարարել է, որ Մեդվեդև-Օբամա հանդիպման շեմին Անկարան լուրջ զիջումներ արեց Ռուսաստանին, «Անվտանգության կովկասյան պլատֆորմի» հենքի վրա բանակցություններ սկսելով Իրանի հետ, այսինքն ձեռնարկեց մի քայլ, որը ակնհայտորեն դուր չէր գալու ամերիկացիներին: Ինչպես գտնում է Շաքարյանցը, այժմ պետք է ակնկալել, որ Վաշինգտոնը կփորձի վերադարձնել Անկարային «Կովկասյան պլատֆորմի» վերաբերյալ նախկին պատկերացումներին, որտեղ կայուն ու անվտանգ Կովկասում Իրանի համար տեղ նախատեսված չէր:

Քաղաքագետը գտնում է, որ եթե Թուրքիան ԱՄՆ-ի ճնշմամբ փորձի վերադառնալ «կովկասյան հնգյակի» անցյալ տարվա ձևաչափին, պատասխանը կլինի ՌԴ-ի դիրքորոշման կարծրացումը, որն արդեն կպահանջի «Կովկասյան պլատֆորմում» ոչ միայն Իրանն ընդգրկել: Ս.Շաքարյանցը գտնում է, որ հաշվի առնելով իրողությունների փոփոխությունը տարածաշրջանի քաղաքական ասպարեզում, Մոսկվան կարող է նախաձեռնել Հարավային Կովկասի երկու չճանաչված պետությունների՝ Աբխազիայի ու Հարավային Օսիայի ընդգրկումը պլատֆորմում: **Իսկ եթե ազդեցության լծակները բավարար չլինեն, Մոսկվան ավելի հեռուն կգնա, առաջարկելով թուրքական նախաձեռնության շրջանակներում ընդգրկել նաև դե-ֆակտո անկախ ԼՂՀ-ն և, չի բացառվում նաև երկու ինքնավարությունները՝ Աջարիան ու Նախիջևանը: /PanARMENIAN.Net/ 07.07.2009**

Ընթերցողին առաջարկում ենք համեմատել Հայ-թուրքական **արձանագրությունները ողջունող** երկրների ղեկավարների խոսքերն ու **Ադամ Շիֆի** սթափեցնող հայտարարությունը: Մեր կասկածները հաստատվում են. այս գործընթացը փորձ է շրջանառությունից հանելու ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության և դրա պատժի մասին» Կոնվենցիան՝ հանուն եվրոպական ինտեգրման ծրագրերի: 20-րդ դարասկզբին, ճիշտ այսպես, հանուն համաշխարհային հեղափոխության՝ հայությանը ստիպում էին հրաժարվել իր բոլոր իրավունքներից...

ԱԴԱՄ ՇԻՖ. «ՃՇՄԱՐԻՏ ՀԱՇՏԵՑՈՒՄԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ, ԵՐԲ ԹՈՒՐՔԻԱՆ ՃԱՆԱՉԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի անդամ Ադամ Շիֆը ողջունել է Հայաստանի և Թուրքիայի միջև ձեռք բերված համաձայնությունը՝ միաժամանակ լուրջ մտահոգություններ հայտնելով նախաստորագրված արձանագրությունների որոշ դրույթների առնչությամբ: Կոնգրեսականը, մասնավորապես, հիասթափություն է հայտնում, որ «արձանագրությունները կոչ են անում 1915-23 թվականների իրադարձությունները ուսումնասիրելու նպատակով ստեղծել պատմաբանների հանձնաժողով»: «Դա լիովին վարկաբեկված գաղափար է. գիտնականները չեն բանավիճում, որ հայ ժողովուրդը ցեղասպանության է ենթարկվել Օսմանյան կայսրության մայրամուտի օրերին, և պատմաբանների հանձնաժողովը ճշմարտությունը քողարկելու հերթական փորձն է»,- ըստ «Ասպարեզի»՝ ասված է կոնգրեսականի գրասենյակի տարածած հայտարարության մեջ: «Չի կարելի թույլ տալ, որ Թուրքիան սրբագրի իր պատմության այդ ողբերգական էջը՝ Հայաստանի հետ նորմալ հարաբերությունների դիմաց»,- նշում է կոնգրեսականը՝ հավելելով. «Ճշմարիտ հաշտեցումը հայ և թուրք ժողովուրդների միջև տեղի կունենա, երբ Թուրքիան ճանաչի 1915-23 թվականներին հայերի դեմ Օսմանյան կայսրության գործադրած ցեղասպանությունը»: /www.Panorama.am/ 11.10.2009

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը հույս ունի, որ Արձանագրությունները արագ կվավերացվեն. ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը ողջունել է հայ-թուրքական Արձանագրությունների ստորագրումը՝ նշելով, որ այս քայլը կաջակցի Հարավային Կովկասում խաղաղության, անվտանգության և կայունության հաստատմանը, հաղորդում է ՄԱԿ-ի պաշտոնական կայքը: «Սա պատմական որոշում է, որն ուղղված է բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը և երկու երկների երկկողմանի հարաբերությունների զարգացմանը», - ասված է Պան Գի Մունի հայտարարության մեջ: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը հույս է հայտնել է, որ երկու Արձանագրություններն արագ կվավերացվեն Հայաստանի և Թուրքիայի խորհրդարանների կողմից՝ «երկկողմանի հարաբերությունների լիարժեք բարելավման փաստը հաստատելու համար»: /**www.Tert.am/ 11.10.2009**

ՆԱՏՕ-ն ողջունել է Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների նորմալացումը. ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենը ողջունել է Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների նորմալացման ուղիների շուրջ ձեռք բերված համաձայնությունները: Ըստ «Ինտերֆաքս»-ի՝ նա ասել է, որ այդ համաձայնությունների կատարումը «ավանդ կներդնի Եվրոպայի այդ մասում կայունության և անվտանգության գործում»: Թուրքիայի նախագահ Ա. Գյուլն իր հերթին հայտարարել է, որ «մոտիկից հետևում է Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների նորմալացման վերաբերյալ հռչակագրի հրապարակման հետ սկսված գործընթացին»: Թուրքական «Ջիհան» գործակալությունը հայտնել է, որ Անկարայի «Բիլքենդ» համալսարան կատարած այցին թուրք-հայկական հարաբերությունների նորմալացմանն ուղղված «Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու» և «Երկու երկրների միջև հարաբերությունները զարգացնելու» մասին արձանագրությունների նախաստորագրության վերաբերյալ լրագրողների «հարցերի տարափին» Գյուլը բավարարվել է՝ ասելով միայն, որ «մոտիկից հետևում է Հայաստանի հետ Թուրքիայի միջև հարաբերությունները նորմալացնելու գործընթացին»: **/www.azg.am/ 14.10.2009**

ԵԽԽՎ-ն ողջունել է հայ-թուրքական արձանագրությունների նախաստորագրումը. Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների հաստատման համար Արձանագրությունների շուրջ նախապայմանավորվածությունները ողջունել է նաև ԵԽԽՎ-ի նախագահ Լյուիս Մարիա դե Պյուչը: «Սա մի քայլ է, որին ԵԽԽՎ-ն երկար է սպասել և աշխատել դրա շուրջ»,- նշել է Պյուչն ու հավելել. «ԵԽԽՎ-ն, որտեղ Հայաստանի և Թուրքիայի խորհրդարանականները աշխատում են միասին որպես գործընկերներ, պատրաստ է օգնել ցանկացած հարցով, որը կնպաստի երկու երկրների միջև առաջընթացին: Ես անհամբեր սպասում եմ երկու Արձանագրությունների վավերացմանը երկու երկրների խորհրդարանների կողմից, որը կազդարարի նոր, ավելի պայծառ էջ Եվրոպայի Խորհրդի երկու անդամ երկրների հարաբերությունների մեջ»:

ԵԱՀԿ գործող նախագահը ողջունել է հայ–թուրքական բանակցություններում գրանցված առաջընթացը. ԵԱՀԿ գործող նախագահ, Հունաստանի արտգործնախարար Դորա Բակոյանիսն ողջունեց Թուրքիայի և Հայաստանի համատեղ հայտարարությունը՝ սկսելու երկկողմանի հարաբերությունների կարգավորմանն ուղղված բանակցություններ՝ նշելով, որ նման զարգացումը կնպաստի տարածաշրջանի կայունությանը: «Թուրքիայի և Հայաստանի միջև դիվանագիտական կապերի հաստատումը դրական քայլ կլինի ոչ միայն Հարավային Կովկասի տարածաշրջանում, այլև նրա սահմաններից դուրս, - ասաց Բակոյանիսը, - Ես ջերմորեն ողջունում եմ այս դրական քայլը՝ ուղղված ԵԱՀԿ երկու մասնակից պետությունների միջև կապերի կարգավորմանը»: Բակոյանիսը կոչ արեց երկու կողմերին օգտվել դրական պահից, որը ձեռք է բերվել Շվեյցարիայի նախաձեռնած բանակցությունների ընթացքում: Այս մասին հաղորդում են Եվրոպական անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակից: **/www.Tert.am/ 01.09.2009**

Խավիեր Սոլանան ողջունում է հայ - թուրքական համաձայնությունը. Եվրամիության ընդհանուր արտաքին և անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Խավիեր Սոլանան ողջունել է Հայաստանի և Թուրքիայի միջև նախօրեին ձեռք բերված համաձայնությունը: «Ես ողջունում եմ Հայաստանի և Թուրքիայի միջև ձեռք բերված համաձայնությունը՝ սկսելու ներքին քաղաքական խորհրդակցություններ այն արձանագրությունների վերաբերյալ, որոնք կազմում են դիվանագիտական հարաբերությունների հաստատման շրջանակը»,- ասված է նրա հայտարարությունում, որը տրամադրել են Հայաստանում Եվրահանձնաժողովի պատվիրակությունից: - «Սա էական քայլ է երկկողմ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ, որը մեծապես կնպաստի Եվրոպայի այդ կարևոր տարածաշրջանում խաղաղության, անվտանգության և կայունության հաստատմանը»: «Գովեստի է արժանի երկու կողմերի քաջությունն ու հեռատեսությունը՝ առաջնորդվելու այս պատմական գործընթա-

ցով»,- հայտարարել է Խավիեր Սոլանան՝ հույս հայտնելով, որ երկու արձանագրությունները կստորագրվեն, կվավերացվեն և կիրականանան առաջիկայում: **/www.Tert.am/ 02.09.2009**

Նիկոլա Սարկոզի. «Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների բնականոնացումը պատմական իրադարձություն կդառնա» - Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին ողջունել է Հայաստանի և Թուրքիայի իշխանությունների՝ «ներքին քաղաքական խորհրդատվություններ» սկսելու նախաձեռնությունը, որոնց նպատակը երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրության և երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրության ստորագրումն է: «Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների բնականոնացումը պատմական իրադարձություն կդառնա, որը տարածաշրջանում կայունության կապահովի»,- ասվում է Ֆրանսիայի նախագահի վարչակազմի տարածած հայտարարության մեջ:
/www.yerkir.am/ 01.09.2009

Ն. Սարկոզի

ԱՄՆ-ը ողջունում է Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլերը - Բարաք Օբամայի վարչակազմը ողջունում է դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Հայաստանի և Թուրքիայի որոշումը, որ մշակվել է Շվեյցարիայի միջնորդությամբ: Այս մասին ասվում է ԱՄՆ պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Իեն Քելիի գրավոր հայտարարության մեջ: Ըստ նրա՝ «Միացյալ Նահանգները ողջունում է Շվեյցարիայի մասնակցությամբ Թուրքիայի և Հայաստանի համատեղ հայտարարությունը, որում ուրվագծում են երկկողմ հարաբերությունների բնականոնացմանն ուղղված հետագա քայլերը»: «ԱՄՆ-ի վաղեմի և անփոփոխ դիրքորոշումը հանգում է նրան, որ (հայ-թուրքական կապերի) բնականոնացումը պետք է տեղի ունենա առանց նախապայմանների և խելամիտ ժամկետում»,- ասել է Քելին: **/www.yerkir.am/ 01.09.2009**

Բ. Օբամա

ՌԴ ԱԳՆ. «ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿԱՆՈՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ». Սեպտեմբերի 1-ին Ռուսաստանի ԱԳՆ տեղեկատվության և մամուլի դեպարտամենտը մեկնաբանություններ է արել երկկողմ հարաբերությունները բնականոնացնելու, Հայաստանի և Թուրքիայի պատրաստակամության մասին հաղորդումների կապակցությամբ: Ռուսաստանի ԱԳՆ-ում դրականորեն են ընդունել Հայաստանի և Թուրքիայի «Դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին արձանագրությունը» և «Երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունը» ստորագրելու նպատակով ներքին համաձայնությունների գործընթաց սկսելու պատրաստակամության լուրը: «Հայաստանը և Թուրքիան մեզ բարեկամ երկրներ են: Նրանց հարաբերությունների բնականոնացման ուղղությամբ առաջխաղացումներն ընդունում ենք իբրև օրինաչափ և վաղուց սպասված գործընթաց: Ուրախ կլինենք, եթե խորհրդակցությունները, որոնք այդ երկրների զուտ ներքին գործն են, պսակվեն անկախ պայմանավորվածություններով: Բուն արձանագրությունների նախագծերի, ինչպես նաև դրանց իրականացման տարրերի ու ժամանակացույցի նախնական վերլուծությունը ցույց է տալիս այդ հարցի վերամշակման լրջությունը և ինչպես Երևանի, այնպես էլ Անկարայի ճանապարհի իրենց հատվածն անցնելու վճռականության առկայությունը: Նշենք, որ այդ փաստաթղթերով դիտարկված քայլերից ոչ մեկը չի կարող մեկնաբանվել իբրև որևէ երրորդ կողմի վնաս հասցնող»,- ասվում է փաստաթղթում: ՌԴ ԱԳՆ-ն հույս է հայտնում, որ հարաբերությունների առողջացումը կհանգեցնի երկկողմ առևտրատնտեսական շփումների աշխուժացման, դրականորեն կանդրադառնա երկու պետությունների սոցիալ-տնտեսական վիճակի վրա, կնպաստի տարածաշրջանում խաղաղության և անվտանգության ամրապնդմանը:
/www.yerkir.am/

Դ. Մեդվեդև

AJC-Ն ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ. Ամերիկա-հրեական կոմիտեն ողջունում է Թուրքիայի ու Հայաստանի պատմական որոշումը, որն ուղղված է թշնամանքի և անվստահության դադարեցմանը երկու երկրների ժողովրդների միջև: «Այս համաձայնագիրը, որը պետք է վավերացնեն Հայաստանի ու Թուրքիայի խորհրդարանները, նոր դարաշրջան կբացի հայ-թուրքական հարաբերություններում: Մենք ողջունում ենք երկու երկրների կառավարություններին և ողջունում ենք նրանց համարձակությունը»,- հայտարարել է AJC-ի Դևիդ Հարրիսը: Նա հույս է հայտնել, որ Արձանագրությունների ստորագրումը դրական կազդի ողջ տարածաշրջանի վրա: «Թուրքիայի ու Հայաստանի միջև կան ցավոտ պատմական հարցեր, սակայն երկու կողմերը իմաստուն որոշում են կայացրել և ընտրել են երկխոսության ճանապարհը»,- ասել է Դ.Հարրիսը: 12.10.2009

Տիգրան Խզմալյան. «Մենք տեսնում ենք ամենաչարաբաստիկ նախադեպերից մեկի կրկնությունը»

Անդրադառնալով Վանաձորի դեպքին, երբ հայ-թուրքական ներկայիս ընթացքի դեմ բողոքող Ազգային նոր պահպանողական շարժման երիտասարդներին ոստիկանները բաժին էին տարել և մեղադրել ազգային թշնամանք հրահրելու մեջ՝ Տիգրան Խզմալյանն ասաց, դա շատ նման է Մոլոտով-Ռիբենտրոպ պակտին:

«Երբ 1939թ.-ին՝ տխրահռչակ Մոլոտով-Ռիբենտրոպ պակտից հետո, ֆաշիստական Գերմանիան և ստալինյան Խորհրդային Միությունը ստորագրեցին բարեկամության պայմանագիրը, Խորհրդային Միության տարածքում շուրջ 2 տարի՝ մինչև 41 թ. հունիսի 22-ը, ձերբակալում էին, հալածում էին և գնդակահարում էին բոլոր նրանց, ովքեր հայտարարում էին ֆաշիզմի դեմ իր դիրքորոշման մասին կամ հայտարարում էին, որ պատերազմը անխուսափելի է: Այսինքն՝ մենք տեսնում ենք ոչ միայն ֆաշիստական և ստալինյան կայսրությունների ստեղծած ամենաչարաբաստիկ նախադեպերից մեկի կրկնությունը, այլև տեսնում ենք, որ դեռ չվավերացված պայմանագիրը արդեն գործում է»,- ասաց Տիգրան Խզմալյանը:

... .Նա իրավիճակը նմանեցրեց նաև Կարսի և Բաքումի պայմանագրերի կետերին, ըստ որոնց՝ կողմերը համաձայնում են պայքարել ծայրահեղական շարժումների դեմ: Նման կետ կա նաև հայ-թուրքական արձանագրության մեջ:

(**Սոնա Ավագյան, www.hetq.am, 20.10.2009**)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

Մարդկության դեմ ուղղված միջազգային հանցագործ ծրագրերը կանխարգելելու, նաև հայ-թուրք -շվեյցարական գաղտնի պայմանավորվածությունների կապացությամբ

Օիծեռնակաբերդ, 24.04.2009թ.

Աներևակայելի էր ցինիզմը:

2009թ. ապրիլի 23-ին խոտորվեց ավանդույթը, ալեկոծվեց հայի հոգին, խռովվեց ծեսը… Իննը տասնամյակ է ինչ՝ ապրիլի 23-ի երեկոյան՝ աշխարհասփյուռ հայությունը, իսկ 1965-ից նաև ՀԽՍՀ-ի ու ԽՍՀՄ-ի հայությունը համախմբվում է տներում, եկեղեցիներում, դահլիճներում՝ հարգանքի տուրք մատուցելու 1915 - 23 թթ. Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության տարածքում թուրքական պետության իրագործած հայերի ցեղասպանության միլիոնավոր զոհերի հիշատակին: Հաջորդ օրը՝ առավոտից մինչ ուշ երեկո՝ ծաղիկներ է դնում անթաղ նահատակների հիշատակին կառուցված հուշակոթողներին:

Ո՞վ է, որ շուրջ երկու տասնամյակ փորձում է արժեզրկել ավանդույթը, նսեմացնել ծեսը, խաթարել ու կազմաքանդել արարողությունը, ո՞վ է հայոց ազգային արժանապատվությունը վիրավորողը և ինչո՞ւ… Պատասխանը մեկն է. նա՝ ով, ի տարբերություն մեր պետական այրերի, ավելի լավ է ճանաչում մեզ՝ հայերիս, ով գիտի հայի ազգային արժանապատվության խորքային ունակությունը, տեսել է դրա պաշտպանական խենթ նվիրվածության պոռթկումը, կառուցողական հզորությունը, անպարտելիության ոգին: Նա՝ ով չի թերագնահատում հայոց ազգային ավանդույթի ճանաչողական հզորությունը, ծեսի ինքնաճանաչ կազմակերպչական ունակությունը, արարողության գործելու պատրաստ նպատակային հաղթական ելքը:

Այս ամենը գուցե թե կարելի էր արհամարել, եթե չլիներ դրանով սկիզբ տրվող ՀՀ-ին, ԼՂՀ-ին և շատ այլ երկրներին ուղղված իրագործման դրվող սպառնալիքը՝ «ճանապարհային քարտեզ» ծածկագրումով հայ-թուրք-շվեցարական պայմանավորվածությունը, որը միտված է նպաստելու հայոց և այլոց նկատմամբ նոր պատերազմական հանցագործությունների ու ցեղասպանությունների իրականացմանը՝ Միջին Արևելքում, Բալկաններում, Կովկասում…

Սա է իրողությունը. ՎԵՐՋԸ 1985-2009 թթ. արևմտյան գերտերությունների միջազգային կազմակերպված հանցագործությունների, ու… ՍԿԻՋԲԸ մարդկության դեմ ուղղված լոկալ և գլոբալ սպառնալիքների ու աղետների:

Ըստ միջազգային պաշտոնական լրահոսի և տարածքային լրատվական կենտրոնների տեղեկատվության, որոնք ոչ միայն չեն հակասում միմյանց, այլև ճշգրտորեն լրացնում ու ներկայացնում են աշխարհում տեղի ունեցող դեպքերի ընդհանուր տրամաբանությունը՝ տարբեր երկրներում հրահրվող տարատեսակ հակամարտությունների ծավալումը՝ ակնհայտ է, որ ինչպես Եվրոմիությունը, այնպես էլ ԱՄՆ-ն ու այլ գերտերություններ գործարկել են համաշխարհային ծավալումի Մեծ աղետի առաջին գործողությունները: Դրանց ստարտը տրված է, վկա՝ Մայիսի 7-ից Պակիստանի հյուսիս-արևմուտքում ծավալված ռազմական գործողությունները՝ Թալիբանի դեմ կռվելու պատրվակով… Հետևանքը՝ 1 միլիոն 800 հազար փախստականներ իրենց բնակության վայրերից՝ միանգամայն համահունչ Ռալֆ Պիտերսի (2006 թ., օգոստոս) և «Գուգլի» (2008 թ., օգոստոս) ներկայացրած քարտեզների տրամաբանության:

2009-ի մայիսի 2-ին Թուրքիայի նորանշանակ արտգործնախարարն ի լուր աշխարհի հայտարարեց, որ՝ «Թուրքիան պետք է ստանձնի այնպիսի երկրի դեր, որն ազդում է Մերձավոր Արևելքի, Բալկանների և Կովկասի քաղաքականության վրա»: Դրանով նա հաստատեց, որ Եվրոմիությունն ու ԱՄՆ-ը (Ռուսաստանի համաձայնությամբ) կրկին վարձել են Թուրքիային առաջիկայում՝ Մերձավոր Արևելքում, Բալկաններում, Կովկասում ծրագրվող պատերազմական հանցագործություններն ու ցեղասպանությունները նրա ձեռքով իրականացնելու համար: Սրանով թուրքական իշխանությունները համաշխարհային հանրությանը հայտնում են, որ իրենք արդեն ստանձնել են վաղուց իսկ իրենց ծանոթ դերը, սակայն հետևանքների համար հետագա պատասխանատվությունը դնում են ՀՀ-ի իշխանությունների վրա:

Թուրք իշխանավորների կեցվաքը զարմանալի չէ. ճիշտ է նրանք ստացել են կանխիկ վճարը, նաև հետագայում իրենց անվտանգության երաշխիքները, սակայն այնքան էլ վստահ չեն, քանզի գիտեն, որ նման դեպքերում հանցագործը մաքրում է հետքերը: Դարասկզբի փորձից է հայտնի՝ հանցագործության գործիքներն ու հետքերը վերացնում են:

Ո՞րն է ելքը:

Բանն այն է, որ ՀՀ-ն կարող է արգելափակել Թուրքիային կրկնակի հանցագործ գործիք դարձնելու ծրագիրը, ըստ այդմ, նաև կանխարգելել ծրագրվող տարածաշրջանային (թե՛ համաշխարհային) մեծ աղետը, եթե ցանկանա: Այնպես որ՝ ընտրությունն այսօր ՀՀ-ինն է: Կամ ՀՀ-ն համաձայնվում է եվրո-ամերիկյան թելադրանքին ու հանցակից դառնում Թուրքիային, ԵՄ-ին և ԱՄՆ-ին, կամ չի համաձայնվում և դիմում է ՄԱԿ-ի միջազգային դատարան՝ Հայոց ցեղասպանության համար Թուրքիային դատապարտելու և պատասխանատվության ենթարկելու հայցով: Այսպես է, որ ՀՀ-ն փրկելով Թուրքիային կարող է փրկել նաև եվրո-Հյուսիսատլանտյան տակ առնված բոլոր մյուս երկրների, այդ թվում՝ Եվրոմիության ու ԱՄՆ-ի, առաջիկա համաշխարհային մեծ աղետի պարագլուխ երկրների ժողովուրդներին:

Փոխվել է դարը, փոխվել է Հայոց արդարադատությունը: Կարևորելով «ամեն մի հանցագործ պետք է պատժվի» սկզբունքը՝ չպետք է բացառել նաև դեռ ծրագրման փուլում հանցագործությունը կանխարգելելու, այն է՝ ծրագրողներին, քարոզողներին և հրահրողներին պատժելու սկզբունքը:

Համայն հայությունը վճռական էր և է՝ մարդկության դեմ ուղղված հանցագործությունները թե՛ պատժելու և թե՛ կանխարգելելու հարցերում:

ՀՀ Օրենքի ուժով Թուրքիային Հայոց ցեղասպանությունը իրականացնելու մեղադրանքով դատապարտելու իր վճռականությունը մեր ժողովուրդը հայտնել է դեռևս 1988-ին, երբ հարկադրեց երկրի իշխանություններին այլևս չընկրկել, դեմ գնալ Կրեմլին: Նա իր վճռական, համահավաք կամքը արտահայտեց նաև 1990թ. օգոստոսի 23-ին, ՀՀ Անկախության հռչակագրով՝ երկրի Մայր օրենքով, որպես ՀՀ գերագույն իշխանություն՝ կարգադրեց ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանություններին միջազգային իրավունքի ուժով պատասխանատվության կանչել Թուրքիային 1915-23 թթ. Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանություն իրականացնելու մեղադրանքով: Այլ խնդիր է, որ ԽՍՀՄ իշխանությունը՝ Գորբաչովը, չկատարեց իր սահմանադրական պարտականությունը, Հայաստանի հայցը չներկայացրեց ՄԱԿ-ի միջազգային դատարան:

Փոխարենը, 1991թ. մարտի 12-ին տաս տարով երկարաձգեց արդեն իսկ՝ 1988-ից «դե ֆակտո», իսկ 1990թ. օգոստոսի 23-ից՝ «դե յուրե» չգործող 1921 թ. մարտի 16-ի «Ռուս-թուրքական եղբայրության և բարեկամության», նույնն է թե՝ ցեղասպանությունը արդարացնող, երկրներ զավթելու ռազմաքաղաքական նոր տեխնոլոգիաներ գովազդող պայմանագիրը, դրանով իսկ փորձելով Թուրքիային երկրորդ ճակատով ներքաշել ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ՝ իր իսկ հրահրած Ադրբեջանի զավթողական-ագրեսիվ պատերազմին:

Հայ-թուրքական հարաբերություններ չկան և չեն էլ կարող լինել: Եղածը 1915-23 թթ. մարդկության դեմ կատարված հանցագործություն է, որը հնարավոր չէ կարգավորել բանակցությունների միջոցով: Միակ ճանապարհը իրավականն է: Խնդրին իրավական լուծում տալու միակ կառույցն էլ ՄԱԿ-ի Հաագայի միջազգային դատարանն է:

Ուստի՝

Առաջարկում ենք ընթացք տալ 1993-ից ՀՀ Աժ-ի օրակարգում գտնվող օրինագծին չսպասեցնելու համար Հաագայի դատարանին: Ինչպես նաև վերջ տալ դիվանագիտություն կոչվող այս վտանգավոր թատերախաղին՝ «ճանապարհային և ոչ ճանապարհային քարտեզներին», իրերն իրենց անունով կոչել և զերծ մնալ ՀՀ-ի, ԼՂՀ-ի ու տարածաշրջանի այլ երկրների նկատմամբ լուրջ սպառնալիքներ ստեղծելու անձնական մեղսակցությունից, որպեսզի հայությունը ստիպված չլինի ՀՀ-ն ճանաչել Եվրոմիության կողմից գաղութացված երկիր ու… դիմի դրանից բխող իրավական համապատասխան քայլերի ու միջոցների:

Ինչ վերաբերում է ԵՄ-ին ու ԱՄՆ-ին, նաև Շվեյցարիային, եթե նրանք իրոք այդչափ մտահոգ են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրում, ապա խանդավառվելու փոխարեն, մինչ «ճանապարհային քարտեզը» ողջունելը, իրենք իրենց ժողովուրդներին և աշխարհին համոզելու համար, որ իրոք դեմ են ցեղասպանության բոլոր տեսակի դրսևորումներին՝ պատվերով, թե առանց դրա, որպես առաջին քայլ առաջարկում ենք դատապարտել հայերի նկատմամբ ցեղասպանություն հրահրելու, թուրքերին պատվեր իջեցնելու և մարդկության դեմ հանցագործություն իրականացնելու եվրո-գերտերությունների 130-ամյա քաղաքականությունը:

Որպես երկրորդ քայլ՝ միասին, թե առանձին-առանձին, համապատասխան հայցեր ներկայացնել ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդ և միջազգային դատարան՝ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայի տարածքում 1915-23 թթ. հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը դատապարտելու, հանցագործին պատժելու, ինչպես նաև ցեղասպանության հետևանքները վերացնելու գործուն և ակտիվ քայլեր ձեռնարկելու մասին:

«Ուխտ Արարատի», ՀԱՀԳԲ-ի (ԱՍԱԼԱ) ազատամարտիկների և նախկին քաղբանտարկյալների կազմակերպություն

Երևան, 29 մայիս, 2009 թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԹԻՎ 10

Մեծ ութնյակի համաժողովում 2009-ի հուլիսի 14-ին Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի նախագահներ Բարաք Օբամայի, Նիկոլա Սարկոզիի, Դմիտրի Մեդվեդևի ընդունած հայտարարության և Ծաղկաձորում Մեթյու Բրայզայի հայտարարությունների կապակցությամբ

Մինսկի խմբի համանախագահ երկրների նախագահների հայտարարությունը և արդեն իսկ մասնակի գաղտնազերծված Մադրիդյան սկզբունքները ամենևին չեն նպաստում խաղաղության պահպանմանը տարածաշրջանում: Իսկ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզայի, ինչպես նաև Արևմուտքի այլ պաշտոնատար անձանց հայտարարությունները՝ ոչ այլ ինչ են, քան պատերազմի քարոզչություն: Դրանք նոր չեն, ըստ էության՝ շարունակությունն են ԱՄՆ Զինված ուժերի պաշտոնաթող սպա Ռալֆ Պիտերսի[1], ԱՄՆ բանակի ռազմական քոլեջի դասախոս Ստեֆան Բլանկի[2], ԱՄՆ նախկին պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի[3], ԱՄՆ նախկին պետքարտուղարի օգնական Դենիել Ֆրիդի[4], ԱՄՆ պետքարտուղարի նախկին օգնական Մարկ Գրոսմանի[5], ԱՄՆ պետքարտուղարի օգնական Մեթյու Բրայզայի[6], ԵԽՎ քարտուղար Թերի Դևիսի[7] և արևմտյան այլ պաշտոնյաների, իսկ այլ կերպ ասած, ԱՄՆ պետքարտուղարության և Իսրայել-ԵՄ ալյանսի կողմից Կովկասում իրականացվող հակահայ՝ ագրեսիվ-հարձակողական քաղաքականության: Ստացվում է, որ Մեթյու Բրայզան մոռացել է Մինսկի համանախագահների խմբում իր կատարելիք առաքելությունը, իսկ դա, առաջին հերթին, նոր պատերազմը կանխարգելելն է, իրական խաղաղության հաստատմանը նպաստելը: Քանի որ դա չի կարելի դիտել որպես Մինսկի խմբի համանախագահների ընդհանուր կարծիք-հայտարարություն, ուստի դժվարանում ենք հստակ պատասխանել. դա Մեթյու Բրայզայի անձնական նախաձեռնությո՞ւնն է, թե՞ իր երկրի իշխանությունների հանձնարարությունը:

Ակնհայտ է մի բան, արված հայտարարությունները նպատակ ունեն հրահրել Ադրբեջանին սկսելու նոր ագրեսիա ԼՂՀ-ի ու ՀՀ-ի դեմ: Այդ կերպ եռյակը՝ ութնյակի հովանավորությամբ, նաև

ա) ճնշում է գործադրում ՀՀ իշխանությունների վրա,

բ) փորձում է վախեցնել հայությանը,

գ) ինչպես և՝ շանտաժի է ենթարկում ԼՂՀ իշխանություններին, իբր թե՝ իրենք են մեղավոր լինելու առաջիկայում Ադրբեջանի կողմից պատերազմի վերսկսման համար:

Սխալ կլիներ կարծել, թե նրանք տեղյակ չեն, որ պատերազմի քարոզչությունը, ինչպես և այն հրահրելն ու ագրեսորին սատարելը պատասխանատվության ենթակա հանցագործություն է ոչ միայն միջազգային, այլև ներպետական իրավական դաշտում: Այսօրինակ ամբարտավանությունը, անպատժելիության ինքնավստահությունը պայմանավորված է, անշուշտ, աշխարհի մեծ և փոքր երկրների ու ժողովուրդների ճակատագիրը, նրանց ներկան ու ապագան, նրանց լինել-չլինելու որոշումները ըստ իրենց կարիքների՝ հանցագործ համաձայնությամբ, իրականացնելու Մեծ ութնյակի մտայնությամբ, իրենց իսկ կողմից իրենց վերապահված իրավունքով: Չէ որ Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները հրահրող այդ նույն գերտերությունները այդպես էլ չկանգնեցին դատարանի առաջ. պատասխանատվություն կրեցին միայն պարտվողները, որ հետո կրկին նույն հաղթողների օգնությամբ դառնան գերտերություններ և մասնակից լինեն լոկալ ու գլոբալ նոր պատերազմների հրահրման ու սանձազերծման:

Թե՛ Մադրիդյան կետերը, թե՛ Մինսկի համանախագահ երկրների ղեկավարների ու Բրայզայի հայտարարությունները հիշեցնում են իրավա-քաղաքական հարցադրումները մերժող, Սումգայիթյան ոճրագործությունը հրահրելու գործաչովյան իշխանությունների 1988-ին վարած քաղաքականությունը: Դա էր, որ կազմակերպեց, բորբոքեց ու սանձազերծեց ադրբեջանական ամբոխի ու հանցագործ տարրի, այսպես կոչված, ազգայնամոլական տրամադրություններն ու հանցագործ հարձակումները Սովետական Ադրբեջանի քաղաքացի հայ բնակչության վրա: Հենց այդ նույն օրերին Մեծ յոթնյակի երկրների քաղաքական պատվերով ու հովանավորությամբ հրահրվեցին պատերազմները Կովկասում.

Վրաստանի ագրեսիան Աբխազիայի և Հարավային Օսիայի նկատմամբ, Ադրբեջանի ագրեսիան ԼՂՀ-ի և ՀՀ-ի դեմ, որի ելքը՝ Ադրբեջանի պարտությունը չէր բավարարում այդ նույն տերությունների ակնկալիքներին ու հաշվարկներին:

Ահա թե ինչու, 1994-ին պարտադրվեց հրադադար, որպեսզի կանխվի Ադրբեջանի կապիտուլյացիան՝ չլինի պատերազմի ռազմա-քաղաքական, իրավական հանգուցալուծում: Որպեսզի չլինի խաղաղություն, որպեսզի հակամարտությունը սառեցվի մինչ այն պահը, երբ ՆԱՏՕ-ն որպես համաշխարհային զինուժ՝ իր մայրցամաքային բանակով, պատրաստ լինի ներխուժելու Կովկաս, «մշտական բնակության» տեղակայվելու կովկասյան երեք հանրապետությունների տարածքներում: Կովկասը զավթելու ՆԱՏՕ-ի ծրագրերին է ծառայեցվում նաև Հայոց ցեղասպանության պատասխանատվությունը շրջանցելու, հանցագործին պատասխանատվությունից ազատելու, ցեղասպանության հետևանքները վերացնելու միջազգային - իրավական պարտավորությունները մոռացության պարտադրելու եվրո-ամերիկյան ռազմա-քաղաքական քայլերը: Այդ ամենը ներկայացվում է որպես հայ-թուրքական հինչ-ինչ հարբերությունների կարգավորման եվրո-ամերիկյան «մտահոգություն» ու դրանով պայմանավորված նախկին ԽՍՀՄ-Թուրքիա սահմանի բացման, ՀՀ - Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների հաստատման (ասել է թե ՀՀ-ում և ԼՂՀ-ում թուրքերի, քրդերի և այլոց համար անարգել մուտք ու ելքի և անվերահսկելի գործողությունների հնարավորությունների տրամադրման) եվրո-ամերիկյան հարկադրանք: Չհարցնելով իսկ Հայությանն ու միջազգային իրավունքին, ուզո՞ւմ է արդյոք Հայությունը, և կարո՞ղ է արդյոք միջազգային իրավունքը առկա իրողությունում թույլ տալ ՀՀ-ի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատում, բաց սահմաններ, ճանապարհներ, երբ ՄԱԿ-ի (միջազգային հանրության) կողմից չի դատապարտվել Հայոց ցեղասպանությունը, չեն վերացվել ցեղասպանության հետևանքները… Չէ՞ որ դա իրավական տերմինաբանությամբ կոչվում է՝ մարդկության դեմ իրականացված հանցագործության արդարացում, նոր ցեղասպանության քարոզչություն: Համոզված ենք, լավ գիտեն, հստակ գիտակցում են իրենց նախաձեռնաց հանցագործ քայլերի հետևանքները: Բայց կրկին նույն, արդեն չարչրկված, մարդկության դեմ կիրարկվող՝ «Ուժն է տալիս իրավունք» հանցագործ մտայնության ու մոլագարության ակնկալիքներն են, որ մթագնում են նրանց գիտակցությունն ու բանականությունը:

Քոնդոլիզա Ռայս

Սակայն Ճշմարտությունը մեկն է:

Այսպես կոչված, գլոբալացման միջազգային ռազմա-քաղաքական առկա, աներևույթ թվացող խառնաշփոթ իրողությունում կա մեկ ճշմարտություն. Եվրոմիության կոմիսարներն ու ԱՄՆ պետքարտուղարության պաշտոնյաները պետք է ազնվորեն խոստովանեն, որ իրենք մեղմ ասած «թքած ունեն» միջազգային իրավունքի, համաշխարհային խաղաղության և համամարդկային խաղաղ համակեցության վրա, քանզի նպատակ ունեն նվաճել աշխարհը և ստրկացնել մարդկությունը… Այսինքն, փորձել իրագործել այն, ինչը չհաջողվեց գերմանական ֆաշիզմին: Ի դեպ, առնվազն ազնվության առումով հարգանքի է արժանի հենց ֆաշիզմն ու Հիտլերը, քանի որ անում էին այն, ինչը կանխավ՝ ազնվորեն ասում էին. կամավոր ստրկանալու կամ չստրկանալու համար պայքարելու ընտրության իրավունքը թողնելով թիրախ ընտրված երկրների ղեկավարներին ու ժողովուրդներին:

Ռազմա-քաղաքական նոր ագրեսիվ ծավալումների և ժամանակակից արկածախնդրությունների պահը, կարծես, կրկին հասունացել է: Հենց դա է, որ որպես ՆԱՏՕ-ի նոր կուրս հայտարարեց դաշինքի նորաընծա ղեկավար Ռասմուսսենը: ՆԱՏՕ-ի մայրցամաքային ռազմակայանների տեղաբաշխման սկզբունքների ու ծրագրերի մասին ահազանգել ենք բազմիցս, հիմա հիշեցնենք միայն նրա տեղակայման վայրերը. Աֆրիկա մայրցամաքում՝ Կոնգո, Եվրոպայում՝ Կոսովո, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների ծովային հսկողությունում՝ Կարիբյան կղզիներ, ցամաքայիններում՝ Կոլումբիա, Հոնդուրաս: Իսկ Եվրոպան Ասիային ու Հյուսիսը Հարավին կապող միջմայրցամքային խաչմերուկում՝ Կովկասում, ՆԱՏՕ-ի բանակը դեռևս տեղակայվելու է Հարավային Կովկասի երեք երկրների տարածքներում. Հյուսիսայինը դեռ «պատրաստ» չէ դրան: Ըստ այդմ, նույն այդ վայրերի բնակչությունը՝ ադրբեջանցիները, վրացիները, հայերը այլ դեր չեն ունենալու, քան սպասարկելու ՆԱՏՕ-ական զինուժի կարիքները: Նախագահ Սահակաշվիլին վաղուց տվել է իր համաձայնությունը, որն էլ հենց Վրաստանի «անկախության» գինն է: Նախագահ Ալիևը գնում է դրան և միապետական երկրի վերածած Ադրբեջանը տանում է ինքնաստրկացման նույն այդ ճանապարհով: Արևմուտքի համար գլխավոր գլխացավանք ու արգելք մնում է հայությունը, որը երբևէ չի ցանկացել ստրկանալ: Այդ հարցն էլ ծրագրել են լուծել խաղաղ էքսպանսիայի հայտնի մեթոդով. մեր երկրում ժողովրդագրական պատկերը փոխել այնպես, որ ՀՀ-ում և ԼՂՀ-ում մնացած հայերը վերածվեն ամենափոքր համայնք ներկայացնող ազգային փոքրամասնության:

Դենիել Ֆրիդ

Նախատեսված էր, որ ՆԱՏՕ-ի ներխուժումն ու տեղակայումը Կովկասում պետք է իրականացվեր 2008-ի աշնանը, որպեսզի հաջորդ տարի ՆԱՏՕ-ի նորաընծա ղեկավարը պատասխանատու չլիներ իր նախորդի կատարած հանցագործությունների համար և «մաքուր» խղճով հայտարարեր ՆԱՏՕ-ի համաշխարհային ծավալման գնացող «ժողովրդավարության տարածման» ծրագրերի մասին: Սահակաշվիլին սակայն չարդարացրեց իրեն վստահված գործը: Հարավային Օսիայի նկատմամբ ագրեսիան կասեցվեց առաջին իսկ օրվա ընթացքում, այն էլ այնպես, որ արևմտյան պատրաստություն անցած վրացական կոչվող բանակը չհասցրեց անգամ երկրորդ քայլն անել, սկսել հարձակումը Աբխազիայի վրա: Պարզ էր և իմաստազուրկ, անգամ վտանգավոր, որ Ադրբեջանը կատարեր ՆԱՏՕ-ի ծրագրած երրորդ քայլը, այն է՝ իր հերթին հարձակվեր ԼՂՀ-ի ու ՀՀ-ի վրա:

2009-ի սեպտեմբերին Կովկասի վրա շատ իրադարձություններ են կուտակվում. Կուտակվում են նաև ընդհանուր տրամաբանությանը ենթակա այլ տարածաշրջաններում. Իսրայել հարևաններ՝ Պաղեստին, Սիրիա, Լիբանան լարվածություն, բզկտված ու արյունաքամ Իրաք, Իրան՝ ներքին լարվածության և միջուկային արտաքին հարվածի սպառնալիքով, ԼՂՀ հակամարտություն՝ «թարմացված» Մադրիդյան սկզբունքների սադրանքով, հայ-թուրքական «եվրո-ֆուտբոլային դիվանագիտության» շարունակություն, Թուրքիայում՝ քրդական գործոնի ու պետության եվրո-ձևավորում, Աֆղանստան-Պակիստան-Հնդկաստան լարվածություն, ռուս-ուկրաինական առճակատում, Չինաստանում և նրա շրջակայքում ազգայնական տրամադրությունների հրահրում, Հյուսիսային Կորեայի միջուկային թղթածրար… Ակնհայտ է մի բան, որ թվարկված ու չթվարկ-

ված այս ամենը, անշուշտ, ՆԱՏՕ-ի առաջխաղացման, իրականում երրորդ համաշխարհային պատերազմի հրահրման ընդհանուր խճանկարն է: Ակնհայտ է նաև լոկալ և գլոբալ պատերազմների հրահրման նոր գործողությունների ակտիվացումը, իսկ դրանք իրականացվում են գերտերությունների, ինչ-ինչ վերլուծաբանների և էմիսարների, հետո արդեն կոմիսարների ու երկրների ղեկավարների կողմից ագրեսիայի կամ պատերազմի քարոզչություն կատարելու, հրահրելու և դրանց սատարելու միջոցով:

Հաշվի առնելով 2008-ի վրաց-օսական պատերազմի դասերը և հիշելով, որ դրան նախորդեց ԱՄՆ նախկին պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի այն հայտարարությունը, թե՝ «ԱՄՆ-ը պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը», այսօր նկատելի է, որ նույն միջոցին է դիմում ԱՄՆ պետքարտուղարի նախկին օգնական Մարկ Գրոսմանը, երբ հայտարարում է. «ԱՄՆ-ը պաշտպանում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը»: Իսկ որպեսզի հետագայում ԱՄՆ պետաքարտուղարությանը չմեղադրեն պատերազմ հրահրելու մեջ, Գրոսմանը դիմում է հայտնի աճպարարության՝ հայտարարելով. «Ադրբեջանը չպետք է հույս ունենա, թե Արևմուտքը կամ ԱՄՆ-ը կլուծեն հայ-ադրբեջանական, լեռնայինղարաբաղյան[8] հակամարտությունը»: Ասել է թե, Ադբեջանը կարող է սկսել ռազմական գործողությունները, իբր առանց հարցնելու արևմուտքին ու ԱՄՆ-ին, դե իսկ փաստի առաջ կանգնած արևմուտքն ու ԱՄՆ-ը ստիպված են լինելու պաշտպանել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը:

Մեթյու Բրայզա

Ամբողջ Կովկասում իրավիճակը սպառնալից է, հղի է վտանգներով: Այն կանխարգելելու միջոցը մեկն է. պատրաստ լինել դիմագրավելու ագրեսիան ու, ըստ այդմ, ծրագրվող աղետները: Ուստի կարծում ենք, որ ՀՀ իշխանությունները այլևս հույսեր չպետք է կապեն բանակցային գործընթացի եվրո-խաղերի հետ: Պետք է լրջորեն զբաղվել ազգային-պետական համապարփակ ինքնապաշտպանության նորովի կազմակերպման խնդիրներով, թե՛ ռազմական, թե՛ տնտեսական և թե՛ դիվանագիտական դաշտերում: Նաև չխոչընդոտել ՀՀ-ում, ԼՂՀ-ում և Սփյուռքում Հայոց աշխարհազորի ինքնաճնավորման ու մարտունակության բարձրացման գործին:

Ինչ վերաբերում է պատերազմի կանխարգելման սկզբնառու քայլին, ապա ոչ պակաս կարևորություն ունի այն հրահրողներին կանխավ՝ մինչև պատերազմի սկիզբը, պատասխանատվության կանչելու խնդիրը. ասել է թե՝ համաձայն ՀՀ օրենսդրության և միջազգային նորմերի, ՀՀ դատական մարմիններում պատասխանատվության կանչելու պատերազմի քարոզիչ պաշտոնյաներին՝ Հայաստանի դեմ պատերազմ հրահրելու, ադրբեջանցիներին ոգևորելու և ագրեսիայի մղելու, պատերազմական հանցագործներին սատարելու իրենց հրապարակային գործունեության համար: Ինչ վերաբերում է ՀՀ-ի և ԼՂՀ-ի նկատմամբ Մեծ ութնյակի երկրների նախագահների վարած արտաքին քաղաքականությանը, ապա ակնհայտ է, որ դա նախ և առաջ պետք է դատապարտի ՀՀ Ազգային ժողովը, իսկ երկրների պաշտոնյաներին պատասխանատվության կանչելու հարցը կմնա իրենց երկրների օրենսդիրների ու դատական ատյանների վրա, եթե պարզվի, որ դա անձնական ակնկալիքներով պայմանավորված նախաձեռնություն է և ոչ թե իրենց երկրների ու ժողովուրդների իրական շահերից բխող, նաև համընդհանուր խաղաղությանը նպաստող արտաքին քաղաքականություն:

«Ուխտ Արարատի», ՀԱՀԳԲ-ի (ԱՍԱԼԱ) ազատամարտիկների և նախկին քաղբանտարկյալների կազմակերպություն

18 հուլիս - 28 օգոստոս, 2009 թ.

---

1. **ԱՄՆ բանակի պահեստի սպա Ռալֆ Պիտերս**, «Միջին արևելքի նոր քարտեզը ըստ արյունակցկան կապերի և հավատի նմանությունների», «Ազգ», օրաթերթ, 25.08.2006թ.: «Ուխտ Արարատի», թիվ 4/10, 2006, էջ 1-4:

2. **ԱՄՆ բանակի ռազմական քոլեջի դասախոս Ստեֆան Բլանկ,** «Քրդական հարցը և Լեռնային Ղարաբաղը»: Eurasianet,http://www.warandpeace.ru/ru/analysis/view/23757/

3. **ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայս.** «ԱՄՆ-ը պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը եւ կողմնակից է աբխազական եւ հարավօսական հակամարտությունների խաղաղ կարգավորմանը միջազգայնորեն ճանաչված սահմանների շրջանակում»: («Ազգ» օրաթերթ, 11-ը հուլիսի, 2008թ.)

4. **ԱՄՆ պետքարտուղարի օգնական Դենիել Ֆրիդ.** «Հայաստանը պետք է պատրաստ լինի ճանաչել առկա սահմանը եւ կառուցողական արձագանք տալ Թուրքիայի հնարավոր ջանքերին: Հայաստանը պետք է հայտարարի, որ ժամանակակից Թուրքիայի նկատմամբ հողային որեւէ պահանջ չունի: Միաժամանակ անհրաժեշտ է Թուրքիայի առերեսումը սեփական պատմության մութ էջերի հետ, որքան էլ դա դժվար լինի»: («Ազգ», Հ. Ջ., 20. 06. 2008թ.)

5. **ԱՄՆ պետքարտուղարի նախկին օգնական Մարկ Գրոսման**. «ԱՄՆ-ը պաշտպանում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը»: (24.08.08, «Արմենպրես»)

6. **ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ**, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցով **ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Մեթյու Բրայզա.** «Մեզ համար կարևոր է հիշեցնել՝ որոնք են մեր նպատակներն ու քաղաքականությունը: Մենք աջակցում ենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը, մենք գտնում ենք, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը հանդիսանում է բանակցությունների առարկա»: **/PanARMENIAN.Net/, 15.03.2008:**

7. **ԵԽՎ Գլխավոր քարտուղար Թերի Դևիսի** այցը Հայաստան: Ստիպված էինք նկատել, որ Թերի Դևիսն իր ելույթներում Ղարաբաղի, թեկուզ չճանաչված, ղեկավարությանը կոչում է «ռեժիմ» մինչդեռ այդ բառը երբեք չի օգտագործում Կոսովոյի վերաբերմամբ: Մի՞թե գործ ունենք երկակի ստանդարտների հետ. ինչո՞վ է տարբերվում Կոսովոյի ալբանացիների ինքնորոշման իրավունքը Ղարաբաղի հայերի իրավունքից: «ՀՀ»-ի այս հարցին ի պատասխան՝ եվրոպացի պաշտոնյան ներկայացրեց իր մոտեցման հիմքերը, որոնք ամրապնդեցին երկակի ստանդարտների մասին մեր պատկերացումները. «**Կոսովոյի ու ԼՂ-ի միջև կա մեծ տարբերություն: Կոսովոյում ՄԱԿ-ի առաքելությունն է և KFOR-ը, որում Եվրամիության զինվորներն են: Կոսովոյում չկա անջատողական ռեժիմ: Իհարկե, ես իրատես եմ, հասկանում եմ, որ Կոսովոյում ոմանք ցանկանում են անջատվել Սերբիայից, բայց դա կառավարությունը չէ:** Այնտեղ ռեժիմ չէ, այլ ավանդական կառավարություն, որը հիմնված է ՄԱԿ-ի բանաձևի վրա», - ասաց ԵԽԽՎ գլխավոր քարտուղարը՝ նորից ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Աբխազիայի, Մերծդնեստրի իշխանություններին կոչելով անջատողականներ: («Ազգ» օրաթերթ, 2008)

8. **ԱՄՆ պետքարտուղարի նախկին օգնական Մարկ Գրոսմանը** լավ գիտի, որ Արցախը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, դա Դաշտային Ղարաբաղի և Լեռնային Ղարաբաղի ամբողջությունն է և հենց դա էլ նա ցանկացել է տարանջատել ու ընդգծել:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԹԻՎ 11

«Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման, երկկողմ հարաբերությունների զարգացման մասին» ստորագրված արձանագրությունների կապակցությամբ

Մենք վստահ ենք, որ ժամանակակից Թուրքիան հավատարիմ է վերջին հարյուրամյակներին փայփայած պանթուրքիզմի ու պանթուրանիզմի գաղափարներին, որոնք կազմում են իր արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, ինչի ուղղությամբ էլ հերթական քայլն է կատարվել: Ուստի, վերոհիշյալ արձանագրությունները իրենց տրամաբանությամբ վտանգում են հայ ժողովրդի գոյությունը հայրենի բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում:

Ստորագրելով վերոհիշյալ արձանագրությունները Հայաստանի իշխանությունները օգնում են վավերացնել Հայաստանի և Թուրքիայի միջև այսօր գոյություն ունեցող, սակայն իրավական հիմք չունեցող՝ քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի երկկողմ հանցավոր համաձայնությամբ հայ ժողովուրդին պարտադրված սահմանը, անտեսելով Սևրի պայմանագրով հաստատագրված և ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանին հատկացված տարածքը: Այս քայլը հարվածելու է հայկական իրավունքների պահանջատիրությանը, որն իր մեջ ներառում է Արևմտյան Հայաստանի վերադարձ, ցեղասպանության դատապարտում, ցեղասպանության հետևանքների վերացում:

Հայոց նորագույն զինյալ ազատագրական պայքարը սկսվել էր Սփյուռքում 1970-ական թթ. նպատակ ունենալով ազատագրել Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքները: Այդ պայքարը շարունակվելու է մինչև վերջնական նպատակի իրագործումը:

«Ուխտ Արարատի», ՀԱՀԳԲ-ի (ԱՍԱԼԱ) ազատամարտիկների և նախկին քաղբանտարկյալների կազմակերպություն
8 սեպտեմբեր, 2009թ.

Հայաստանի Հանրապետության իշխանություններին և քաղաքական վերնախավին

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև Շվեյցարիայի միջնորդությամբ նախաստորագրված արձանագրությունների կապակցությամբ

Արձանագրություններում առկա հիմնական վտանգը.

Սույն արձանագրությունների անաչառ քննարկումներում, ընդհանուր առմամբ, հատուկ նշվում է այն մասին, որ դրանք պարունակում են նախապայմաններ, բայց ուշադրություն չի դարձվում այն փաստի վրա, որ արձանագրությունների ստորագրմամբ Թուրքիան, Ադրբեջանը և այլ շահագրգիռ երկրներ և միջազգային կառույցներ իրական լծակներ են ստանում միջամտելու ԼՂՀ-ի, ՀՀ-ի ներքին գործերին, խառնվելու ԼՂՀ-ի և ՀՀ-ի միջպետական հարաբերություններին: Ավելին, ստանում են ճնշման, ներգործության, միջամտության, անգամ ԼՂՀ-ի և ՀՀ-ի դեմ ագրեսիա և պատերազմ սկսելու «իրավական հիմքեր»:

Քաղաքագետներից ու վերլուծաբաններից շատերը փորձում են համոզել, թե այս համաձայնությունը անհրաժեշտ է ապագայի լուրջ վտանգներից պաշտպանելու համար հայությունն ու Հայաստանը: Սակայն իրողությունը ճիշտ հակառակն է: Արձանագրությունների վավերացումն է վտանգելու Հայաստանն ու հայությունը, որովհետև հարվածելու է Հայաստանի անկախությանն ու ինքնիշխանությանը և զրկելու է նրան ինքնապաշտպանության բնական և օրինական բոլոր միջոցներից:

Արձանագրություններին որպես այլընտրանք առաջարկվող քայլերի հիմնավորումը.

Անտարակույս, պետությունների և ազգերի միջև հակամարտությունների կարգավորման ճանապարհներից մեկը բանակցելն է, ճիշտ է՝ հաճախ կասկածելի ու վիճահարույց սկզբունքների ու որոշումների ընդունմամբ[1]: Մյուսը՝ միջազգային իրավական նորմերին ու սկզբունքներին հետևելը՝ միջազգային իրավական ատյանների օրինական լուծումներով: Բայց հանցագործն ու զոհը, ագրեսորն ու ագրեսիայի ենթարկվածը չէ որ պետք է բանակցեն. հանցագործության վերաբերյալ վերջնական որոշում կայացնում են միջազգային իրավասու ատյանները՝ ՄԱԿ-ի Միջազգային դատարանը և ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը:

Մինչ այդ, բոլոր ձևաչափերով ընթացող՝ գաղտնի, թե հայտնի բանակցությունները, լավագույն դեպքում, կարող են ձգձգել առկա խնդիրների լուծումները, իսկ դեպքերի ոչ բարենպաստ զարգացման պարագայում՝ հրահրել նոր ագրեսիա ու ցեղասպանական գործողություն: Ակնհայտ է, որ հրադադարից սկսած բոլոր բանակցությունների «առաջընթացի» ու «ձեռքբերումների» վերաբերյալ հրապարակումներն ու հայտարարությունները հանգել են պատերազմի ու ցեղասպանության միջնորդված, թե բացահայտ քարոզչության[2]:

Սա է իրողությունը, որն այսօր արդեն անհնար է չտեսնել:

Ազգերն ու ժողովուրդները չէ որ քարոզում, հրահրում, կազմակերպում ու սանձազերծում են հակամարտություն, պատերազմ և ցեղասպանություն: Այդ ամենը անում են տերությունների քաղաքական վերնախավերը՝ որոշակի անուն, ազգանուն և պաշտոն ունեցող անձինք՝ ստի, կեղծիքի, խաբեության և ապատեղեկատվության տարածման միջոցով: Ահա այսօր էլ, նախաստորագրված արձանագրությունները ողջունած երկրների ու միջազգային կառույցների, այդ թվում՝ ԱՄՆ պետքարտուղարության, ԵՄ արտաքին հարաբերությունների, ԵԽԽՎ-ի, ԵԱՀԿ-ի ու ՆԱՏՕ-ի ղեկավարության, Ռուսաստանի, Ֆրանսիայի արտաքին գործոց գերատեսչությունների քաղաքական վերնախավերը՝ տարածաշրջանում կուտակված խնդիրներին միջազգային իրավունքում ընդունված նորմերի և սկզբունքների համաձայն լուծումներ տալու փոխարեն, գիտակցաբար, թե ոչ, ձգձգում են հակամարտությունների իրավական արդարացի հանգուցալուծումները՝ ընթացքում իրականացնելով ցեղասպանություն՝ իրականացրած հանցագործին հովանավորելու, Կովկասյան տարածաշրջանում նոր ագրեսիա, պատերազմ ու ցեղասպանական գործողություն քաջալերելու քարոզչություն և քաղաքականություն[3]: Հիշենք, որ 1948թ. ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որեւէ արարք կատարած անձինք ենթակա են պատժի՝ անկախ այն բանից, նրանք սահմանադրությամբ պատասխանատու ղեկավարներ են, թե պաշտոնատար կամ մասնավոր անձինք»:

Արձանագրություններին փոխարինող հիմնական առաջարկը.

Հայաստանի Հանրապետության իշխանություններին և քաղաքական վերնախավին առաջարկում ենք հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու և Արցախյան հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու համար ընտրել հակամարտությունների և հարաբերությունների կարգավորման միջպետական հարաբերությունների պրակտիկայում առկա, ներկայումս միակ, առնվազն հարյուրամյա փորձով արդարացված՝ միջազգային իրավունքի և օրինականության ուղին.

1915-23 թթ. Հայոց ցեղասպանությունը դատապարտելու և ցեղասպանության հետևանքները վերացնելու հայցերով դիմել ՄԱԿ-ի Միջազգային դատարան, համաձայն՝

- ՀՀ Մայր Օրենքի՝ Հայաստանի Անկախության Հռչակագրի պահանջի (23.08.1990 թ.), և
- ՀՍՍՀ Գերագույն Խորհրդի Օրենքի Որոշման (22.11.1988 թ.)

«Ուխտ Արարատի», Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի (ԱՍԱԼԱ) ազատամարտիկների և նախկին քաղբանտարկյալների կազմակերպություն

21 սեպտեմբերի, 2009 թ.

---

1. Տե՛ս, Առաջարկի հավելված 2. ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի անդամ Ադամ Շիֆի հայտարարությունը. «Ճշմարիտ հաշտեցումը հայ և թուրք ժողովուրդների միջև տեղի կունենա, երբ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը»:
2. Տե՛ս, Առաջարկի հավելված 1:
3. Տե՛ս, Առաջարկի հավելված 2:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հայկական Ժողովրդային Շարժում
Կենտրոնական Խորհուրդ

ՀՀ նախագահ, հարգարժան պրն. Սերժ Սարգսյան,

Հարգելով Ձեր ներդրումն Արցախյան պայքարում, ՀՀ-ի տարածաշրջանային և միջազգային հավասարակշիռ ու ճկուն քաղաքականություն վարելու ձգտումը, ուղղում ենք այս բաց նամակը Հայկական Ժողովրդային Շարժման՝ Հայության անտեսված և ոտնահարված իրավունքների ճանաչման ու վերականգնման գործում, Հայ նորագույն ազգային ազատագրական պայքարում իր ներդրումը ունեցած կազմակերպության անունից՝ հանուն Հայության միասնության, հայ նորաստեղծ պետականության անվտանգության, վերջին հազարամյակում մեր աննախընթաց նվաճումի՝ Արցախի Հանրապետության, և կատարում ենք հետևյալ նշումներն ու առաջարկությունները, ցավ հայտնելով, որ նման զգայուն հարցի վերաբերյալ, կացության թելադրանքով, լուռ խորհրդակցությունների փոխարեն, հարկադիր կատարում ենք հրապարակային հայտարարություն:

Հարգարժան պրն. Նախագահ,

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հարցը, Եղեռնի ճիշտ նախօրեին «ճանապարհային քարտեզի» մշուշոտ ներկայացնելը, ՀՀ-ի և, ընդհանրապես, Հայության անվտանգությանն առնչվող այս գլխավոր հարցի նկատմամբ ՀՀ իշխանությունների անընդունելի երկար լռությունը, թուրքական մամուլն ու թուրք պետական գործիչների հայտարարությունները տեղեկության միակ աղբյուր հանդիսանալը, այնուհետև նախաստորագրված արձանագրությունների բովանդակությունը, չքննարկված արձանագրությունները փոփոխման ենթակա չլինելու մասին կատարված հայտարարությունները, նախաստորագրություններից հետո միայն ՀՀ-ի և Սփյուռքի քաղաքական ու հասարակական կազմակերպություններին և, ընդհանրապես, հանրությանը տեղյակ պահելը, աճապարանքով ու ժամանակային ճնշման ներքո քննարկումները, Սփյուռքի հետ ցուցադրական խորհրդակցությունները, իսկ մյուս կողմից՝ նախաստորագրվածի վերաբերյալ առանց լուրջ քննարկումների անզուսպ հայտարարությունները, տեղատարափ մեղադրանքներն ու զրպարտությունները, երկրի անվտանգությանն առնչվող հարցի նկատմամբ մրցակցային վերաբերմունքը, զգացմունքային հայտարարությունները, պետական ու առանձին կազմակերպությունների դիտանկյունը հավասարեցնելը, Սփյուռքի ու ՀՀ-ի քաղաքականությունն ու մարտավարությունը նույնացնելն ստեղծել են լարվածություններ, շփոթություններ, անվստահության մթնոլորտ, որն անախընթաց պառակտումներ ու առճակատումներ է առաջացրել Հայության մեջ թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում և թե՛ ՀՀ-Սփյուռք հարաբերություններում:

Հարգարժան Նախագահ,

Ընբռնումով մոտենալով Ձեր նախաձեռնության նկատմամբ, ոչ դեմ ենք ՀՀ-Թուրքիա շրջահայաց և զգուշավոր դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, և ոչ էլ ապաշրջափակմանը, այն ՀՀ-ի օրինական և բնական իրավունքն ու պահանջը համարելով, չնայած որ, այս հարցում, ՀՀ-ին վերաբերող բազմաթիվ ազդակների պատճառով, լուրջ վերապահումներ ու մտահոգություններ ունենք:

Սակայն նախաստորագրված արձանագրություններում առկա են ավելի քան մեկ տասնյակ ոչ միայն պայման, այլև պարտավորություն, որոնցից այստեղ նշում ենք կատարում միայն գլխավորի մասին:

Հարգարժան Նախագահ,

ՀՀ ԱԳՆ-ի հիմնական պաշտոնակատարները, տարբեր առիթներով, փորձել են համոզել հայ հանրությանը, իբրև թե ՀՀ-ը ՄԱԿ-ին անդամակցելով ինքնաբերաբար արդեն ճանաչել է Թուրքիայի հողային ամբողջականությունը: Նրանք պնդում են, որ Հայաստանը նախապես ստորագրած միջպետական երկու պայմանագրերով՝ Ալեքսանդրապոլով ու Կարսով, արդեն իսկ ճանաչել է ՀՀ-Թուրքիա ներկայիս սահմանը, ուստի և այս նոր փաստաթղթով ՀՀ-ը քաղաքական նոր ակտ չի կատարում և ընդամենը ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ է նախապես կատարվածը, ինչը բոլորովին չի համապատասխանում իրականությանը:

Ինչպես գիտեք, Ալեքսանդրապոլի և Կարսի «պայմանագրերն» իրենցից պայմանագրային արժեք չեն ներկայացնում, միջազգային իրավունքի առումով նույնիսկ պայմանագիր չեն համարվում, որովհետև 1920-21 թթ. Հայաստանի դեմ պատերազմող թուրքական ապստամբող խումբը պետության հանգամանք չուներ: Թուրքիայի Հանրապետությունը հիմնադրվել է ընդամենը 1923 թ. հոկտեմբերի 29-ին և հետագայում ճանաչվել որպես պետություն: ՀԽՍՀ-ը նույնպես, միջազգայնորեն երբևէ պետական հանգամանք չի ունեցել, ուստի չէր էլ կարող միջպետական համաձայնություն ստորագրել:

ՄԱԿ-ին անդամակցելով՝ երկրները միմյանց սահմաններն ու հողային ամբողջականությունը ճանաչելու վերաբերյալ կատարված հայտարարությունները առավել ևս անհիմն են, որովհետև ՄԱԿ-ին անդամակցելը ոչ միայն սահմաններ ճանաչելու, այլ նույնիսկ պետություններ ճանաչելու պարտավորություն չի ստեղծում: Այս հարցի ամենապարզ օրինակը Իսրայելի և իր ավելի քան մեկ տասնյակ հակառակորդների պարագան է: ՄԱԿ-ի անդամ երկրների օրինակները շատ ավելի խոսուն են, երբ հարյուրավոր երկրներ հողային և սահմանային վեճեր ունեն իրար հետ, ինչն ապացուցում է վերը նշված պնդումների անհիմն լինելը:

ՀՀ արտգործնախարարի այն պնդումները, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ենթադրում է սահմանների ճանաչում, նույնպես անհիմն են և անճիշտ: Աշխարհում նման նախընթաց ոչ միայն գոյություն չունի, այլ ինչպես գիտեք Թուրքիան սահմանային հարցեր է ունեցել և ունի գրեթե իր բոլոր հարևան երկրների հետ, ինչը չի խանգարել կամ խոչընդոտել դիվանագիտական հարաբերություններ հաստատելուն:

Հարգարժան պրն. նախագահ,

ՀՀ ԱԳՆ-ը, քողարկելու համար դավաճության համազոր իրենց այս արարքը, նախաստորագրված փաստաթղթերից սխալ թարգմանություն է տրամադրել հայ հանրությանը՝ փորձելով մեղմացնել, քողարկել իր կատարածը և հանցավոր կերպով մոլորեցնել հայությանը:

Նախաստորագրվածի անգլերեն բնագրում բառացիորեն գրված է.

«ՀԱՍՏԱՏԵԼՈՎ երկու երկրների միջև գոյություն ունեցող ՆԵՐԿԱ սահմանի փոխադարձ ճանաչումը» (1)

Իսկ ԱԳՆ-ի ներկայացրած թարգմանությունում կարդում ենք.

«ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՎ երկու երկրների միջև գոյություն ունեցող ԸՆԴՀԱՆՈՒՐ սահմանի փոխադարձ ճանաչումը»

Ճակատագրական հետևանքներ ունեցող այս փաստաթղթում, ՀԱՍՏԱՏԵԼ բառը ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼ թարգմանելով, պրն. Նալբանդյանի թիմն ի՞նչ նպատակ է հետապնդում բացի վերոնշյալից:

Զարմանալի է ու հատկանշական, որ նախաստորագրված այս փաստաթղթով, ճանաչվում է ոչ միայն ՀՀ-Թուրքիա ներկայիս սահմանը, այլ նաև տարածաշրջանի այլ պետությունների՝ իմա Ադրբեջանի և այլոց սահմանները՝ «Վերահաստատելով հավասարության, ինքնիշխանության, ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ներքին գործերին չմիջամտելու, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱՆԽԱԽՏԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՐԳԵԼՈՒ իրենց երկկողմ և ԲԱԶՄԱԿՈՂՄ պարտավորությունները»:

Հաստատելով այս արձանագրությունները, ՀՀ-ն առաջին անգամ, Ձեր կողմից ստորագրվելիք միջպետական մի փաստաթղթով, ճանաչելու է ՀՀ-Թուրքիա և տարածաշրջանի այլ պետությունների ներկայիս սահմանները:

Հարգարժան նախագահ,

Քաղաքական այս ակտը կատարելով՝ Դուք կոտրելու եք 7 միլիոն սփյուռքահայերի և 3 միլիոն ՀՀ քաղաքացիների դիմադրության ոգին ու արդարությունը վերահաստատելու կամքը: Ցեղասպանության ճանաչումն այլևս ո՞ւմ է մխիթարելու, ի՞նչ արժեք ունի, այլևս ինչի՞ է ծառայելու, եթե ՀՀ-ը խաղաղ պայմաններում, ինքնակամորեն, առանց գրեթե ոչ մի լուրջ բան շահելու, ոչնչացնում է արդարության և ոտնահարված իրավունքի վերահաստատման տեսլականը:

Ստորագրելով այս փաստաթուղթը, ՀՀ-ը տալիս է ամեն ինչ, զոհասեղանին դնելով Հայաստանի անցյալն ու ներկան, փոխարենը ստանալով գրեթե ոչինչ, իսկ սահմանի բացման հարցում ևս չունենալով վերահսկելու որևէ մեխանիզմ՝ Թուրքիայի ցանկացած հաջորդական մանևրների դեպքում ՀՀ-ում առաջանալու է ոչ միայն իշխանությունների, այլ նաև պետական ճգնաժամ:

Տարօրինակությունը ՀՀ ԱԳՆ-ի այն մոտեցումն է, իբրև թե սահմանի բացումը միայն մեզ է անհրաժեշտ, հետևաբար մենք պետք է վճարենք այդ բոլորի գինը:

Ինչո՞ւ են կատարվում միակողմանի այս զիջումները, երբ ՀՀ-ը զգալի բանակցային առավելություններ ունի, որոնց գլխավորն է Արցախում մեր դիրքը, Ցեղասպանության ճանաչման օղակը և Ցեղասպանությունից բխող հետևանքները, որ օրեցօր ավելի են սեղմում և մտահոգում Թուրքիային:

Ինչո՞ւ են կատարվում միակողմանի այս զիջումները, երբ, բացի վերը նշվածներից, գիտենք, որ հարաբերություններ հաստատելու և սահմանի բացման հարցում Թուրքիայի հետաքրքրությունը ոչ թե ՀՀ-ի խղճուկ շուկան է, այլ անհամեմատելիորեն շատ, քան մեր հետաքրքրությունը, որն է տարածաշրջանում աշխարհաքաղաքական շահ և գերակայություն ապահովելը:

Թուրքական 16-ամյա շրջափակումը ոչ միայն չի կարողացել ծնկի բերել ՀՀ-ին, այլ առաջին հերթին վնասել է հենց իր աշխարհաքաղաքական և տնտեսական շահը:

Ապրիլի 22-ից, դժբախտաբար, ՀՀ-ը Թուրքիային հնարավորություն է ընձեռնել իր ռազմավարական քաղաքականությունն իրագործել մեր հաշվին, մինչդեռ իր դիմաց մենք ստացել ենք ոչինչ, հաշվի չառնելով պետական մակարդակով գրեթե ամեն օրյա հակա ՀՀ և հակահայ քայլերը:

Հարգարժան պրն. նախագահ,

Իրապաշտ լինելով՝ Դուք տեղյակ եք, նույնպես և ունակ եք ամբողջովին հասկանալու, որ վերջին 35 տարիների ընթացքում ինչ գերմարդկային զոհողությունների գնով, Հայկական հարցը, մոռացված ու պատմական մի հարցից թեժ քաղաքական հարցի վերածվեց: Այսօր ոչ միայն բազմաթիվ մեծ ու փոքր պետություններ, այլև թուրք, առավել առողջ մտայնության տեր մարդիկ, սկսել են խոստովանել և ընդունել Հայոց Ցեղասպանության իրողությունը:

Նախաստորագրված փաստաթուղթը, Հայկական Հարցի կորիզը կազմող ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, դարձյալ ուղարկում է ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՐԿԸ, և ոչ միայն կատարվել է այս, այլև ինչպես բնագրում է գրվել՝ «պատմական փաստաթղթերի և արխիվների գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների ՀԱՍԱԿԵՑՄԱՆ ու առաջարկների ձևակերպման համար…»:

Հարգարժան նախագահ,

Բարեբախտաբար, այսօր, կարող ենք ասել, որ ոչ միայն հայ պատմաբանները, ոչ միայն մենք բոլորս, այլ գրեթե ամբողջ աշխարհը գիտակից է Հայության դեմ իրագործված դաժան Ցեղասպանության իրողությանը, վերջապես հայոց ողբերգությանը վերաբերող փաստերը «հայկական» փաստեր չեն, ուստի և հայ պատմաբանները, այդ փաստերը ինչպես տրամադրում են բոլորին, եթե ցանկություն ունեն ստանալու, կարող են տրամադրել նույնպես թուրքերին: Իսկ ի՞նչ է նշանակում արձանագրությունում տեղադրված փաստաթղթերի գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով խնդիրների ՀԱՍԱԿԵՑՈՒՄԸ:

Պատմաբանների կողմից խնդիրների ՀԱՍԱԿԵՑՈՒՄ-ն ինքնին նշանակում է միայն մեկ բան՝ որև է մինչ այժմ ներկայացված փաստարկների, մեղմ ասած ԱՆՀԱՍԱԿՈՒԹՅՈՒՆԸ, անորոշությունը, իսկ գիտական և անկողմնակալ բառերը բացեիբաց խոսում են այն բանի մասին, որ մինչ այժմ կատարվածը ոչ-գիտական և կողմնակալ է եղել:

Հայությունն իհարկե պատճառ ունի ուրախանալու և իրեն հպարտ զգալու, որ Թուքիան այսօր ոչ միայն պատրաստակամ է, այլև ստիպում է հայերին համատեղ քննարկել Հայոց ցեղասպանության փաստերը: Երևույթ, որ հայության համար երազանք էր 70-ական թվականներին, իսկ այսօր մեր կողմից դրա ընդունելը, այլևս բոլորովին ժամանակավրեպ է և նահանջ է նշանակում:

Հարգարժան ՀՀ նախագահ պրն. Ս. Սարգսյան,

Ինչպես նշեցինք, ողջունում ենք ՀՀ-ի տարածաշրջանային և միջազգային հավասարակշիռ ու ճկուն քաղաքականություն վարելու Ձեր ձգտումը և, այս պարագայում, դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և սահմանի շրջափակման ուղղությամբ սերտված և զգուշավոր քայլերը, սակայն առաջարկում ենք.

-նախաստորագրված փաստաթղթի բովանդակությունը բառ առ բառ մասնագիտական քննարկման առարկա դարձնելով՝ վերատեսության ենթարկել:

-Առանց ՀՀ-ի վարչական հարցերին միջամտելու հավակնություն ունենալու, առաջարկում ենք, որ պրն. Նալբանդյանին ու իր անմիջական գործակիցներին իրենց թույլ տված ծանր, կոպիտ և համահայկական մասշտաբով սխալների համար պաշտոնից հեռացնել: Պրն. Նալբանդյանն այլևս դրականորեն չի ընդունվելու, մանավանդ Սփյուռքում:

Ստորագրելով այս փաստաթուղթը, Դուք ոչ միայն Վասակի իմաստությամբ չեք առաջնորդվելու, այլ միայն սպանելու եք Վարդանանց ոգին:

Ուստի, եթե կուզեք, որ ՀՀ զինանշանի Արարատն ադրբեջանական դրոշի լուսնի նման անհասանելի չլինի, առանց հիմնական փոփոխությունների ենթարկելու մի ստորագրեք նախաստորագրված, եթե կուզեք, դավաճանական այս փաստաթուղթը:

---

(1) Confirming the mutual recognition of the existing border between the two countries as defined relevant treaties of international law.

07.10.2009

ՀՀ քաղաքական դաշտի արձագանքները

ՀԱԿ հայտարարություն հայ-թուրքական հարաբերությունների հաստատման Արձանագրությունների մասին

1. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը բխում է երկու երկրների և ժողովուրդների, ինչպես նաև տարածաշրջանային խաղաղության և կայունության շահերից:

2. Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման և երկկողմ հարաբերությունների զարգացման վերաբերյալ արձանագրությունները զգալի տեղաշարժ են այդ ուղղությամբ:

3. Անընդունելի է հայ և թուրք պատմաբանների միջկառավարական ենթահանձնաժողովի ստեղծման մասին դրույթը, որը կասկածի տակ է դնում Հայոց ցեղասպանության իրողությունը:

4. Մտահոգություն է հարուցում երկու երկրների խորհրդարանների կողմից նշված փաստաթղթերի վավերացման պայմանը, որը Սերժ Սարգսյանին հնարավորություն է տալիս ենթահանձնաժողովի ստեղծման պատասխանատվությունը կիսել խորհրդարանի հետ, իսկ Թուրքիային՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծված չլինելու պատճառաբանությամբ, ձգձգել վավերացման հարցը և դրանով հետաձգել հայ-թուրքական սահմանի բացումը:

Հայ ազգային կոնգրեսի Կենտրոնական գրասենյակ
01.09.2009

---

12 կուսակցության համատեղ հայտարարությունը

Առանց նախապայմանների Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման Հայաստանի նախաձեռնությունը լրջագույն քայլ էր և պետք է դառնար միակ զիջումը, որ կատարում է Ցեղասպանություն վերապրած, շրջափակման ենթարկված կողմը: Հրապարակված արձանագրությունների բովանդակությանը չեն համապատասխանում և մեր ժողովրդի զգոնությունը թուլացնելուն են կոչված այն պնդումները, թե իբր դիվանագիտական հարաբերությունների հաստատման, Թուրքիայի կողմից ցամաքային շրջափակման վերացման գործընթացն իրականացվում է առանց թուրքական նախապայմանների բավարարման:

Ակնհայտ իրողություն է, որ

-Հայաստանի և Թուրքիայի միջև առկա սահմանները ամրագրող այլ պայմանագիր, բացի Մոսկվա-Կարս փոխկապակցված և ապօրինի պայմանագրերից գոյություն չունի: Ուստի ճանաչելով այդ սահմանները՝ մենք առաջին անգամ, որպես անկախ պետություն, վավերացնում ենք այդ պայմանագրի՝ Թուրքիայի համար ամենաանհրաժեշտ հատվածը: Այդպիսով՝ բավարարվում է նրա գլխավոր նախապայմաններից մեկը՝ այսօրվա սահմանների ճանաչումը:

-Հնարավորություն տալով ձևավորել պատմական հարթության վրա քննարկումներ իրականացնող ենթահանձնաժողով, չստեղծելով անհրաժեշտ որևէ նախադրյալ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման համար, կասեցվում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, նոր հնարավորություններ են առաջանում Թուրքիայի կողմից իրականացվող ուրացման քաղաքականության ակտիվացման համար: Այդպիսով՝ բավարարվում է Թուրքիայի հաջորդ պահանջը՝ կասեցնել Ցեղասպանության ճանաչման՝ վերջին ժամանակներում թափ առած միջազգային գործընթացը:

-Հայ-թուրքական հարաբերությունների և Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացների ժամանակային առումով փաստացի փոխպայմանավորումը, տարածքային ամբողջականության սկզբունքի ամրագրմանը զուգահեռ ազգերի ինքնորոշման իրավունքի հարգման պարտավորության բացակայությունը լայն ճանապարհ են հարթում վերոնշյալ գործընթացների փոխկապակցման և դրանց հանգուցալուծման գործում Թուրքիայի դերակատարության մեծացման համար: Այսպիսով՝ Թուրքիան հնարավորություն է ձեռք բերում հասնելու իր հաջորդ նախապայմանի բավարարմանը՝ պահանջելով Հայաստանից և միջնորդներից իրեն ձեռնտու զարգացումներ ապահովել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում:

-Վերջապես, միակողմանիորեն փակելով սահմանները և այն բացելու երկկողմ որոշում արձանագրելով՝ Թուրքիան սահմանների մինչ օրս փակ լինելու պատասխանատվությունը, փաստորեն, կիսում է Հայաստանի հետ:

Մենք՝ ներքոստորագրյալ քաղաքական ուժերս, պահանջում ենք չստորագրել հրապարակված արձանագրություններն այս տեսքով և իրականացնել վերոնշյալ վտանգները չեզոքացնող փոփոխություններ:

ՀՅ Դաշնակցություն-Ա. Ռուստամյան, Ժողովրդական Կուսակցություն-Տ.Կարապետյան, ՀՌԱԿ-Հ. Առաքելյան, «Նոր Ժամանակներ»-Ա.Կարապետյան, «Ժառանգություն»-Ա.Մարտիրոսյան, «Գոյամարտ»-Ս. Ղազարյան, «Մայր Հայրենիք»-Կ.Թումանյան, ՀԱՍԿ-Մ.Շահվերդյան, «Միավորված Հայեր»-Ռ.Ավագյան, «Ազգային միասնության Ուխտ»-Ռ.Համբարձումյան, Հայաստանի Դեմոկրատական կուսակցություն-Ա.Սարգսյան, Հայ Արիական Միաբանություն-Ա.Ավետիսյան
06.10.2009

«Սարդարապատ» շարժման նախաձեռնող խմբի հայտարարությունը (կրճատ տարբերակ)

...Զգոնության և զգաստության կոչով դիմում ենք Արցախում բնակվող մեր հայրենակիցներին: Ձեզ փորձելու են մոլորեցնել, վախեցնել պատերազմի վերսկսումով, հրապարակավ այդ քարոզչությանը ընդդիմացողներին սպառնալ տարաբնույթ ձևերով: Որպեսզի ռեժիմի սկսած քարոզչական գործընթացը չհասնի այդ հանգրվանին, շատ է կարևորվում Արմեն Սարգսյանի կատարած քայլը և անհրաժեշտ է դավաճանական քայլերը վիժեցնելու համար նախահարձակ լինել և քարոզչական դաշտում «օձին խեղդել բնում»:

Եվ այդժամ ղողանջելու են զանգերը:

Այդպես եղավ 1988-ին, այդպես կլինի նաև հիմա:

Որևէ անձ, որևէ ուժ ունակ չէ հաղթել մի ժողովրդի, եթե վերջինս չի ցանկանում պարտվել:

Արցախյան Ազատամարտի տարիներին հայ ժողովուրդը ցույց տվեց, որ պատրաստ է պատերազմելու և հաղթելու թվապես գերակշռող թշնամուն: Այդ պատերազմում հաղթած հայորդիները և արդեն հասու նրանց զավակներն այսօր վճռական են առավել քան երբևէ պաշտպանելու Հայրենիքի յուրաքանչյուր թիզ հողը և ներքին և արտաքին թշնամուց:

Սարդարապատի հաղթական ոգին է թևածում հայոց Երկնակամարում: Տեր լինենք Ղևոնդ Ալիշանի իմաստուն պատվիրանին. «Թաղեցեալք լինիմք և ոչ խոնարհիմք»:

«Սարդարապատ» շարժման նախաձեռնող խումբ
30.10.2009

ԵՐԵՔ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

2009-ի ապրիլի 23-ին ստորագրված հայ-թուրք-շվեյցարական «ճանապարհային քարտեզի» ստեղծած մտահոգությունների և հայ-թուրքական հարաբերություններում 20-րդ դարի սկզբին գործարկված նախադեպերի կապակցությամբ

Հայ-թուրք-շվեյցարական պայմանավորվածությունները և «Ճանապարհային քարտեզի» ստորագրումը 2009-ի ապրիլի 23-ին բնականաբար մտահոգություններ են առաջացրել համայն հայության ամենալայն շրջանակներում՝ ամբողջ աշխարհում: Հասկանալու համար հնարավոր վտանգներն ու սպառնալիքները հարկավոր է ուսումնասիրել դիվանագիտական քայլերի այն ամբողջ փաթեթը, որ նախկինում գործարկվել է հայ-թուրքական հարաբերություններում՝ սկսած 1918 թվականից: Նախապես ասենք, որ ներկայացնելու ենք երեք պայմանագրեր[1]՝ Բաթումի, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի, որոնք երեքն էլ օրինական չեն՝ ըստ միջազգային իրավունքի սկզբունքների[2]:

1918-ին՝ Սարդարապատի հաղթանակից մեկ շաբաթ անց՝ հունիսի 4-ին, Բաթումիում հայկական պատվիրակությունը Ալեքսանդր Խատիսյանի գլխավորությամբ կնքեց կապիտուլյացիայի պայմանագիր թուրքերի հետ, որը պատմությանը հայտնի է Բաթումիի պայմանագիր անունով: Այդ պայմանագրում և հետագայում նույն Խատիսյանի կնքած մեկ այլ 1920-ի դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրում ներառված դրույթներից շատերը զարմանահրաշ կերպով վերակենդանացման նշաններ են ցույց տալիս մեր օրերում:

Յուսուֆ Քեմալ - Գեորգի Չիչերին պակտը. 16 մարտ, 1921թ., Մոսկվա

Հիշենք դրանք՝

Բաթումի պայմանագրի 4-րդ հոդվածում ասվում է. «Օսմանյան կայսերական կառավարությունը պարտավորվում է զենքի ուժով օգնություն ցույց տալ Հայկական Հանրապետության կառավարությանը այն դեպքում, եթե վերջինս այդ օգնությունը կխնդրի նրանից՝ երկրում կարգն ու հանգստությունն ապահովելու համար[3]»:

5-րդ հոդվածում. «Հայկական Հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործուն կերպով հակազդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չգինվի իր տերիտորիայի սահմաններում, ինչպես և զինաթափել ու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ[4]»:

11-րդ հոդվածում. «Հայկական Հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի սույն պայմանագրի ստորագրումից հետո Բաքու քաղաքից անհապաղ էվակուացվեն այնտեղ գտնվող բոլոր հայկական զինվորական ուժերը, ինչպես և ապահովել, որ այդ էվակուացումը առիթ չտա որևէ ընդհարման[5]»:

Ալեքսանդրապոլի պայմանագրի 4-րդ հոդվածում ասվում է. «…Հայաստանի կառավարությունը համաձայնում է, բացի թեթև և երկրի կարգն ու անվտանգությունը պաշտպանելու համար բավարար քանակությամբ զենք ունեցող ժանդարմերիայից, սահմանների պահպանության համար չունենալ այլ ռազմական ուժ, բացի 1500 զինվորից բաղկացած ջոկատից՝ 8 լեռնային կամ դաշտային հրանոթով և 20 գնդացիրով: Զինապարտությունը Հայաստանում պարտադիր չի լինի…[6]»:

5-րդ հոդվածում. «Իր կողմից Թուրքիայի... կառավարությունը պարտավորվում է իր զինված օգնությունը տրամադրել Հայաստանին, երբ այդ պահանջի արտաքին կամ ներքին վտանգը և երբ Հայաստանի Հանրապետությունը դիմի իրեն մատնանշված խնդրով[7]»:

8-րդ հոդվածում. «Թուրքիայի... կառավարությունը հավաստիացնում է, որ անկեղծորեն ձգտում է օգնություն և աջակցություն ցույց տալ Հայաստանի կառավարությանը՝ նրա հեղինակության զարգացման և ամրապնդման գործում[8]»:

11-րդ հոդվածում. «Պայմանավորվող կողմերը պարտավորվում են երկու կողմերին հնչպես սայլուղիներով, այնպես էլ մյուս ճանապարհներով մեկ երկրից մյուսը մարդկանց ու ապրանքների ազատ տեղափոխության իրավունք տալ և հրաժարում ինչպես ծովից, այնպես էլ որևէ ուրիշ երկրից եկող ապրանքների վրա դրվող տրանզիտային մաքսերից: Հայաստանի կառավարությունը պարտավորվում է հրաժարվել տրանզիտային մաքսերի ամեն տեսակ իրավունքներից այն ապրանքների, սայլերի, վագոնների վերաբերմամբ, որ Թուրքիայից տրանզիտով գալիս են Ադրբեջան, Պարսկաստան, Վրաստան և ետ են դառնում[9]»:

12-րդ հոդվածում. «Թուրքիայի... կառավարությունը, չխախտելով ներկա պայմանագրով Հայաստանին վերապահված իրավունքները, իրավունք կունենա ռազմական միջոցներ ձեռք առնել Հայաստանի... տերիտորիայում»:

Սրանց հավելենք 1921-ի մարտի 16-ի **Մոսկվայի «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության պայմանագրի»** մի քանի հոդվածներ:

8-րդ հոդված. «Պայմանավորվող երկու կողմերը պարտավորվում են իրենց տերիտորիաներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի, կամ նրա տերիտորիայի մի մասի կառավարության դերն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև պարտավորվում է իրեն տերիտորիայում արգելել այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարը մյուս երկրի դեմ[10]: Ռուսաստանն ու Թուրքիան փոխադարձության պայմանով ստանձնում են նույնպիսի պարտավորություն նաև Կովկասի Սովետական Հանրապետությունների վերաբերմամբ»:

9-րդ հոդվածում. «Երկու երկրների միջև հաղորդակցությունների անընդհատությունն ապահովելու համար, Պայմանավորվող կողմերը պարտավորվում են փոխադարձ համաձայնությամբ երկաթուղային, հեռագրային և հաղորդակցության այլ միջոցները պահպանելու և որքան հնարավոր է արագ զարգացնելու, ինչպես նաև առանց որևէ խափանումների երկու երկրների միջև մարդկանց ու ապրանքների ազատ փոխադրումն ապահովելու նպատակով ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները[11]»:

15-րդ հոդվածում. «Ռուսաստանը պարտավորվում է Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրում անպատճառ ճանաչվեն սույն Պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջաբար վերաբերում են իրենց[12]»:

Ուշադիր ընթերցողի համար ամեն ինչ հստակ է, պարզ և մեր մեկնաբանությունների կարիքը չկա բնավ: Պարզապես նշենք՝ Ալեքսանդր Խատիսյանը[13] թուրքերին զիջեց այն ամենը՝ ինչ հնարավոր էր զիջել: Ռուսաստանը իր հերթին

հայերի անունից Թուրքիային զիջեց այն ամենը՝ ինչ կուզենային զիջել հենց իրենք՝ եվրոպական գերտերություններըն[14]: Ահա այս նախադեպային գործընթացներն ու պայմանագրերում ներառված հոդվածներն են, որ չեն թողնում հանգիստ հետևել հայ-թուրքական նոր պայմանավորվածություններին ու հավատալ, թե «ճանապարհային քարտեզում» ՀՀ-ն չի արել ոչ մի զիջում Թուրքիային: Պարզապես անհավատալի է, որ հին խաղացողների՝ եվրոպական գերտերությունների, այժմ ԵՄ-ի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի ակնհայտ ճնշումների տակ ձեռք բերված նոր պայմանավորվածություններում Թուրքիան նախապայմաններ չի առաջադրել ՀՀ-ին և պահպանելով «ազնիվ խաղի» կանոնները՝ փորձել է հարաբերությունները բարելավել ՀՀ-ի հետ:

Բայց շարունակենք մեր դիտարկումները.

«Նոյան Տապանը» տեղեկացնում է, որ «Թուրքական ընկերությունը ծրագրում է զրահատեխնիկա վաճառել Հայաստանին: Թուրքական “Nurol Makina ve Sanayi” ընկերությունը Հայաստանի հետ վարում է հասարակական իրադարձություններին միջամտելու ժամանակ օգտագործվող զրահատեխնիկայի առք ու վաճառքի վերաբերյալ բանակցություններ: Այս մասին, ինչպես հաղորդում է «Հյուրրիյեթ» օրաթերթը, հայտարարել է ընկերության փոխտնօրեն Թանժու Թորունը» **(05.02.2009, www.Azg.am):**

Այնուհետև ստացվում է հաջորդ լրատվությունը. «Ազգային ժողովի ապրիլի 29-ի նիստը սկսվեց քվեարկություններով: Պատգամավորները քվեարկությամբ երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեցին «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրինագծերի փաթեթը»:

«Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունները վերաբերում են ոստիկանության զորքերի մասսայական ցույցերն ու հավաքները, անկարգությունները ցրելու համար օգտագործվող հատուկ միջոցների կիրառմանը՝ արցունքաբեր գազի, ռետինե մահակների ու ռետինե փամփուշտների, ձեռնաշխթաների, շների, զենքի կիրառմանը: Ինչպես նաև թուրքական արտադրության հատուկ զրահատեխնիկայի օգտագործմանը, որ վաճառում են մեզ: Պատրաստ են նաև խճողված փողոցները շրջանցող հատուկ նշանակության ճանապարհները, որով կարող են արագընթաց տեղափոխվել հատուկ տեխնիկական միջոցներն ու զրահատեխնիկան:

Սրան հավելենք ապօրինի զենք զինամթերքի առգրավմանը միտված ՀՀ նախագահական նախընտրական և հետընտրական ողջ քարոզարշավն ու գործողությունները և պատկերը ամբողջական կդառնա:

Եթե չլինեին մարտիմեկյան վերջին իրադարձություններն ու դրան հաջորդող գործողությունները՝ գուցե դեռ հավատայինք, որ հայ-թուրք-շվեյցարական պայմանավորվածությունները ՀՀ-ին ուղղված ու պարտադրված հատուկ նախապայմաններ չեն պարունակում:

Բայց ո՛չ անցյալի փորձը և ո՛չ էլ ներկայի քաղաքական հայտարարություններն ու զարգացումները այդպիսի լավատեսության հիմքեր չեն տալիս:

«Ուխտ Արարատի»
10-ը մայիսի, 2009 թ.

---

1. Տես՝ Ջոն Կիրակոսյան, Ռուբեն Սահակյան, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և արտաքին քաղաքականության փաստաթղթերում՝ 1828-1923թթ.», «Հայաստան» հրտ., Երևան, 1972:

2. Տես՝ Արա Պապյան, «Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները» (հոդվածների ժողովածու), Երևան, 2007:

3. Հիշեցնում է զրահատեխնիկա վաճառելու թուրքերի առաջարկը, ինչպես նաև Թուրքիայի նոր արտգործնախարար, նոր օսմանների գաղափարախոս Ահմեդ Դավութօղլուի՝ Միջին Արևելքում, Բալկաններում, Կովկասում կարգ ու կանոն հաստատելու հայտարարությունը:

4. Հայ ֆիդայիներին ու կամավորներին զինաթափելու մասին է խոսքը…

5. Կարող են պահանջել, որ զորքերը հանենք ԼՂՀ-ից:

6. Սկսել են խոսել պայմանագրային զինվորական ծառայության անցնելու նպատակահարմարության մասին, որ նույնն է թե՝ ազգային բանակ չունենալ:

7. Հիմա դրա կարիքը չի լինի. ոստիկանության մասին ՀՀ օրենքում փոփոխությունները և թուրքական արտադրության զրահատեխնիկան կանեն այդ գործը:

8. Հիմա դրա կարիքը չկա: Հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը ուղղված ջանքերը առանց այդ էլ բուռն արձագանք են գտնում միջազգային դիվանագիտական շրջանակներում, հոգ չէ թե նրանց այսօրվա ոգևորությունը՝ մեր վաղվա մտահոգությունը, սպառնալիքը կարող է լինել:

9. Սահմանը փակում են, երբ ուզում են ճնշում բանեցնել, խանգարել: Բացում են, երբ իրենց է ձեռնտու: Հիմա տնտեսական զարգացման հեռանկարի հեքիաթով՝ ուզում են սահմանը բացել, որովհետև եկել է ՆԱՏՕ-ի Աֆղանստան-Պակիստան արշավելու ժամանակը…

10. Սրանով էր պայմանավորված, որ 1922թ. մինչև 1991թ. Մոսկվան արգելում էր հայությանը և Հայաստանին հիշել 1915թ. Մեծ եղեռնը: Ինչպես և այն, որ 1988թ. նոյեմբերի 22-ին Խորհրդային Հայաստանի կողմից ցեղասպանության դատապարտումը ԽՍՀՄ-ը ինքը ոչ միայն չճանաչեց, այլև չկատարեց սահմանադրական իր պարտավորությունը, հարցը Խորհրդային Հայաստանի անունից ներկայացնել ՄԱԿ-ի Միջազգային դատարան:

11. Նույն խնդիրն է, սահմանը բացել այն ժամանակ, երբ իրենց է ձեռնտու…

12. Խոսք կարող էր լինել միայն Հայաստանին ճնշելու մասին, որովհետև Ադրբեջանն ու Վրաստանը մեր հաշվին իրենց ավելորդ բաժինը ստացել էին:

13. **Խատիսյան Ալեքսանդր Հովհաննեսի (Իվանի) (1876, Թիֆլիս - 1945, Փարիզ),** հասարակական-քաղաքական գործիչ: ՀՅԴ կուսակցության անդամ: Ավարտել է Թիֆլիսի պետական գիմնազիան, սովորել է Մոսկվայի և Խարկովի համալսարաններում, ապա՝ Գերմանիայում: Մասնագիտությամբ (բժիշկ) չի աշխատել: 1902-ին ընտրվել է Թիֆլիսի քաղխորհրդի անդամ, 1906-ին՝ Թիֆլիսի քաղաքագլխի օգնական, 1909-17-ին՝ Կովկասյան քաղաքների միության նախագահ (1910-17-ին, միաժամանակ՝ Թիֆլիսի քաղաքագլուխ, 1915-17-ին՝ Հայոց ազգային բյուրոյի (Թիֆլիս) նախագահ): 1917-ին տեղափոխվել է Հայաստան, ընտրվել Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ, 1918-ին Անդկովկասյան Սեյմում ֆինանսների նախարար: Մասնակցել է Տրապիզոնի և Բաթումի բանակցություններին (տե՛ս Տրապիզոնի բանակցություններ 1918, Բաթումի պայմանագիր 1918): 1918-ի նոյեմբերից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, 1919-ի ապրիլից 1920-ի մայիսը՝ վարչապետ: 1920-ի դեկտեմբերի 2-ին ստորագրել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո վտարանդի: Ապրել է Փարիզում, շարունակել է քաղաքական գործունեությունը, Ազգային պատվիրակության անդամ էր 1922-23-ի Լոզանի կոնֆերանսում: Գրել է «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը (1930) հուշագրությունը: (Հայկական հարց հանրագիտարան, ՀՀԳ , Երևան, 1996, էջ 166)

14. Լև Տրոցկին ամեն ինչ արեց Լոուրենս Արաբացու պատվերը ճշգրիտ կատարելու համար. խանգարեց Հայաստանի տարածքային ամբողջականությունը վերականգնելու փորձը:

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև նախաստորագրված Արձանագրությունների վավերացումից բխող սպառնալիքը

Ռալֆ Պիտերս

1. Արձանագրությունների վավերացումից բխող սպառնալիքը:

Արձանագրությունների վավերացումը նշանակում է ստորագրել մի փաստաթղթի տակ, որը միտում ունի ստեղծելու տարածաշրջանային նոր պատերազմներ ու հակամարտություններ հրահրելու «իրավական» հիմքերը: Դրա վավերացումը նշանակում է նոր սպառնալիքներ ստեղծել ոչ միայն Հայաստանի և հայության, այլև տարածաշրջանի մյուս բոլոր պետությունների և ժողովուրդների համար:

Ահա թե ինչու, ամեն գնով պետք է կանխել դրանց վավերացումը:

2006-ի օգոստոսին ԱՄՆ զինված ուժերի պաշտոնաթող սպա Ռալֆ Պիտերսի միջոցով հրապարակ նետվեց **«Մերձավոր Արևելքի նոր սահմանները՝ ըստ հավատի նմանությունների և արյունակցական կապերի»** հոդվածն ու քարտեզը: Ծրագրի առաջին փուլում նախատեսվում էր մասնատել Իրաքը: Դա արդեն կատարված իրողություն է: Երկրորդ փուլում՝ մասնատել Սիրիան, Իրանը, Թուրքիան և նրանցից անջատված տարածքների վրա, ներառյալ Արևմտյան Հայաստանի և Արևելյան Հայաստանի Թուրքիայի կողմից բռնազավթված տարածքները, ամբողջացնել Ազատագրված Քուրդիստան անունով պետության կազմավորումը: **«Բալկանյան լեռների և Հիմալայների արանքում գտնվող ամենամեծ սահմանային անարդարությունը անկախ քրդական պետության բացակայությունն է»**, - նշում էր Ռալֆ Պիտերսը: Ի դեպ, Թուրքիան կմասնատվի, երբ ավարտին հասցնի իր վրա դրված հանցագործ ծրագրերի իրականացումը:

Հոդվածում Ռալֆ Պիտերսը իր հատուկ կարծիքն է արտահայտել նաև Հայաստանի համար. **«Իսկ մի սարսափելի չարագործություն, ինչպիսին է հայերի հանդեպ հոգեվարքի մեջ գտնվող Օսմանյան կայսրության ցեղասպանությունը, երբեք չի կարող փոխհատուցվել տարածքային նվիրատվությամբ»**:

2008-ին դա նկատի ուներ ԱՄՆ Պետքարտուղարի օգնական Դենիել Ֆրիդը, երբ ասում էր. **«Հայաստանը պետք է պատրաստ լինի ճանաչել առկա սահմանը և կառուցողական արձագանք տալ Թուրքիայի հնարավոր քայլերին: Հայաստանը պետք է հայտարարի, որ ժամանակակից Թուրքիայի նկատմամբ հողային որևէ պահանջ չունի»:**

«Այդուհանդերձ, ինչքան էլ մեր պատկերացմամբ կազմված նոր քարտեզը թերություններ ունենա, առանց սահմանները վերագծելու մենք երբեք խաղաղություն չենք տեսնի Միջին Արևելքում», - շարունակում է Ռալֆ Պիտերսը:

«Հանուն սահմանները վերագծելու և ապագա խաղաղության»՝ ահա ձեռնարկվում է տարածաշրջանում նոր պատերազմների ու հակամարտությունների, նոր ցեղասպանական գործողությունների հրահրումը:

Սա է ճշմարտությունը:

Արձանագրությունների բովանդակությունը հնարավորություն կտա իրականացնել այդ հանցագործ, անմարդկային ծրագրերը: Եվ բոլոր նրանք, ովքեր կողմ են արտահայտվում Արձանագրությունների վավերացմանը, ովքեր անտեղի ու անիմաստ փաստարկներով մոլորության մեջ են գցում հայությանը՝ հենց այդ գործողությունն են իրականացնում:

Սակայն, վաղօրոք ծրագրված տարածաշրջանային

Ստեֆան Բլանկ

աղետը հնարավոր է կանխել, եթե Հայաստանի և Թուրքիայի ներկայիս դեռևս գործող քաղաքական վերնախավերը գիտակցեն գալիք սպառնալիքների ու աղետների իրական ծավալները և ըմբռնեն դրանցում իրենց անձնական պատասխանատվության ողջ ծանրությունը: Այլապես, ինչպես նրանք, այնպես էլ միջազգային քաղաքական վերնախավի ակտիվ «խաղացողները», ինչպես իրենք են սիրում բնութագրել, պետք է հստակ իմանան, որ պատասխանատվություն են կրում Միջին Արևելքում, Անդրկովկասում, Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում ապագային տեղի ունենալիք աղետների, պատերազմների հրահրման համար:

Անհրաժեշտ է հիշեցնել, որ 1948 թ. ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» Կոնվենցիայի

3-րդ հոդվածի համաձայն՝ **«Պատժելի են հետևյալ արարքները՝ (ա) ցեղասպանությունը, (բ) ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը, (գ) ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը, (դ) ցեղասպանություն կատարելու փորձը, (ե) հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ»**,

4-րդ հոդվածի համաձայն՝ **«Ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարած անձինք ենթակա են պատժի՝ անկախ այն բանից, նրանք սահմանադրությամբ պատասխանատու ղեկավարներ են, թե պաշտոնատար կամ մասնավոր անձինք»**,

8-րդ հոդվածի համաձայն՝ **«Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է դիմել Միավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններին՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նրանք անհրաժեշտ են համարում ցեղասպանությունը և, 3-րդ հոդվածում թվարկված, որևէ այլ արարք կանխարգելելու և ճնշելու համար»**:

2. Հայության անելիքները:

Պետք է ամեն գնով արգելել Արձանագրությունների ստորագրումը, թույլ չտալ դրանց վավերացումը: Պետք է լարել բոլոր ուժերը և հաղթել այս պայքարում, այլապես ստիպված կլինենք դիմակայել ավելի մեծ հակամարտության և պատերազմի, որը մեզ կպարտադրվի Ադրբեջանի ու Վրաստանի սադրանքների, Իրանի ու Թուրքիայի միջև հակամարտություններ հրահրելու միջոցով, որտեղ, հնարավոր է, գործուն մասնակցություն ունենան նաև Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի քրդերը:

Հայության անվտանգությունը, ՀՀ-ի ու ԼՂՀ-ի ինքիշխանությունն ու անկախությունը պաշտպանելու համար, առանց հապաղելու, պետք է կազմակերպել Հայության աշխարհազորային համապարփակ ինքնապաշտպանությունը:

Մեր ժողովրդին պարտադրվող առկա սպառնալիքներում դա միակ ու ճիշտ ուղին է:

Ապավինենք մեր սեփական ներուժին:

«Ուխտ Արարատի», Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի (ԱՍԱԼԱ) ազատամարտիկների և նախկին քաղբանտարկյալների կազմակերպություն

7 հոկտեմբերի, 2009թ.

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ նախաստորագրված արձանագրությունների ստորագրման առիթով Նախագահ Սերժ Սարգսյանն ուղերձով դիմել է հայ ժողովրդին

10.10.2009

Այսօր երեկոյան /հոկտեմբերի 10/ Շվեյցարիայում Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ նախաստորագրված արձանագրությունների ստորագրման առիթով Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանն ուղերձով դիմել է հայ ժողովրդին:

Նախագահ Սարգսյանի ուղերձում ասված է.

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Վերջին մի քանի շաբաթների ընթացքում Հայաստանի ու ողջ հայության ուշադրության կենտրոնում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման ներկա գործընթացը, մասնավորապես նախաստորագրված երկու արձանագրություններն էին: Այդ փաստաթղթերը հրապարակավ քննարկելու մեր կոչին արագորեն արձագանքեցին հայ ժողովրդի բոլոր հատվածներն ու շերտերը եւ ներգրավվեցին դրա շուրջ ծավալվող բանավեճերին: Վերջին ամիսներին Հայաստանի եւ հայության առջեւ ծառացած մեծ ու փոքր խնդիրների քննարկումների մի նոր՝ հզոր ալիք բարձրացավ:

Քննության առարկա են դառնում նաեւ հայ-թուրքական բանակցությունների հետ կապ չունեցող, բայց համայն հայությանը հուզող բազմաթիվ հարցեր: Այս գործընթացն ընդհանրական առիթ ու խթան հանդիսացավ նոր՝ շահագրգիռ քննարկում ծավալելու Հայաստանի եւ հայության տեղի ու դերի մասին, Հայաստանի եւ հայության ներկայի ու ապագայի մասին: Արդյունքում, ողջ աշխարհը տեսավ ու հասկացավ, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հարցում գործ ունի ոչ միայն երեք միլիոնանոց Հայաստանի, այլ տաս միլիոնանոց հայ ժողովրդի հետ: Եվ թող ոչ ոք չտեսնելու չտա, որ ի հեճուկս ցանկացած վանկարկումների՝ հայ ժողովուրդը միասնական է իր նպատակներում եւ ուժեղ է իր զավակներով: Եվ թող ոչ ոք չփորձի սեպ խրել Հայաստանի եւ Սփյուռքի միջեւ, մեր քույրերի ու եղբայրների՝ Հայաստանի ապագայի համար անհանգստությունը ներկայացնելով որպես Հայաստանի Հանրապետությանը նրանց կողմից ինչ-որ բան պարտադրելու փորձ:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Մեր ժողովրդի պատմական ճակատագիրը բազմիցս է առնչվել բարդագույն իրավիճակներում խելամիտ ելք գտնելու հրամայականին: Հաջողություն ու առաջընթաց է գրանցվել միայն ժամանակի մարտահրավերներն իրատեսորեն գնահատելու եւ դրանց համարժեք քայլեր ձեռնարկելու դեպքում: Այսօր էլ մենք գտնվում ենք նման հանգրվանում: Պետականության կայացումն ու ամրապնդումը մեր հավաքական ինքնությունից պահանջում է համարժեք մտածողություն ու գործելակերպ:

Մենք այսօր փորձում ենք բնականոն հունի մեջ դնել հարաբերությունները մի երկրի հետ, որտեղ Օսմանյան կայսրության տիրապետության տարիներին պետական մակարդակով մեր ժողովրդի հայրենազրկման ու բնաջնջման քաղաքականություն է իրականացվել: Ցեղասպանության վերքը չի սպիանում: Եվ մեր նահատակների հիշատակն ու մեր սերունդների ապագան պահանջում են ունենալ կայուն ու ամուր պետականություն, հզոր ու բարգավաճող երկիր, ողջ հայության երազանքների ծնունդը դարձած հայրենիք: Այդ ճանապարհի կարևոր քայլերից մեկը մենք համարում ենք բոլոր հարևանների, այդ թվում Թուրքիայի հետ բնականոն կապերի հաստատումը:

ՀՀ նախագահ Ս. Սարգսյան

Անկախությունը պահանջում է նաեւ պատասխանատու վճիռներ կայացնելու կամք ու վճռականություն, պահանջում է իրատեսություն ու հեռանկարին միտված հետեւողական աշխատանք: Ես ընտրել եմ այդ ճանապարհը: Ընտրել եմ պատմական պահի պատասխանատվության խոր զգացումով ու մեր ժողովրդի ապագայի նկատմամբ մեծ հավատով:

Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների հաստատումն այլընտրանք չունի: Դա ժամանակի հրամայականն է: Այս անհրաժեշտությունը չէ այսօր տարակարծությունների առարկան: Առանձին անհատների ու քաղաքական ուժերի մտավախությունը ծնվում է ստորագրվող արձանագրությունների մի քանի դրույթների տարակերպ մեկնաբանություններից ու Թուրքիայի հանդեպ պատմական անվստահությունից:

Իրատեսորեն գնահատելով այս հանգամանքները, համոզված լինելով ձեռնարկված քայլերի անհրաժեշտության ու ճշմարտացիության մեջ՝ պնդում եմ.

1. ցանկացած հարաբերություն Թուրքիայի հետ չի կարող կասկածի տակ դնել հայ ժողովրդի հայրենազրկման ու ցեղասպանության իրողությունը: Այն հայտնի փաստ է եւ պետք է ճանաչվի ու դատապարտվի ողջ առաջադեմ մարդկության կողմից: Միջկառավարական հանձնաժողովի համապատասխան ենթահանձնաժողովը պատմաբանների հանձնաժողով չէ,

2. Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ առկա սահմանների հարցը ենթակա է լուծման միջազգային իրավունքի համաձայն: Արձանագրությունները դրանից ավելի ոչինչ չեն ասում,

3. Այս հարաբերությունները որեւէ ձեւով չեն առնչվում ու չեն կարող առնչվել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հետ, որն անկախ ու ինքնուրույն գործընթաց է: Հայաստանը չի դիտարկում արձանագրություններում ամրագրված տարածքային ամբողջականության եւ սահմանների անխախտելիության հարցը որպես Ղարաբաղի հիմնախնդրի հետ որեւէ առնչություն ունեցող հիշատակում,

4. Թուրքիայի կողմից արձանագրությունների վավերացման ձգձգումը կամ վավերացման հնարավոր նոր պայմանների առաջադրումը հայկական կողմի համարժեք վե-

րաբերմունքին կարժանանա: Այս արձանագրություններով Հայաստանը միակողմանիորեն չի ստանձնում որեւէ պարտավորություն, չի կատարում որեւէ հաստատում: Հայաստանը ստորագրում է այս արձանագրությունները երկու երկրների միջեւ բնականոն հարաբերություններ հաստատելու հիմքեր ստեղծելու նպատակով: Ուստի, եթե Թուրքիան խելամիտ ժամկետում չվավերացնի այս արձանագրությունները եւ դրանից հետո սահմանված ժամկետում չկատարի դրանց բոլոր դրույթները կամ դրանք խախտի հետագայում, ապա Հայաստանն առանց հապաղելու կձեռնարկի միջազգային իրավունքին համապատասխան համարժեք քայլեր:

Դիմելով ձեզ, սիրելի՛ բարեկամներ, առանձնակի կարեւորությամբ ընդգծում եմ. այսօր առավել, քան երբեւէ մեր ժողովրդին միաբանություն է պետք, մեր հավաքական ինքնությունը պետական կյանքին հասու դարձնելու կարողություն է պետք: Սա է ապագայի մեր ճանապարհը:

Արձանագրությունների ստորագրումից հետո սկսվելու են դրանց վավերացման եւ իրականացման փուլերը: Բոլոր մտահոգությունները, հնարավոր վտանգները, որոնք այնքան լիուլի հնչեցվեցին քննարկումների ընթացքում, անհրաժեշտաբար հաշվի են առնվելու, եւ մենք պետք է կարողանանք կանխել ազգային նպատակներին հակասող որեւէ զարգացում: Այսօր ես ավելի քան վստահ եմ, որ կկարողանանք: Ու միասին ենք անելու, ողջ հայությամբ: Մենք այսօր նույնը չենք, ինչպես ընդամենը ամիսներ առաջ: Սա այլեւս փաստ է:

Ես հավատում եմ մեր ժողովրդի իմաստությանը: Ես հավատում եմ, որ միասին ենք մեր սերունդներին շեն ու խաղաղ հայրենիք ժառանգելու: Վստահաբար այդպես էլ լինելու է:

Աստված մեզ պահապան»:

ՔԱՅՆԱՄԱԿ

2009-ի հոկտեմբերի 10-ին Շվեցարիայում **«Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին»** և **«Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների զարգացման մասին»** Արձանագրությունների ստորագրման արարողությանը մասնակից պաշտոնյաների երկրների ղեկավարներին՝

ԱՄՆ նախագահ **Բարաք Օբամային**, Ռուսաստանի Դաշնության նախագահ **Դմիտրի Մեդվեդևին**, Ֆրանսիայի նախագահ **Նիկոլա Սարկոզիին**, Եվրոպական միության խորհրդի գլխավոր քարտուղար **Խավիեր Սոլանային**, Եվրախորհրդի նախարարների կոմիտեի նախագահ **Սամուել Ջգոբարին**, Հայաստանի Հանրապետության նախագահ **Սերժ Սարգսյանին** և Թուրքիայի Հանրապետության նախագահ **Աբդուլլահ Գյուլին, նաև** ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղար **Պան Գի Մունին** և Անվտանգության Խորհրդի մշտական անդամ երկրների՝ Չինաստանի և Մեծ Բրիտանիայի ղեկավարներ՝ **Խու Ջին Տաոյին** և **Գորդոն Բրաունին**

Դավութօղլու-Նալբանդյան պակտը. 10 հոկտեմբեր, 2009թ., Ցյուրիխ

Իբր թե Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական և բարիդրացիական հարաբերություններ հաստատելու, իրականում, սակայն, Արձանագրությունների ստորագրման ու վավերացման պարտադրանքով՝

նախ և առաջ, միջազգային իրավական դաշտը հիմքից խաթարելու ու կազմաքանդելու վտանգի, դրանով իսկ պետությունների միջև ձևավորված միջազգային հարաբերություններում՝ միջնադարյան մոտեցումներով, գերակայությունը ոչ թե իրավական, այլ ապօրինի ու անօրինական լուծումներին տալու, ինչպես նաև միջազգային իրավական հարաբերություններում նախադեպ ստեղծելու, երբ երկու երկրներ (տվյալ դեպքում՝ Թուրքիան և Հայաստանը) փոխադարձ պայմանավորվածությամբ պարտավորություններ են ստանձնում մեկ այլ՝ երրորդ, այն էլ դեռևս գոյություն չունեցող, Նոր Եվրոպա պետության համար,

«Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948թ. ընդունած Կոնվենցիան միջազգային իրավական շրջանառությունից հանելու սպառնալիքի,

ՄԱԿ-ին, նույնն է, թե համաշխարհային հանրությանը սպառնացող միջազգային իրավական կարգավորվածությունը ներպետական և միջպետական մակարդակներում անկառավարելիության ու քաոսի վերածելու,

անվտանգության, խաղաղության և խաղաղ համակեցության, ժողովրդավարության և ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների 1945 - 1965 թթ. ձեռքբերումներով հաստատված իրավունքի ու օրինականության դրվածքը ուժային պարտադրանքով նենգափոխելու և կամային, այսպես կոչված, քաղաքական լուծումների հանգեցնելու,

Նոր Եվրոպայի համար ստանձնած ինչ - ինչ պարտավորությունների պարտադրանքով, միջազգային միակ կազմակերպության՝ ՄԱԿ-ի, հետագա գոյությունը, կանոնադրությունը, նրա ընդունած միջազգային իրավական սկզբունքներն ու նորմերը, հռչակագրերն ու կոնվենցիաները չեզոքացնելու,

յուրաքանչյուր երկրի և համաշխարհային հանրության քաղաքակրթական անվտանգությունն ու պաշտպանվածությունը նոր սպառնալիքի տակ դնելու առկա ագրեսիվ իրողության

ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆՔ ՊԱՏԱՍԽԱՆ ԵՆ ԱԿՆԿԱԼՈՒՄ,

Հարգարժան պարոնայք

Ելնելով նրանից, որ

Արձանագրությունների առաջին փաստաթղթի երկրորդ դրույթում հստակ նշված է (հասկանալի պատճառներով չէին կարող չնշել), որ Հայաստան - Թուրքիա Արձանագրությունների պատվիրատուն վաղվա Նոր Եվրոպան է, ներկա-

յիս Եվրոմիությունը: Եվ մեծ կարևորություն չտալով այն հարցին, թե ովքե՞ր և որտե՞ղ են պատրաստել տեքստը, պատվիրել բովանդակությունը, դրանում ներառված խնդիրները, իրագործման մեխանիզմներն ու ժամանակացույցը,

պատասխան ստանալու ակնկալիքով՝ դիմում ենք Ձեզ.

Կարդացե՞լ եք, արդյոք, **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ»** Արձանագրությունները:

Անձամբ համոզվե՞լ եք, որ, ըստ տեքստի, դրված է Հայաստանի և Թուրքիայի միջև պարզ դիվանագիտական և բարիդրացիական հարաբերություններ հաստատելու խնդիր, թե՞ վստահել եք Ձեր երկրի պետապարատին և Ձեր անմիջական ղեկավարմանը ենթակա, արտաքին հարաբերություններ իրականացնող կառույցի ղեկավարին:

ա) ՆԵՐՈՂԱՄԻՏ եղեք ոչ դիվանագետներիս ուղիղ խոսքի համար. քանզի լուրջ մտավախություն ունենք, որ չեք կարդացել: Հակառակ դեպքում, վստահ ենք, որ Ձեր հանձնարարականներով կամ շնորհավորական ողջույններով չէիք քաջալերի այն բոլոր պաշտոնյաներին, որոնք իբր թե գործում են տարածաշրջանի անվտանգության աստիճանի բարձրացման, խաղաղություն և խաղաղ համագործակցության հաստատման բուռն ցանկությամբ, իրականում, սակայն, վարում են հօգուտ ցեղասպանության քարոզչության իրականացման քաղաքականություն: Հիշեցնենք, որ ըստ **«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՊԱՏԺԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-ի 260 A (III) 9 դեկտեմբերի 1948թ. Կոնվենցիայի** 3-րդ հոդվածի՝ «պատժելի են հետևյալ արարքները՝ ա) ցեղասպանությունը, բ) ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը, գ) ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը, դ) ցեղասպանություն կատարելու փորձը, ե) հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ»: Ըստ 4-րդ հոդվածի՝ «Ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարած անձինք ենթակա են պատժի՝ անկախ այն բանից, նրանք սահմանադրությամբ պատասխանատու ղեկավարներ են, թե պաշտոնատար կամ մասնավոր անձինք»:

Ռիբենտրոպ - Մոլոտով պակտը. 23 օգոստոս, 1939թ., Մոսկվա

ՎՍՏԱՀ ԵՆՔ, որ Դուք (Ձեր պետությունները) չեք հրաժարվել ի շահ Ձեր ժողովրդի և հանուն մարդկության, ըստ ՄԱԿ-ի 1948թ. Կոնվենցիայի նոր ցեղասպանությունները կանխարգելելու, նաև արդեն իսկ կատարվածը պատժելու պարտավորությունից: Քանի որ, դա ոչ միայն համամարդկային բարոյականության և ազգերի անվտանգության բանալին է, այլև՝ Օրենքով կարգավորվող ներպետական և միջազգային պարտավորություն:

ԳԻՏԵՔ ԱՆՇՈՒՇՏ, որ ըստ նույն Կոնվենցիայի 1-ին հոդվածի՝ «Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի՝ հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար»:

Նույնիսկ պարզ, շարքային մտածողությունը բնական է համարում, որ Թուրքիայի կողմից 1915 - 23 թթ. ցեղասպանության ենթարկված հայությունը ներկայացնող պետությունը, կատարելու համար 1,5 միլիոն անմեղ զոհերի պատգամը և Հայրենիքից զրկված, աշխարհով մեկ դեգերող 10 միլիոն սփյուռքահայության արդարացի պահանջը, ՊԱՐՏԱՎՈՐ է պահանջատեր լինել մարդկության դեմ կատարված հանցագործությունը իրավունքի ուժով պատժելու, ցեղասպանության հետևանքները վերացնելու և կորսված արդարությունը՝ այն է, աշխարհի ու տարածաշրջանի բնականոնությունը վերականգնելու հարցերում:

ՍԱԿԱՅՆ, այլ կերպ էր մտածում արևմտյան - քաղաքական պրագմատիզմը, երբ, իբր արդարացում, 1921-ին ասում էր. «Հանուն հանաշխարհային հեղափոխության…», հիմա էլ՝ 2009-ին, «Հանուն Թուրքիայի ժողովրդավարացման, կովկասյան և կամ եվրոպական ինտեգրման ու աշխարհի գլոբալացման» հայությունն ու Հայաստանը պետք է հրաժարվեն իրենց բոլոր իրավունքներից ու պահանջատիրությունից, ասել է թե՝ ցեղասպանության դատապարտման, հանցագործին պատժելու և ցեղասպանության հետևանքները միջազգային իրավական հենքով ու խաղաղ միջոցներով վերացնելու, արդարությունը վերահաստատելու, ըստ այդմ, նոր ցեղասպանությունները կանխարգելելու վճռականությունից:

Առաջին համաշխարհային պատերազմում իրականացվեց Հայոց ցեղասպանությունը, 1921-ի մարտի 16-ին կնքվեց Յուսուֆ Քեմալ - Գեորգի Չիչերին հանցագործ պակտը՝ Մոսկվայի Ռուս-թուրքական պայմանագիրը: 1939-ին կնքվեց Ռիբենտրոպ - Մոլոտով պակտը, Երկրորդ համաշխարհային պատերազմում տեղի ունեցավ հրեաների Հոլոքոստը: Պարտադիր չէ, որ պատմությունը կրկնվի, բայց Հայաստան - Թուրքիա Արձանագրությունների Դավութօղլու - Նալբանդյան ստորագրման հարկադրանքով նոր հանցագործ պակտ է կնքվում, որի հետևանքը լինելու է տարածաշրջանային նոր ագրեսիա, նոր պատերազմ, նոր ցեղասպանական գործողության հրահրում, ինչը վերաճելու է համաշխարհային նոր աղետի և որի պատասխանատվությունը, անշուշտ, կրելու են ոչ միայն ստորագրող ու վավերացնող կողմերը, այլև նոր նախադեպ ստեղծող պատվիրատուները, միջնորդները, պարտադրողներն ու ողջունողները:

ԻՍԿ ԵԹԵ ԳԻՏԵՔ մի բան, որ մենք չգիտենք, օրինակ, որ Թուրքիան հայությանն ու Հայաստանին սպառնում է նոր պատերազմով, ապա դրա հանցակցությունը նույնպես միջազգային հանրությանն է: Որովհետև միջազգային հանրությունն է խուսափում հանցագործին պատժելու, ցեղասպանության հետևանքները վերացնելու, արդարադատություն իրականացնելու և արդարությունը վերականգնելու իր օրենսդրական պարտավորությունից, դրանով իսկ իրականացնելով հանցագործին ու ագրեսորին նոր հանցագործությունների մղելու գործողություն և քարոզչություն:

ՍԱ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, երբ Դուք էլ գիտեք, որ տրամագծորեն հակառակ է պահանջում միջազգային իրավունքը: Քանզի 1948թ. Կոնվենցիան նույնիսկ ցեղասպանության ենթարկված ժողովրդին ներկայացնող պետությանը, որպես տուժող՝ հայցվոր կողմ, ոչ միայն չի տալիս ընտրության իրավունք, այլև, համաձայն Կոնվենցիայով իր կողմից ստանձնած պարտավորության, արգելում է հանցագործություն կատարած պետությանը պատժից ազատել:

ՀԱԿԱՌԱԿ ԴԵՊՔՈՒՄ, այդ երկրի ժողովուրդը՝ համաձայն Կոնվենցիայի 1-ին հոդվածի և ըստ՝ ՄԱԿ-ի 1948թ. Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի 21-րդ հոդվածի ու իր երկրի օրենքների, ինքն է պարտավոր պատասխանատվության կանչել ոչ միայն ցեղասպանությունը կատարողին, այլև իր կողմից ձևավորած իր իսկ պետության գործադիր և օրենսդիր իշխանություններին՝ համաձայն 1948թ. Կոնվենցիայի վերը նշված 3-րդ և 4-րդ հոդվածների, դիտարկելով նրանց գործողությունները՝ որպես հօգուտ նոր ցեղասպանության իրականացման քարոզչու-

թյուն, ինչպես և հանցագործի կողմից ցեղասպանության ճանապարհով զավթված Ազգային հարստությունը յուրացնելու և սեփականաշնորհելու փորձը չկանխելու հանցագործ գործողություն:

ՎՍՏԱՀ ԵՆՔ, որ Արծանագրությունների տեքստը կարդալուց հետո, Ձեզ համար էլ հստակ կլինի, թե Հայաստան - Թուրքիա Արձանագրությունների պատվիրատուն, տեքստը կազմող և ստորագրող կողմերը, միջնորդները, ստորագրել հորդորողները գերազանցել են իրենց իրավասությունները և կամա, թե ակամա իրականացրել հօգուտ ցեղասպանության քարոզչություն կատարելու գործողություն: Քանզի, ըստ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» առաջին Արձանագրության 3-րդ դրույթի՝ ՀՀ-ն հաստատում է, որ պատրաստ է Թուրքիայի կողմից 1915 - 23 թթ. իրականացված ցեղասպանության միջոցով և 1921թ. մարտի 16-ի Ռուս - թուրքական ապօրինի պայմանագրի հանցագործ գործարքով բռնազավթված հայկական տարածքները «նվիրաբերել» Թուրքիային (ի դեպ՝ «նվիրաբերել» բառը ԱՄՆ բանակի պաշտոնաթող սպա Ռալֆ Պիտերսի սիրած ձևակերպումն է):

Լև Տրոցկի-Բրոնշտեյն

5-րդ դրույթով՝ ՀՀ-ն ճանաչում է վերոհիշյալ գործողությունների հետևանքով առաջացած և առ այսօր «դե ֆակտո» գոյություն ունեցող ԽՍՀՄ - Թուրքիա սահմանը՝ որպես ՀՀ - Թուրքիա «դե յուրէ» «ընդհանուր սահման»: 5-րդ դրույթով ՀՀ-ն ճանաչում է այդ սահմանի Ռուս - թուրքական ապօրինի պայմանագրով իրականացված դեմարկացիան: 6-րդ դրույթով՝ ՀՀ-ն կարևորում է «ընդհանուր սահմանը բացելու իրենց որոշումը», «մոռացության» տալով Թուրքիայի կողմից ՀՀ-ի 15-ամյա շրջափակման հանցագործ իրողությունը: 7-րդ դրույթով՝ ՀՀ-ն ձեռնպահ է մնում Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների ոգուն չհամապատասխանող քաղաքականություն վարելուց, ասել է, թե հրաժարվում է Միջազգային դատարանի որոշումով Թուրքիային ցեղասպանություն կատարելու համար պատժելու Ցեղասպանության Կոնվենցիայով իր իսկ ստանձնած պարտավորությունից… 8-րդ դրույթով՝ ՀՀ-ն և ԹՀ-ն «դատապարտում են «**ահաբեկչության»** և բռնության բոլոր ձևերը՝ անկախ դրանց պատճառներից», մոռանալով ահաբեկչության կողքին դնելու **«միջազգային»** բառը: 9-րդ դրույթով՝ ՀՀ-ն և ԹՀ-ն հաստատում են «հարաբերությունների նոր ձևեր ու ուղիներ մշակելու» իրենց հանձնառությունը, կրկին հայտնելով իրենց հավատարմությունը Նոր Եվրոպայի համար՝ եվրոպական նոր օրենսդրությամբ ու իրավարարությամբ ձևավորվող իրավա-քաղաքական հարաբերությունների միջազգային նոր համակարգին:

բ) ԿԱՐԾՈՒՄ ԵՆՔ՝ Ձեզ համար էլ բնական է, որ մենք, ինչպես և մեր երկրի ներկայով ու ապագայով մտահոգ ու պատասխանատու յուրաքանչյուր անհատ և կառույց, ուշի ուշով հետևում ենք, այսպես կոչված, Հայաստան - Թուրքիա դիվանագիտական և բարիդրացիական հարաբերությունների հաստատմանն ուղղված միջազգային - քաղաքական երկամսյա գործընթացին, դրա ամեն մի գործնական քայլին, ըստ այդմ արվող միջազգային և ներպետական քարոզչությանն ու միջոցառումներին, նաև դրանցում ներգրավված բոլոր երկրների պաշտոնատար անձանց կողմից ասված յուրաքանչյուր խոսքին ու ժեստին, մտահոգության ու լրջության, գոհունակության ու բուռն ոգևորության դրսևորումներին, որոնք ոչ պակաս ճշտությամբ բացահայտում են այդ երկրների ու միջազգային կառույցների կողմից մեր երկրի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, որդեգրած և իրականացվող քաղաքականությունը, եթե, իհարկե, բացառենք երկրների պետապարատների ազդեցության գործոնը:

ՎՍՏԱՀ ԵՆՔ, որ 2009-ի հոկտեմբերի 10-ի Արձանագրությունների ստորագրման արարողության բոլոր գործող անձինք լավ ծանոթ էին դրանց տեքստին, մասնագիտորեն հասկանում էին դրանցում գրված յուրաքանչյուր բառի, ստորակետի, վերջակետի բուն իմաստը, ինչպես և դիվանագիտական հարաբերություններում ու միջազգային իրավական դաշտում դրանց հնարավոր բացասական բոլոր հետևանքները պատվիրատու երկրների, ինչպես նաև պայմանավորվող կողմերի՝ Հայաստանի Հանրապետության ու Թուրքիայի Հանրապետության համար:

ՈՒՍՏԻ, ՀԱՍԿԱՆԱԼԻ է, թե ինչու սույն հարցը չենք տալիս Ձեր երկրների արտաքին քաղաքականությունն իրականացնող գերատեսչությունների ղեկավարներին՝ **Հիլարի Քլինթոնին, Սերգեյ Լավրովին, Բեռնար Քուշներին**, **Ահմեդ Դավութօղլուին** և **Էդուարդ Նալբանդյանին**: Քանզի նրանց բոլորի պատասխանը լինելու է այն, որ իրենք կատարում են վերադասի հանձնարարականը՝ իրականացնելով իրենց պետությունների որդեգրած արտաքին քաղաքականությունը:

ՆԵՐՈՂԱՄԻՏ ԵՂԵՔ, որ Ձեզ՝ պետության առաջին դեմքերին, պետք է հիշեցնենք երկրի, ժողովրդի ու պետության ազգային - քաղաքակրթական անվտանգությունը սեփական պետապարատի հնարավոր ոտնձգություններից նույնպես պաշտպանելու անհրաժեշտությունը, ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային քաղաքական ոլորտներում: Բայց, կարծում ենք, արժե վերհիշել պատասխանատվությունից մշտապես խուսափող պետապարտի ու նրա «բարի խորհրդատուների» ոչ միայն գոյության, այլև ի չարս գործելու հնարավորության և ունակության մասին:

Գեորգի Չիչերին - Լև Կարախան

Բազմաթիվ են տարբեր երկրների պետապարատների կողմից նեգատիվ գործունեության դրսևորումների օրինակները: Հիշենք 1962 թվականը: Կարիբյան ճգնաժամը: Երկբևեռ աշխարհի երկու գերտերությունների՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի կողմից Երրորդ համաշխարհային միջուկային պատերազմ սկսելու վտանգավոր իրողությունը: Այն դեպքում, երբ ո՛չ Ջոն Քենեդին և ո՛չ էլ Նիկիտա Խրուշչովը, առավել ևս ո՛չ ԱՄՆ-ի և ո՛չ էլ ԽՍՀՄ-ի ժողովուրդները չէին ցանկանում դա: Հայտնի է, որ դա իրենց ժողովուրդների և մարդկության հանդեպ անձնական պատասխանատվությունից զուրկ, նաև ի պաշտոնե պատասխանատվություն չկրող և, սակայն, իրենց վերադասներին Մեծ հանցագործության դրդող, ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի պետապարատների կողմից տարիների ընթացքում նախապատրաստված ու 1962 թվականին կատարման ծայրակետին հասցված, տարիներ շարունակ խնամքով թաքցված ու լրջագույն բծախնդրությամբ իրականացված գործողության հետևանք էր:

Վերջին պահին միայն, հաշված րոպեների ընթացքում սթափվեցին, ուշքի եկան և՛ Քենեդին, և՛ Խրուշչովը ու հաս-

կացան, թե իրենց իսկ ենթակա պետապարատները ինչպիսի՞ հանցագործության էին ուղղորդում իրենց: Այն ժամանակ համամարդկային մեծ աղետը, մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագործությունը կանխվեց: Մտահոգության խնդիր է, որ չկանխվեցին նույն այդ պետապարատների պատասխան քայլերը՝ Դալլասի կրակոցներն ու Կրեմլի պալատական իշխանափոխությունը: Ցավոք, հաղթեց պետապարատը՝ ծրագրված հանցագործությունը ցանկացած գնով իրականացնելու նրա հանձնառությունը:

գ) ԱՆՇՈՒՇՏ, ցեղասպանություն իրականացրած և ցեղասպանության ենթարկված երկրների՝ Թուրքիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելը միջազգային պրակտիկայում հեշտությամբ լուծվող խնդիրներից չէ:

ՀԱՄԱԿԱՐԾԻՔ ԵՆՔ, որ դա դժվարին և ծանր խնդիր է, նույնիսկ այն դեպքում, երբ Թուրքիան մարդկության դեմ կատարած իր հանցագործության համար ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կողմից արդեն իսկ ենթարկված կլինի պատասխանատվության և դատարանի որոշումով վերացրած կլինի ցեղասպանության հետևանքները, այդ թվում՝ դուրս եկած կլինի ցեղասպանության ենթարկված ժողովրդի՝ հայության Հայրենիքի, Հայաստան երկրի 9/10-րդ մասը կազմող, ցեղասպանության ճանապարհով բռնազավթած տարածքից: Այո՛, նույնիսկ այդ դեպքում ընդամենը դիվանագիտական (առանց «բարի», թե «չար» դրացիության) հարաբերություններ հաստատելը դժվարին ժամանակ պահանջող խնդիր է: Քանզի արդարության վերականգնումից հետո էլ դեռ ժամանակ է պահանջվելու, որպեսզի թե՛ Հայաստանը և թե՛ միջազգային հանրությունը համոզվեն, որ Թուրքիան այլևս նախկինը չէ ու չունի հանցագործ նկրտումներ Հայաստանի, հայության և այլոց նկատմամբ: Այդ ամբողջ ժամանակահատվածում և դրա ավարտին է, որ կենսականորեն կարևոր է լինելու միջազգային հանրության և ակնկալիք չունեցող միջնորդ երկրների առաջադիմական առաքելությունը:

Ռիբենտրոպ - Մոլոտով - Ստալին

Դ Ի Մ Ո Ւ Մ Ե Ն Ք

Նաև

ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղար **Պան Գի Մունին,** ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի մշտական անդամ երկրներից Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նախագահ՝ **Խու Ջին Տաոյին** և Մեծ Բրիտանիայի վարչապետ՝ **Գորդոն Բրաունին**

ԽՆԴՐԵԼՈՎ՝

ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի օրակարգ մտցնել Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության, ինչպես նաև տարածաշրջանի և աշխարհի այլ երկրների համար լուրջ հետևանքներ ունեցող միջազգային - քաղաքական այս խիստ վտանգավոր գործարքի իրողությունը քննարկելու և այն դատապարտելու հարցերը: Նաև,

Միջոցներ ձեռնարկել նմանօրինակ ոտնձգությունները միջազգային քաղաքական պրակտիկայում՝ հենց ծրագրման փուլում, կանխարգելելու համար: Իսկ

ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 15 անդամ երկրներից ՆՐԱՆՑ, ՈՐՈՆՔ ԴԵՄ ԿԼԻՆԵՆ 1-ին և 2-րդ կետերի պահանջներին, առաջարկում ենք իրենց կողմից քննարկման դնել «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՊԱՏԺԻ ՄԱՍԻՆ» 1948թ. Կոնվենցիան չեղյալ հայտարարելու հարցը, որպեսզի միջազգային հանրությունը հստակ կողմնորոշվի, թե այսուհետ ՄԱԿ-ի անդամ, ո՞ր երկրի նկատմամբ, ի՞նչ քաղաքականություն որդեգրի:

Հարգանքով՝

«Ուխտ Արարատի», Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի (ԱՍԱԼԱ) ազատամարտիկների և նախկին քաղբանտարկյալների կազմակերպություն

Երևան, 29 հոկտեմբերի, 2009թ.

«Բաց նամակին» կից ներկայացվել են տարբեր պաշտոնյաների հայտարարություններ, հոդվածներ, քարտեզներ, «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» Կոնվենցիայի հայերեն և ռուսերեն տարբերակները՝ ընդհանուր քսան էջ պարունակությամբ:

ՕԲԱՄԱՅԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԱՋԵՑՆՈՒՄ Է ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ Բարակ Օբաման ապրիլի 24-ի իր ելույթում հնարավորություն ուներ նշելու նոր ընթացք՝ ուղղված Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորմանը՝ ճանաչելով **Հայոց ցեղասպանությունը**, բայց նա չկատարեց իր խոստումը: Այդ մասին խոսվում է Ամերիկայի Հայկական Համագումարի (ԱՀՀ) հայտարարության մեջ, որն ուղարկվել է PanARMENIAN.Net: «Այսօրվա հայտարարությունը չի արտահայտում նախագահի դիրքորոշման փոփոխությունները, նա չկատարեց իր խոստումը: Նրա անընդունակությունը ԱՄՆ պատմության մեջ փառավոր գլուխ հաստատելու հարցում 20-րդ դարի ցեղասպանության հաստատմամբ, նվազեցնում է ԱՄՆ նկատմամբ վստահությունը՝ ցեղասպանությունների կանխարգելման հարցում»,- հայտարարել է ԱՀՀ գործադիր տնօրեն **Բրայան Արդունին**: Արդունին նաև նշեց, որ դատարկ խոստումները ոչինչ չեն փոխի: «Այսօր, երբ մենք խորհում ենք ցեղասպանությունների առաջացման, կյանքի կոչման և կանխարգելման մասին, մենք պետք է կրկնապատկենք մեր ջանքերը նրա համար, որ բառը «երբեք» չունենա իսկական իմաստ՝ սկսած Ներկայացուցիչների պալատում Հայոց ցեղասպանության մասին 252-րդ բանաձևի ընդունումից»,- ընդգծել է Արդունին: 2008-ի հունվարին այն ժամանակ դեռ սենատոր Օբաման հայտարարեց. «Որպես նախագահ՝ ես ճանաչում եմ Հայոց ցեղասպանությունը»: 2008-ի հոկտեմբերին նախագահ Օբաման նորից հաստատեց իր տեսակետը: «Ես կարծում եմ, որ Հայոց ցեղասպանությունը ոչ թե համոզմունք է, անձնական կարծիք կամ տեսակետ, այլ բավական լայն փաստագրական իրողություն, որը հաստատվում է պատմական ապացույցների ճնշող քանակով»: **/PanARMENIAN.Net/** 25.04.2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ [ԱՌԱՋԻՆ] ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանն իր անկախությունն հռչակել է 1918թ. մայիսի 28-ին: Հայաստանի Հանրապետության անկախությունը Փարիզի խաղաղության վեհաժողովի գերագույն խորհրդի անունից (the Supreme Council of the Paris Peace Conference) 1920թ. հունվարի 19-ին ճանաչել են Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Իտալիան.

«Համաձայնություն է կայացվել. (1) ճանաչել հայկական պետության կառավարությունը որպես de facto կառավարություն, պայմանով, որ այս ճանաչումը որևէ ձևով չի կանխորոշելու վերջնական սահմանների հարցը; (2) որ դաշնակից կառավարությունները պատրաստ չեն Անդրկովկաս ուղարկել երեք դիվիզիա, ինչի վերաբերյալ մտադրություն էր հայտնել Միջ-դաշնակցային հանձնաժողովը; (3) (ա) որպես սկզբունք ընդունել Կովկասյան պետություններ զինամթերքի և, եթե հնարավոր է, սննդի առաքումը. (բ) հրավիրել մարշալ Ֆոշին և ֆեդմարշալ Վիլսոնին որոշելու, թե ինչի՞ց պետք է բաղկացած լինեն հիշյալ մատակարարումները և նրանց առաքման միջոցները:

Ամերիկյան և ճապոնական ներկայացուցիչները սույն որոշումները կփոխանցեն իրենց համապատասխան կառավարություններին»: (Փարիզ, 19 հունվարի 1920թ.)

“It is agreed: (1) that the government of the Armenian State shall be recognized as a de facto government on the condition that this recognition in no way prejudges the question of the eventual frontier. (2), that the allied governments are not prepared to send to the Transcaucasian states the three divisions contemplated by the Inter-Allied committee. (3) (a) to accept the principle of sending to the Caucasian States arms munitions and if possible food. (b) Marshal Foch and Field Marshal Wilson are invited to consider of what these supplies shall consist and the means for their despatch.

The American and Japanese representatives will refer these decisions to their respective Governments.”

(Paris, 19 January, 1920).

Միացյալ Նահանգները Հայաստանի Հանրապետության անկախությունը ճանաչել է 1920թ. ապրիլի 23-ին: Այդ ճանաչումը հետևյալ ձևակերպմամբ արտահայտվել է ԱՄՆ պետքարտուղար Բեյնբրիջ Քոլբիի (Bainbridge Colby) Վաշինգտոնում «Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ» դոկ. Գարեգին Պաստրմաճեանին ուղարկված նամակի մեջ.

«Պարոն. Ի պատասխան Միացյալ Նահանգների կողմից Ձեր կառավարության ճանաչումն առաջարկող Ձեր նախկին գրությունների, ես հաճույք ունեմ Ձեզ և Ձեր միջոցով Ձեր կառավարությանը տեղեկացնելու, որ Նախագահի հանձնարարականով, Միացյալ Նահանգների կառավարությունը այսօրվանից ճանաչում է Հայաստանի Հանրապետության de facto կառավարությունը:

Այսուհանդերձ, այս քայլն արվել է այն ըմբռնումով, որ սույն ճանաչումը որևէ ձևով չի կանխորոշում տարածքային սահմանները, որոնք, ըստ կայացած փոխհասկացության, հետագայում որոշվելիք հարցեր են:

Ընդունեցեք, պարոն, իմ հարգանաց հավաստիքը»:

(Վաշինգտոն, 23 ապրիլի 1920թ.)

“Sir: Referring to communications heretofore received from you on the subject of the proposed recognition of your Government by the Government of the United States, I am pleased to inform you, and through you, your Government, that, by direction of the President, the Government of the United States recognizes, as of this date, the de facto Government of the Armenian Republic.

This action is taken, however, with the understanding that this recognition in no way predetermines the territorial frontiers, which, it is understood, are matters for later delimitation.

Accept, Sir, the assurances of my highest consideration”

(Washington, April 23, 1920).

ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոն

Ի լրումն Միացյալ Նահանգների գործադիր իշխանության կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչման, Հայաստանի ճանաչումն հաստատվել է նաև ԱՄՆ-ի օրենսդիր իշխանության կողմից: Միացյալ Նահանգների Սենատը, հիմք ընդունելով Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի միաձայն որոշումը, խնդրո առարկայի վերաբերյալ 1920թ. մայիսի 13-ին ընդունել է հատուկ նախաբանով բանաձև, որը հեղինակել էր սենատոր, հետագայում ԱՄՆ նախագահ (1921-1923), Ուարրեն Հարդինգը (Warren Harding). Սույն բանաձևի համապատասխան հատվածը արձանագրում է հետևյալը.

«Քանզի Հայաստանի Հանրապետության անկախությունը պատշաճորեն ճանաչվել է Խաղաղության վեհաժողովի Գերագույն խորհրդի և Միացյալ Նահանգների կառավարության կողմից, այդմ եղիցի:

Որոշվեց. Այսու Միացյալ Նահանգների Սենատն իր անկեղծ շնորհավորանքն է փոխանցում Հայաստանի ժողովրդին Հայաստանի Հանրապետության անկախության առիթով, [որը տեղի է ունեցել] առանց խնդրո առարկա տարածքային սահմանների կանխորոշման, և կլինի ապագայում:

Որոշվեց. Այսու Միացյալ Նահանգների Սենատը հույս է հայտնում, որ հայ ժողովուրդը շուտով կունենա կայուն կառավարություն, անհատական ազատությունների և իրավունքների պատշաճ պաշտպանվածություն և ազգային ձգտումների ամբողջական իրականացում»:

“Whereas the independence of the Republic of Armenia has been duly recognized by the Supreme Council of the Peace Conference and the Government of the United States of America: Therefore be it.

Resolved: That the sincere congratulations of the Senate of the United States are hereby extended to the people of Armenia on the recognition of the independence of the Republic of Armenia, without prejudice respecting the territorial boundaries involved; and be it further.

Resolved: That the Senate of the United States hereby expresses the hope, that stable government, proper protection of individual liberties and rights, and the full realization of nationalistic aspirations may soon be attained by the Armenian people.”

Ակնհայտ է, որ Միացյալ Նահանգների կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչումը տեղի է ունեցել «տարածքային սահմանները … հետագայում որոշվելիք հարցեր են» պայմանով:

Եզրակացություն. Հաշվի առնելով, որ Միացյալ Նահանգները Հայաստանի Հանրապետության անկախությունը ճանաչել է հետագայում վերջինիս սահմանները ճշտելու պայմանով, ինչպես նաև Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը որոշվել է. ա) Փարիզի խաղաղության վեհաժողովի պաշտոնական հայցադիմումի (առաջին կոմպրոմի, compromis) (26 ապրիլի 1920թ.) և բ) Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի (երկրորդ կոմպրոմի, compromis) (10 օգոստոսի 1920թ.) հիման վրա ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից 1920թ. նոյեմբերի 22-ին կայացված Իրավարար վճռով, ուստի, Միացյալ Նահանգների կողմից պաշտոնապես ճանաչված հայ-թուրքական սահմանը վերոհիշյալ վճռով որոշված սահմանն է:

Այստեղ անհրաժեշտ է որոշ պարզաբանումներ տալ Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի վերաբերյալ: Ընդհանուր առ-

մամբ. «Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն կարգով և այն օրը, որը բխում է պայմանագրից կամ որի շուրջ համաձայնության են եկել բանակցող պետությունները»: (Հոդված 24(1), Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա, 1969)"A treaty enters into force in such manner and upon such date as it may provide or as the negotiating States may agree". (Article 24(1), Vienna Convention on Law of Treaties, 1969).

Այսուհանդերձ. «Պայմանագիրը կամ նրա մի մասը պայմանականորեն ի գործ է դրվում մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը ա/. եթե պայմանագիրը նախատեսում է նման բան; կամ բ/. բանակցող պետությունները մեկ այլ ձևով նման համաձայնության են եկել»: (Հոդված 25(1), Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա, 1969). "A treaty or a part of a treaty is applied provisionally pending its entry into force if: (a) the treaty itself so provides; or (b) the negotiating States have in some other manner so agreed." (Article 25(1), Vienna Convention on Law of Treaties, 1969).

Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածն արձանագրում է հետևյալը. «Թուրքիան և Հայաստանը, ինչպես նաև այլ Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայն են Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի իրավարարությանը ներկայացնել էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի որոշման հարցը, և ընդունել նրա որոշումն անմիջապես, ինչպես նաև այն պայմանները, որոնք նա կարող է հանձնարարել՝ ապահովելու համար Հայաստանի ելքը դեպի ծով, այնպես էլ նշյալ սահմանին հարակից թուրքական տարածքի ցանկացած մասի ապառազմականացումը»:

"Turkey and Armenia as well as the other High Contracting Parties agree to submit to the arbitration of the President of the United States of America the question of the frontier to be fixed between Turkey and Armenia in the vilayets of Erzerum, Trebizond, Van and Bitlis, and to accept his decision thereupon, as well as any stipulations he may prescribe as to access for Armenia to the sea, and as to the demilitarisation of any portion of Turkish territory adjacent to the said frontier."

Ակնհայտ է, որ Սևրի պայմանագիրը հստակորեն ամրագրում է, որ «Բարձր պայմանավորվող կողմերը» համաձայնվում են ընդունել նախագահ Վիլսոնի վճիռն «անմիջապես» և անվերապահորեն: Ավելին, նույն պայմանագրի 90-րդ հոդվածն ամրագրում է, որ Թուրքիան «նշյալ որոշման օրից» հրաժարվում է Հայաստանին փոխանցվելիք տարածքի նկատմամբ «իր բոլոր իրավունքներից և տիտղոսից».

«Այն պարագայում, երբ ըստ 89-րդ հոդվածի սահմանը որոշելիս նշյալ վիլայեթների տարածքն ամբողջությամբ կամ մասամբ կփոխանցվի Հայաստանին, ապա Թուրքիան սրանով իսկ նշյալ որոշման օրից հրաժարվում է փոխանցվող տարածքի նկատմամբ իր բոլոր իրավունքներից և տիտղոսից»:

"In the event of the determination of the frontier under Article 89 involving the transfer of the whole or any part of the territory of the said Vilayets to Armenia, Turkey hereby renounces as from the date of such decision all rights and title over the territory so transferred."

Եզրակացություն. Սևրի պայմանագրի մի մասը, այն է հոդված 89-ը, ինչպես նաև հոդվածներ 88; 90; 91 և 92, ըստ կողմերի միջև կայացված համաձայնության, ի գործ են դրվել պայմանագրի մնացած մասից անկախաբար և նրանց իրավական կարգավիճակը կապ չունի պայմանագրի մնացած մասի կարգավիճակի հետ:

ԱՐԱ ՊԱՊՅԱՆ
«Մոդուս վիվենդի» կենտրոնի ղեկավար
29 հոկտեմբերի 2009թ.

ՀԱՅ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԿԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՆ

Հայաստանի անկախության մասին հռչակագիրը Հայաստանի Հանրապետության հիմնադիր փաստաթուղթ է և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հետ միասին նրա հիմնարար երկու փաստաթղթերից մեկը: Այն Սահմանադրության հետ կազմում է մեկ միասնական ամբողջություն, քանի որ ՀՀ Սահմանադրությունը խարսխված է Անկախության մասին հռչակագրում ամրագրված սկզբունքների և նպատակների վրա:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սկսվում է հետևյալ պարբերությամբ . *«Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքներն ու համազգային նպատակները..... ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»:*

Հիմա տեսնենք, թե ի՞նչ *«հիմնարար սկզբունքներ և համազգային նպատակներ»* են ամրագրված Հայաստանի անկախության մասին հռչակագրի մեջ: Հռչակագրի 11–րդ կետով Հայաստանի Հանրապետությունը անվերապահորեն պարտավորվում է հետևյալը. *«Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»:*

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրության յոթերորդ կետը հռչակում է .*«Շեշտելով[1] իրենց հանձնառությունը՝ ձեռնպահ մնալ բարիդրացիական հարաբերությունների ոգուն անհարիր[2] քաղաքականություն վարելուց»:*

Հանձնառության այս ոչ հստակ ձևակերպումը չափազանց ընդգրկուն է: Այն շատ բան կարող է նշանակել, մեկնաբանության հարց է: Սակայն միանշանակ է, որ սրանով Թուրքիան իրավունք է ստանում վերահսկելու Հայաստանի արտաքին քաղաքականությունը: Արձանագրության նման հանձնառությամբ Հայաստանի Հանրապետությունը չի կարող *«սատար կանգնել»* ցեղասպանության ճանաչման գործընթացին, քանի որ նման քաղաքականությունը *«անհարիր կլինի բարիդրացիական հարաբերությունների ոգուն»:*

Նման հանձնառությունը հակասության մեջ է մտնում Հայաստանի անկախության հռչակագրի մեջ ամրագրված և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ վկայակոչված *հիմնարար սկզբունքներից և համազգային նպատակներից* առնվազն մեկին, հետևաբար հակասահմանադրական է:

ԱՐԱ ՊԱՊՅԱՆ
«Մոդուս վիվենդի» կենտրոնի ղեկավար
14 սեպտեմբերի 2009թ.

---

1. Արգործնախարարության թարգմանության մեջ *«reiterate»* բառը թարգմանված է *«հաստատել»* բառով: *«Reiterate»* նշանակում է մի բանը շեշտելու, ընգծելու նպատակով կրկնել (repeat, say again, go over, restate, do again, recap, retell): Այն չունի *հաստատել (confirm)* իմաստը: *Շեշտելն* ավելի թույլ հանձնառություն է, քան *հաստատելը*:

2. Արգործնախարարության թարգմանության մեջ *«incompatible»* բառը թարգմանված է *«չհամապատասխանող»* բառով, որն առնվազն ոճական սխալ է: Ճիշտը՝ *«անհամատեղելի, անհարիր»* բառերն են:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Բանաձև 110 (II)
Միջոցներ, որոնք պետք է ընդունվեն ընդդեմ նոր պատերազմի քարոզչության և հրահրողների, 3-ը նոյեմբերի 1947թ.

Резалюция 110 (II) Генеральной Ассамблеи ООН
Меры, которые должны быть приняты против пропоганды и поджигателей новой войны, 3 ноября 1947г.

Принимая во внимание, что в Уставе Организации Объединенных Наций народы выразили их решимость избавить градущие поколения от бедствий войны, дважды в наше время принесших человечеству невыразимое горе, и проявлять терпимость и жить вместе, в мире друг с другом, как добрые соседи, и

Принимая во внимание, что Устав также требует развития всеобшего уважения к основным свободам, в том числе к свободе слова, и соблюдения их, причем все члены обязались в статье 56 предпринимать совместные и сомостоятельные действия дла такого соблюдения основных свобод,

Генеральная Ассамблея

1. осуждает любую форму ведущейся в любой стране пропоганды, имеющей целью или способной создать или усилить угрозу миру, нарушением мира или акт агрессии.

...

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Բանաձև 127 (II)
Կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն, 15-ը նոյեմբերի 1947թ.

Резолюция 127 (II) Генеральной Ассамблеи ООН
Ложная или извращенная информация, 15 ноября 1947г.

Генеральная Ассамблея,

Считая, что государство — члены Организации Объединенных Нации, согласно статье 1 Устава, объязаны развивать дружественные отношения между собой и осуществлять международное сотрудничество, развивая для этого и укрепляя уважение к правам человека и основным свободам,

Считая, что для достижения этой цели необходимо облегчать и расширять распространение во всех странах информации, способной улучшить взаимное понимание между народами и обеспечить дружественные отношения между ними,

Считая, что значительные успехи в этой области могут быть осуществлены лишь путем проведения, в пределах того, что согласно с основными законами каждой данной страны, мер для боръбы с распространением ложных или извращенных известий, которые могут повредить дружеским отношениям между государствами,

Предлагает правительствам государств — членов Организации Объединенных Наций:

1. изучить меры, которые могут быть приняты с пользой в отдельных государствах, в пределах того, что согласно с основными законами их для боръбы с распространением ложных или извращенных известий, которые могут повредить дружеским отношениям между государствами,

...

ЧАСТЬ X

ПРАВО ГОСУДАРСТВ, НЕ ИМЕЮЩИХ ВЫХОДА К МОРЮ, НА ДОСТУП К МОРЮ И ОТ НЕГО И НА СВОБОДУ ТРАНЗИТА

...

Статья 124

Употребление терминов

1. Для целей настоящей Конвенции:

a) “государство, не имеющее выхода к морю”, означает государство, которое не имеет морского побережья;

b) “государство транзита” означает государство с морским побережьем или без него, которое расположено между государством, не имеющим выхода к морю, и морем и через территорию которого проходит транзитное движение;

c) “транзитное движение” означает транзит людей, багажа, товаров и транспортных средств через территорию одного или нескольких государств транзита, когда проход через такую территорию с перегрузкой, складированием, разделением партий грузов или переменой вица транспорта или же без них является лишь частью полного пути, начинающегося или заканчивающегося в пределах территории государства, не имеющего выхода к морю;

d) “транспортные средства” означают:

e) железнодорожный подвижной состав, морские, озерные и речные суда и автомобильный транспорт;

f) носильщиков и вьючных животных, когда это требуют местные условия

2. Государства, не имеющие выхода к мгрю, и государства транзита могут по соглашению между собой включать в число транспортных средств трубопроводы и газопроводы и другие транспортные средства, помимо тех, которые включены в пункт 1.

Статья 125

Право на доступ к морю и от него и свобода транзита

1. Государства, не имеющие выхода к морю, имеют право на доступ к морю и от него в целях осуществления прав, предусмотренных в настоящей Конвенции, в том числе прав, относящихся к свободе открытого моря и общему наследию человечества., С этой целью государства, не имеющие выхода к морю, пользуются свободой транзита через территории государств транзита всеми транспортными средствами.

2. Условия и порядок осуществления свободы транзи-

та согласовываются между заинтересованными государствами, не имеющими выхода к морю, и государствами транзита посредством двусторонних, субрегиональных или региональных соглашении.

3. Государства транзита в осуществление своего полного суверенитета над своей территорией имеют право принимать все меры, необходимые для обеспечения того, чтобы права и возможности, предусмотренные в настоящей Части для государств, не имеющих выхода к морю, никоим образом не ущемляли законных интересов государства транзита.

Статья 126

Исключение из сферы применения клаузулы о наиболее благоприятствуемой наций

При применении клаузулы о наиболее благоприятствуемой нации исключаются те положения настоящей конвенции, а также специальные соглашения по вопросам осуществления права доступа к морю и от него, которые устанавливают права и льготы в силу особого географического положения государств, не имеющих выхода к морю.

Статья 127

Таможенные пошлины, налоги и другие сборы

1. Транзитное движение не подлежит обложению никакими таможенными пошлинами и налогами или другими сборами, за исключением сборов, взимаемых за конкретные услуги, оказываемые в связи с таким движением.

2. Транспортные средства, осуществляющие транзит, и другие средства, предоставляемые государствам, не имеющим выхода к морю, и используемые ими, не подлежат обложению налогами или сборами, превышающими те, которые взимаются за пользование транспортными средствами государства транзита.

Статья 128

Беспошлинные зоны и другие таможенные льготы

Для удобства транзитного движения могут быть предусмотрены беспошлинные зоны или другие таможенные льготы в портах входа и выхода в государствах транзита по соглашению между этими государствами и государствами, не имеющими выхода к морю.

Статья 129

Сотрудничество в строительстве и усовершенствовании транспортных средств

Պան Գի Սուն

Если в государствах транзита отсутствуют транспортные средства для осуществления свободы транзита или если существующие средства, включая портовые сооружения и оборудование, в какомлибо отношении недостаточны, заинтересованные государства транзита и государства, не имеющие выхода к морю, могут сотрудничать в их строительстве или усовершенствовании.

Статья 130

Меры в целях избежания или устранения задержек или других “трудностей технического”характера в транзитном движении

1. Государства транзита принимают все надлежащие меры е целью избежать задержек или других трудностей технического характера в транзитном движении.

2. В случае таких задержек или трудностей компетентные власти государств транзита и заинтересованных государств, не имеющих выхода к морю, сотрудничают в целях их быстрого устранения.

Статья 131

Равенство режима в морских портах

Суда, плавающие под флагом государств, не имеющих выхода к морю, пользуются в морских портах тем же режимом, что и режим, который предоставляется другим иностранным судам.

Статья 132

Предоставление более широких возможностей транзита

Настоящая конвенция никоим образом не влечет за собой прекращения возможностей транзита, которые являются более широкими, чем возможности, предусмотренные в настоящей Конвенции, и которые согласованы государствами-участниками настоящей Конвенции или предоставлены каким-либо государством-участником. Настоящая Конвенция также не препятствует такому предоставлению более широких возможностей в будущем.

ՄԱԿ-Ը ԿՕԳՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԴԵՊԻ ԾՈՎ ԵԼՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ

Այս մասին էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ հավաստիացրեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ, զարգացող, շրջափակված և փոքր-կղզի պետությունների հարցերով բարձրագույն ներկայացուցիչ Չեքյ Սիդի Դիարան, որը Երևանում է սգտնվում մասնակցելու համար Կրթության և զարգացման գլոբալ ինովացիոն համաժողովին: Աշխարհում 44 երկրներ, որոնցից 15-ը՝ Աֆրիկայում, 14-ը՝ Եվրոպայում, 12-ը՝ Ասիայում, 2-ը՝ Հարավային Ամերիկայում, ելք չունեն դեպի օվկիանոս: Իսկ դեպի ծով ելք չունեցող երկրների կոնֆերանսում ներգրավված են 31 երկիր: Չեքյ Սիդի Դիարան այն կարծիքը հայտնեց, որ նման կարգավիճակ ստանալն ու կոնֆերանսի երկրներին միանալը կօգնի Հայաստանին ստանալու միջազգային հանրության աջակցությունը մի շարք առաջնահերթությունների մասով: Դրանք են՝ պայմանների ապահովում տեղական ապրանքների ինքնարժեքի նվազեցման և մրցունակության բարձրացման համար, տարածաշրջանային ենթակառուցվածքների զարգացում, առևտրի զարգացում և աջակցություն արտաքին պարտքի կրճատմանը ու օտարերկրյա ներդրումների ներգրավմանը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալը նաև կարևորեց Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և դրան զուգահեռ ենթակառուցվածքների ստեղծումը: Նա նաև ընդգծեց տեղեկատվական հասարակության ձևավորման կարևորությունը: Ա. Մ. /Azg Armenian Daily/23.10.2008

«ԱՆԱՎԱՐՏ ՆՅՈՒՐՆԲԵՐԳ». ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ



Իսմայիլ Հաքքի բեյը՝ ձերբակալված անգլիացի զինվորների կողմից

1918թ. Մուդրոսի զինադադարից հետո, ձգտելով ազատվել երիտթուրքերի վարկաբեկված վարչակարգից և կանխելով Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակ տարած դաշնակիցների հնարավոր պատժիչ գործողությունները Թուրքիայի հանդեպ, Սիմեդ Իզզեթ փաշայի գլխավորությամբ կազմված նոր կառավարությունը որոշում է Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ ներքաշելու և հայերի դեմ զանգվածային կոտորածներ կազմակերպելու համար դատական պատասխանատվության ենթարկել երիտթուրքական կառավարության ղեկավարներին և «Միություն և առաջադիմություն» կուսակցության կոմիտեի անդամներին:

1918թ. դեկտեմբերի 16-ի որոշումներով կազմվեցին հարցաքննիչ հանձնախմբեր (գլխավոր նախագահ՝ Անկարայի նախկին վալի Մազհար բեյ), որոնք սկսեցին հավաքել արևմտահայության կոտորածներին վերաբերող մեղադրական ապացույցներ՝ ծածկագիր հեռագրեր, պաշտոնական գրություններ, հրահանգներ և հրամաններ, ինչպես նաև ականատեսների վկայություններ:

Օսմանյան կայսրության նահանգները բաժանվեցին 10 դատաքննչական շրջանների, յուրաքանչյուր շրջանի համար նշանակվեցին դատախազներ, հարցաքննիչ դատավորներ և քարտուղարներ: Ձերբակալվեցին երիտթուրքական մի շարք նախարարներ ու կուսակցության ղեկավարներ, շրջանային պատասխանատու քարտուղարներ, լիազորներ, կուսակալներ, զինվորականներ և այլ պաշտոնյաներ: 1919թ. հունվարի 8-ին Ստամբուլում կազմվեցին Առաջին, Երկրորդ և Երրորդ ռազմական արտակարգ ատյաններ: Դատական նիստերի ընթացքում քննվեցին երիտթուրքական կառավարության ղեկավարների, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների և շրջանային պատասխանատու քարտուղարների ու պաշտոնյաների, հայկական կոտորածներն իրականացնող «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի (Հատուկ կազմակերպություն), Յոզղաթի, Տրապիզոնի, Բյոյուքդերեի (Կ. Պոլսի արվարձան) և Խարբերդի տեղահանությունն ու կոտորածները կազմակերպողների հանցավոր գործունեությունը: Թեև օրենքը նախատեսում էր հանցագործներին դատապարտել ոճրագործության վայրում, սակայն 1919 թ. փետրվարի 5-ին, Ստամբուլի Ռազմական արտակարգ ատյանը Յոզղաթի տեղահանության և կոտորածի հանցագործների դատավարության առաջին նիստում հատուկ որոշում կայացրեց մեղադրյալներին Ստամբուլում դատելու մասին:

1919թ. մարտի 8-ին, սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի (1918-1922) հատուկ հրամանագրով, երիտթուրքական կուսակցական պարագլուխներն ու նախարարները հանձնվեցին Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանի քննությանը: 1919թ. մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշան ևս դատապարտեց երիտթուրքերի կառավարության գործադրած հանցագործ ծրագիրը:

Երիտթուրքական կուսակցության պարագլուխների և նախարարների դատավարությունն սկսվեց 1919թ. ապրիլի 27-ին Ստամբուլում և ընդհատումներով շարունակվեց մինչև հունիսի 26-ը (13 նիստ): Այս դատաքննությունների ընթացքում հեռակա կարգով մեղադրվեցին 11 ու դատավարությանը ներկա 20 կուսակցական և պետական բարձրաստիճան գործիչներ: Մայիսի 28-ին անգլիական հրամանատարությունն անսպասելիորեն 77 մեղադրյալի թուրքական բանտից աքսորեց Մալթա կղզի:

Երիտթուրքերի հանցագործությունների գործով վերջիններիս դատավճիռը հրապարակվեց 1919թ. հուլիսի 5-ին: 31 հանցագործներից 4-ը՝ Ներքին գործերի նախարար, երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի նախագահ ու մեծ վեզիր (1917-1918) Թալեաթ փաշան, Ռազմական նախարար Էնվեր փաշան, Ծովային նախարար, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Սիրիայում թուրքական 4-րդ բանակի հրամանատար Ջեմալ փաշան և «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ, հանրակրթության նախարար դոկտոր Նազըմը հեռակա կարգով դատապարտվեցին մահվան: Մյուս 27 մեղադրյալների մեծ մասը դատապարտվեցին տարբեր տարիների ազատազրկման, իսկ մի խումբ մեղադրյալներ հանցանշանների բացակայության պատճառով արդարացվեցին: Դատավճռում մոռացության մատնվեցին անգլիացիների հովանավորությամբ կալանատնից Մալթա կղզի աքսորված հանցագործները: Հետագայում նրանցից շատերը վերադարձան աքսորից և տարբեր բարձր պաշտոններ զբաղեցրին Հանրապետական Թուրքիայում:

1919թ. հունիսի 21-ին, 23-ին և 28-ին տեղի ունեցան «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների և պաշտոնատար այլ անձանց դատավարությունները: Դատավճիռը հրապարակվեց 1920թ. հունվարի 8-ին: 36 մեղադրյալներից 3-ը դատապարտվեցին 10 տարվա, մյուսները՝ մի քանի տարվա ազատազրկման:

Յոզղաթի հայերի կոտորածն իրականացնողների դատավճիռը հրապարակվել է 1919թ-ի ապրիլի 8-ին: Յոզղաթի մութասարիֆի տեղակալ և Բողազլյանի քայմաքամ Քեմալ բեյը դատապարտվեց մահապատժի, իսկ Յոզղաթի ոստիկանապետ Թևֆիք բեյը՝ 15 տարվա տաժանակրության: Տրապիզոնի կոտորածների իրականացնողների դատավճիռը հրապարակվեց 1919թ. մայիսի 22-ին: Ութ հանցագործներից երկուսը՝ Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմի բեյն ու երիտթուրքական կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիմ բեյը հեռակա կարգով դատապարտվեցին մահվան, մյուսները՝ տարբեր ժամկետներով ազատազրկման: Բյոյուքդերեի հայերի և հույների կոտորածները կազմակերպողների դատավճիռը հրապարակվեց 1919թ. մայիսի 24-ին: Բոլոր մեղադրյալները դատապարտվեցին մի քանի տարվա ազատազրկման: Խարբերդի հայերի տեղահանության և կոտորածների գործուն մեղադրյալների դատավճիռը կայացվեց 1920թ. հունվարի 13-ին: Երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահ Բեհաէդդին Շաքիր բեյը հեռակա կարգով դատապարտվեց մահվան, իսկ երիտթուրքական կուսակցության պատասխանատու քարտուղար Ռեսնելի Նազիմ բեյը՝ 15 տարվա տաժանակրության:

Հատկանշական է, որ Սևրի պայմանագրի կետերից մեկը անդրադառնում էր մասսայական բռնություններ իրականացրած թուրք հանցագործներին պատժելուն: Այսպես. թուրքական կառավարությունը ընդունում էր նաև Դաշնակից տերությունների իրավունքը՝ քրեական պատասխանատվության ենթարկել ոչ միայն պատերազմի օրենքների և սովորույթների դեմ գործողությունների իրականացման մեջ մեղադրվող անձանց, այլև պարտավորվում էր «Դաշնակից տերություններին հանձնել վերջիններիս կողմից պահանջվող անձանց, որոնք պատասխանատու էին պատերազմական վիճակում Օսմանյան կայսրության մեջ առ 1 օգոստոսի

1914թ. մտնող տարածքներում ջարդերի համար»:

Դատավարությունների արձանագրություններն ու որոշումները 1919-1920թթ. հրատարկվեց թուրքական պաշտոնական «Թաքվիմ-ը վեքայի» թերթի հավելվածներում: Բոլոր անվանաթերթերը կրում են «Նորին մեծություն Փադիշահի 1335թ.(1919) մարտի 8-ի կայսերական հրամանով կազմված ռազմական արտակարգ ատյանի դատավարության արձանագրությունը» խորագիրը:

Թուրքական և հայկական մամուլում նույնպես հրապարակումներ եղան տեղի ունեցած դատաքննությունների վերաբերյալ:

Մեղադրական եզրակացություններում բերված փաստաթղթերը՝ ծածկագիր հեռագրերը, նամակները, փաստեցին, որ արևմտահայության տեղահանություններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառումներ չեն եղել, սահմանափակ կամ տեղական բնույթ չեն կրել, այլ եղել են կանխամտածված և իրականացվել են բացարձակապես կուսակցության կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ, հատուկ կենտրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով: 1919-1920թթ. Թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված երիտթուրքական դատավարությունն այն եզակի ու անհերքելի փաստերից է, որով ապացուցվում է Օսմանյան Թուրքիայում հայերի դեմ պետականորեն կազմակերպված ու իրագործված ցեղասպանությունը: Այս դատաքննություններն ու մեղադրական եզրակացությունները լուրջ փաստարկներ են թուրքական պաշտոնական պատմագրության՝ Հայոց ցեղասպանությունը ժխտող պնդումները հերքելու համար: Այս դատավարության ընթացքում դատապարտված երիտթուրք գործիչների ու պաշտոնյաների մեծ մասը հետագայում հայտնվեցին Քեմալ Աթաթուրքի կողքին՝ Հանրապետական Թուրքիայի զինվորական և քաղաքական վերնախավում՝ զբաղեցնելով կարևորագույն պաշտոններ:

Մեղադրյալների ցուցակ

ԻՍՄԱԻԼ ԷՆՎԵՐ ՓԱՇԱ 1881-1922

Հայոց ցեղասպանության կազմակերպիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, 1914թ. Ռազմական նախարար, 1919թ. Օսմանյան ռազմական արտակարգ ատյանի կողմից դատապարտվել է մահապատժի, 1922թ. սպանվել է Կենտրոնական Ասիայում:

ԱՀՄԵԴ ՋԵՄԱԼ ՓԱՇԱ 1872-1922

Հայոց ցեղասպանության կազմակերպիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, Ծովային նախարար, 1914թ. Սիրիայում թուրքական 4-րդ բանակի հրամանատար, 1919թ. Օսմանյան ռազմական արտակարգ ատյանի կողմից դատապարտվել է մահապատժի, 1922թ. հուլիսին սպանվել է Արտաշես Գևորգյանի և Պետրոս Տեր- Պողոսյանի կողմից:

ԴԿՏ. ՆԱԶԸՄ 1872-1926

«Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ, 1918թ. Հանրակրթության նախարար, 1919թ. Օսմանյան ռազմական արտակարգ ատյանի կողմից դատապարտվել է մահապատժի, 1926թ. կախաղան է բարձրացվել:

ԲԵՀԱԷԴԴԻՆ ՇԱՔԻՐ 1877-1922

Երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահ, 1920թ. Օսմանյան ռազմական արտակարգ ատյանի կողմից դատապարտվել է մահապատժի, 1921թ. դեկտեմբերին սպանվել է Արշավիր Շիրակյանի կողմից Հռոմում:

ՀԱԼԻԼ ՄԵՆԹԵՇԵ 1874-1948

«Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, 1914-1915թթ. Օսմանյան խորհրդարանի նախագահ, 1915թ. Պետական խորհրդի նախագահ, 1915-1917թթ. Արտաքին գործերի նախարար, 1917-1918թթ. Արդարադատության նախարար, 1919թ. Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2760, 1931թ.-ից Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր՝ Իզմիրից:

ՄԵՀՄԵԴ ՋԱՎԻԴ ԲԵՅ 1875-1926

«Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, 1914թ. Ֆինանսների նախարար, 1919թ. Ռազմական արտակարգ ատյանի կողմից հեռակա կարգով դատապատվել է 15 տարվա ազատազրկման, 1921թ. Լոնդոնի կոնֆերանսում հանդես է եկել որպես Անկարայի պատվիրակության խորհրդատու:

ՀՈՒՍԵԻՆ ՌԱՈՒՖ ՕՐԲԱՅ 1881-1964

«Միություն և առաջադիմություն» կուսակցության և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ, 1918թ. Ծովային նախարար, Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2776, 1921-1922թթ. Անկարայի կառավարության Ծովային նախարար, 1922-1923թթ. Անկարայի կառավարության վարչապետ:

ԱԼԻ ՖԵԹԻՀ ՕՔՅԱՐ 1880-1943

«Միություն և առաջադիմություն» կուսակցության և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ, 1914թ. Օսմանյան խորհրդարանի պատգամավոր՝ Ստամբուլից, Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2689, 1923-1924թթ. Թուրքիայի Մեծ ազգային ժողովի նախագահ, 1924-1925թթ. Թուրքիայի Հանրապետության վարչապետ:

ՇՅՈՒՔՐՈՒ ՔԱՅԱ 1883-1959

Հայերի տեղահանության և կոտորածների անմիջական մասնակից, «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, Տեղահանության գլխավոր տնօրեն, Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2738, 1923թ.-ից երեք անգամ ընտրվել է Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր, 1924թ. Թուրքիայի Հանրապետության Գյուղատնտեսության նախարար:

ՄՈՒՍՏԱՖԱ ԱԲԴՈՒԼՀԱԼԻՔ ՌԵՆԴԱ 1881-1957

Հայերի տեղահանության և կոտորածների անմիջական մասնակից, 1914-1915թթ. Բիթլիսի կառավարիչ, 1915-1917թթ. Հալեպի կառավարիչ, 1920թ. Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2800, 1924-1934թթ. Ֆինանսների նախարար, 1927-1930թթ. Ազգային Պաշտպանության նախարար, 1935-1946թթ. Թուրքիայի Մեծ ազգային ժողովի նախագահ, 1938թ. Հանրապետության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար:

ՄԻԴՀԱՏ ՇՅՈՒՔՐՈՒ ԲԼԵՂԱ 1874-1956

Հայերի տեղահանության և կոտորածների անմիջական մասնակից, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, կուսակցության գլխավոր քարտուղար, 1915թ. Կրթության նախարար, 1919թ. Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2756, 1935-1950թթ. Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր:

ԱՀՄԵԴ ՄՈՒՀԱՄՄԵՐ (ՋԱՆՔԱՐԴԵՇ) 1874-1928

Հայոց ցեղասպանության մասնակից, 1913-1916թթ. Սվասի կառավարիչ, 1919թ. Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2719, 1922թ. Կայսերիի մութասարրիֆ, 1923թ., 1927թ. Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր՝ Սվասից,

ՀԱՍԱՆ ԹԱՀՍԻՆ ՈՒՋԵՐ 1877-1939

Հայոց ցեղասպանության մասնակից, 1913-1914թթ. Վանի կառավարիչ, 1914-1916թթ. Էրզրումի կառավարիչ, 1920թ. Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2774, 1921թ. Իզմիրի, 1925թ. Արդահանի, 1927թ. Էրզրումի և 1933թ. Կոնիայի պատգամավոր:

ՍԱԲԻԹ ԲԵՅ ՍԱՂԸՐՕՂԼՈՒ 1881-1960

(Քեմահլը Սահիրզադե Սաբիթ բեյ) Հայոց ցեղասպանության մասնակից, 1914, 1916թթ. Խարբերդի կառավարիչ, 1919թ. Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2686, 1920-ական թթ. Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր՝ Երզնկայից:

ՋԵՎԴԵԹ ԲԵՅ (ԲԵԼԲԵՋ)

Հայերի կոտորածների մասնակից, Վանի կառավարիչ, Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2690:

ՄՈՒՍԱ ՀԻԼՄԻ ԴԵՄՈՔԱՆ 1865-1929

1915թ. Քըրշեհիրի մութասարրիֆ, Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2712:

ԶԻՅԱ ԳՅՈՔԱԼՊ 1876-1924

«Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, գրող, պանթուրքիզմի հիմնադիր գաղափարախոսներից մեկը, 1912թ. Օսմանյան խորհրդարանի պատգամավոր, 1915թ. Ստամբուլի Համալսարանի Սոցիոլոգիայի պրոֆեսոր, 1919թ. Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2759, 1923թ. Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր՝ Դիարբեքիրից:

ՀՈՒՍԵԻՆ ՋԱՀԻԹ ՅԱԼՉԸՆ 1875-1957

«Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, գրող, լրագրող և քաղաքական գործիչ («Թանին» թերթի խմբագիր), Օսմանյան խորհրդարանի պատգամավոր՝ Ստամբուլից, 1919թ. աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2675, Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր,1939-ին՝ Ստամբուլից, 1950-ին՝ Կարսից:

ՄՈՒՍՏԱՖԱ ՌԵՇԱԹ ՄԻՄԱՐՕՂԼՈՒ 1882-1953

1915թ. Ստամբուլի քաղաքացիական ոստիկանության տնօրեն, 1920թ. Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2798, 1934թ. Պետական խորհրդի նախագահ, 1939թ. Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր:

ՍՈՒԼԵՅՄԱՆ ՖԱԻՔ ՓԱՇԱ 1886 – ?

11-րդ կորպուսի հրամանատար, 1915-1916թթ. Խարբերդի կառավարիչի տեղակալ և զորամասերի հրամանատար, Խարբերդում զինվորագրման հանձնաժողովի նախագահ, 1920թ. Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2807:

ՍՈՒԼԵՅՄԱՆ ՆԵՋԱՄԻ ԲԵՅ (ՍԵԼՄԱՆ) 1871-1943

1914-1916թթ. Սամսունի մութասարրիֆ, 1916-1918թթ. Սվասի կառավարիչ, 1920թ. Անգլիական հրամանատարության կողմից աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2812, 1923թ. Կաստամունի կառավարիչ, Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր՝ Սամսունից:

ԱՐԻՖ ՖԵՎԶԻ ԲԵՅ ՓԻՐԻՆՉՉԻՕՂԼՈՒ 1878-1933

Օսմանյան խորհրդարանի պատգամավոր՝ Դիարբեքիրից, 1919թ. աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2743, Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր՝ Դիարբեքիրից:

ԱԼԻ ԻՀՍԱՆ ՍԱԲԻՍ ՓԱՇԱ 1882-1957

6-րդ բանակի հրամանատար, 1915-1918թթ Կովկասյան և Իրաքի ռազմաճակատ, 1920թ. աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2667, 1921թ. 1-ին բանակի հրամանատար:

ՔԱՐԱ ՎԱՍԻՖ 1872-1931

«Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, Ջինվորական, քաղաքական գործիչ, 1920թ. աքսորվել է Մալթա, բանտարկյալ N-, Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր՝ Սվասից:

ԱՀՄԵԴ ՇՅՈՒՔՐՈՒ ԲԵՅ 1873/75-1926

«Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, 1913-18թթ. Ազգային լուսավորության նախարար, «Ջաման» (ժամանակ) թերթի խմբագիր, 1919թ. աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2763, 1923թ. Տրապիզոնի կառավարիչ, Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր՝ Իզմիրից:

ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵՄԱԼ ԲԵՅ 1868 – 1926 (Քարա Քեմալ)

«Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, Մատակարարման նախարար, աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2761:

ԱԼԻ ՄՅՈՒՆԻՖ ԲԵՅ ՅԵՂԵՆԱ 1847 -1951

«Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, 1915 -1916թթ. Լիբանանի կառավարիչ, 1916թ. Հասարակական աշխատանքների նախարար, 1919թ. աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2762, Ադանայի քաղաքապետ, Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր՝ Մերսինից, Ադանայից:

ՍՈՒԼԵՅՄԱՆ ՆՈՒՄԱՆ ՓԱՇԱ 1868 – 1925

«Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, Գեներալ, բանակի բժշկական ծառայության գլխավոր, աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2732:

ԱՀՄԵԴ ՖԱԻՔ ԷՐՆԵՐ ԲԵՅ

1914-1915թթ. Բաղդատի կառավարչի օգնական, 1916-1918թթ. Ստամբուլի ոստիկանության տնօրեն, 1919թ. աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2724:

ԻԼՅԱՍ ՍԱՄԻ ԲԵՅ (ՄՈՒՇ) ?-1945

Օսմանյան խորհրդարանի պատգամավոր՝ Մուշից, 1920թ. Աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2810, Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր՝ Մուշից, Բիթլիսից:

ԱԼԻ ՋԵՆԱՆԻ ԲԵՅ ?-?

«Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, Օսմանյան խորհրդարանի պատգամավոր՝ Հալեպից, 1920թ. Աքսորվել է Մալթա, բանտարկյալ N 2805, 1923թ. Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր, 1924թ. Առևտրի նախարար:

Հեռակա կարգով դատի տրված մեղադրյալներն էին՝

1. Թալեաթ փաշա - Ներքին գործերի նախարար, մեծ վեզիր (1917-1918), **2. Էնվեր փաշա** - ռազմական նախարար, **3. Ջեմալ փաշա** - ծովային նախարար, **4. Բահադդին Շաքիր բեյ** - երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահը, **5. Դոկտ. Նազըմ բեյ** - կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ, **6. Զավիդ բեյ** - ֆինանսների նախարար, **7. Սուլեյման էլբիստանի բեյ** - հողագործության և առևտրի նախարար (1915-1917), **8. Մուստաֆա Շերիֆ բեյ** - հողագործության և առևտրի նախարար (1917-1918), **9. Օսկան էֆենդի** - փոստի և հեռագրատան նախարար (1914-1917), **10. Դոկտ. Ռուզուհի էֆենդի** - կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, **11. Ազիզ էֆենդի** - հասարակական անվտանգության նախարար, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ

Դատարանում ներկա գտնվող մեղադրյալներ՝

1. Սայիդ Հալիմ փաշա - մեծ վեզիր (1913-1916), **2. Միդհատ Շյուքրի բեյ** - կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար, **3. Ահմեդ Ջեվադ բեյ** - Կ.Պոլսի պարետ, «Թեշքիլաթ-ը մահսուսե»- ի անդամ, **4. Աթիֆ բեյ** - Անկարայի պատգամավոր, «Թեշքիլաթ-ը մահսուսե»- ի անդամ, **5. Զիա Գյոքալփ** - կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, **6. Քյուչուկ Թալաաթ բեյ** - կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, **7. Ռիզա բեյ** - կուսակցության կենտրոնական կոմիտեի և «Թեշքիլաթ-ը մահսուսե»- ի անդամ, **8. Իբրահիմ բեյ** - մեջլիսի նախագահ, **9. Հայրի էֆենդի** - շեյխ ուլ-իսլամ, **10. Մուսա Քյազիմ էֆենդի** - շեյխ ուլ-իսլամ, **11. Խալիլ էֆենդի** - արդարադատության և արտաքին գործերի նախարար, «Թեշքիլաթ-ը մահսուսե»- ի անդամ, **12. Ահմեդ Նեսիմի բեյ** - արտաքին գործերի նախարար (1917-1918), **13. Իսմայիլ Ջանփոլատ բեյ** - ներքին գործերի նախարար (1917-1918), **14. Աբբաս Հալիլ փաշա** - հասարակական աշխատանքների նախարար (1915-1917), **15. Ալի Մյունիֆ բեյ** - հասարակական աշխատանքների նախարար (1917-1918), **16. Շյուքրի բեյ** - հանրակրթական նախարար, «Թեշքիլաթ-ը մահսուսե»- ի անդամ, **17. Քեմալ բեյ** - պարենավորման նախարար, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, **18. Հուսեյն Հաշիմ բեյ** - փոստի և հեռագրատան նախարար (1917-1918), **19. Ռիֆաթ բեյ** - Օսմանյան խորհրդարանի նախագահ, **20. Մահմեդ էսադ էֆենդի** - շեյխ ուլ-իսլամ:

Աղբյուրը՝ www. genocide-museum.am

ԿԱՐԵՎՈՐ ԱՆՑՔԵՐ ՅԱՆԻԿՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Դատախազի կողմից ուղղված հարցերից և նրանց տրված պատասխաններից կարևորագույնները քաղել ենք ԼԵՎՈՆ ԵՐԿԱԹԻ ընդարձակ տեղեկատվությունից:

Հարց - Ե՞րբ սպանեցիք երկու հյուպատոսներին, նայեցի՞ք նրանց աչքերի մեջ:

Պատասխան - Նախ՝ ես մարդ չեմ սպանել, այլ աշխարհը մաքրել եմ երկու սատանայից:

Հ. - Կարո՞ղ եք ասել, թե ի՞նչ է նշանակում «սպանել»:

Պ. - Դուք դրա բացատրությունը գիտեք, դո՛ւք պատասխանեք:

Հ. - Իմացե՞լ եք զորավար Դրոյի, Համազասպի, Սեպուհի, Անդրանիկի, Քեռիի անունները, որոնք իրենց կամավորական ջոկատներով թուրքեր են ջարդել, նույնիսկ թուրք երեխաների են փռի մեջ այրել:

Պ. - Գիտեմ բոլորի անուններն էլ, մասնավորապես՝ Դրոյի խմբում եղել են ճանապարհներ ու կամուրջներ կառուցող: Այդ կամավորները, հազիվ մի քանի խումբ, ինչպե՞ս կարող էին թուրքական և գերմանական բանակով պաշտպանված գծերն անցել և թուրքեր ջարդել, տրամաբանակա՞ն է արդյոք: Թվե՛րը թող խոսեն, երբ ամբողջ մի ժողովուրդ է բնաջնջվել անողոքաբար:

Հ. - Լսե՞լ եք Սողոմոն Թեհլերյանի անունը, որ սպանել է Թուրքիայի վարչապետ Թալեաթ փաշային:

Պ. - Այո՛, լավ գիտեմ պատմությունը, Թալեաթ փաշան Հայկական ցեղասպանությունը կազմակերպող երեք անձերից մեկն էր: Թալեաթը փախել էր թուրքերի դաշնակից Գերմանիա, Թեհլերյանը գտավ նրա հետքը ու Բեռլինի փողոցներից մեկում իր ազգի և հարազատների վրեժը լուծեց:

Հ. - Այսինքն սպանեց, չէ՞:

Պ. - Այո՛, սպանեց և շատ լավ արեց: Թուրքիայի դաշնակից Գերմանիայում՝ Բեռլինում, տեղի ունեցավ դատավարություն՝ բոլոր ազգերի թղթակիցների և ներկայացուցիչների ներկայությամբ: Հայերին բնաջնջելու համար ուղարկված հեռագրերի պատճեններն այսօր գոյություն ունեն, վերցրեք և կարդացեք: Գերմանական դատարանն անպարտ ճանաչեց Թեհլերյանին:

Հ. - Գիտե՞ք, թե ով է Արշավիր Շիրակյանը, որ նույնպես ոճիր է գործել՝ սպանելով թուրք պետական պաշտոնյայի:

Պ. - Այո՛, շատ լավ գիտեմ, նա էլ սպանեց Սայիդ Հալիմ փաշային՝ ցեղասպանությունը ծրագրողներից մեկին, որ փախավ Իտալիա, Արշավիր Շիրակյանը գտավ նրան և սպանեց Հռոմի փողոցներից մեկում: Շիրակյանը նույնպես ազատ արձակվեց:

Հ. - Դրոյի բանակում եղած ժամանակ երբևէ մարդ չսպանեցի՞ր:

Պ. - Մենք կամավորներ էինք և օգնում էինք հայ գաղթականներին, որոնք



Գուրգեն Յանիկյան

փախչում էին թուրք զինվորների ջարդերից. բայց մենք մեզ և նրանց պաշտպանելու համար, շատ բնական է, զենքով պետք է ինքնապաշտպանվեինք, որ կարողանայինք գաղթականներին ապահով տեղ հասցնել, մի՞թե դա մարդ սպանել է, մի՞թե Վիետնամը պաշտպանող ամերիկացի զինվորները մարդ են սպանում…

Հ. - Մոսկվայի համալսարանում եղած ժամանակամիջոցում ինչպիսի՞ն էր ուսանողների ընկերային մտայնությունը, մասնավորապես, 1915-ի պատերազմի ժամանակ:

Պ. - Կային մի շարք գաղափարական կազմակերպություններ ցարական տիրապետության դեմ, կային հարուստների կազմակերպություններ, կային ազգայնական ուսանողական կազմակերպություններ:

Հ. - Դուք որևէ կազմակերպության անդա՞մ էիք:

Պ. - Այո՛, կար ուսանողների մի խումբ, որոնք սերում էին հարուստ ընտանիքից՝ ռուս, վրացի, ուկրաինացի, կովկասցի, հայ, հրեա, այս խմբի անդամներս շատ էինք հետաքրքրվում պատերազմի ժամանակ Թուրքիայում իրագործվող ջարդերով…: Լուրերը սարսափելի էին և այս խումբը (60 հոգի էինք) որոշեց գնալ սահմանագլուխ և օգնել հայերին…: Մեզ օգնեց մի ռուս մեծահարուստ, որը տվեց մեր ճամփորդական ծախսերը և ուղարկեց Թիֆլիս…: Ես զորավար Դրոյի խմբում էի…: Ռուսական բանակի հետ հասա Վան:

Հ. - Վանից հետո ո՞ւր գնացիք:

Պ. - Մեր խումբը առաջացավ դեպի Էրզրում: Վեց օր հետո հասանք Կարս, որը գրեթե դատարկ էր... մեզ ասացին, թե հազարավոր հայերի, բանտարկելով եկեղեցիներում, ողջ-ողջ այրել են: Սկսեցինք փնտրել, հազարավոր այրված դիակներ գտանք…:

Մի քանի ամիս Կարսի շրջակայքի կամուրջները նորոգելուց և նորերը կառուցելուց հետո, ֆիզիկապես քայքայված էի, այդ ընթացքում ռուսական բանակը սկսել էր նահանջել: Հայրս ինձ ուղարկեց ավելի բարձր ուսման Շվեյցարիա՝ Ժնև, որտեղ ևս երկու տարի մասնագիտանալուց հետո վերադարձա Թիֆլիս: Ի վերջո, պարսկական հյուպատոսի օգնությամբ անցանք Պարսկաստան…:

Հ. - Թուրքական այս ցեղասպանության մասին գրություններ գրվեցի՞ն:

Պ. - Այո՛, և շատ, ո՛ր մեկը թվեմ: Կարդացած պետք է լինի քաղաքակիրթ աշխարհը, որի պետական կարևոր անհատները թե՛ խորհրդարաններում, թե՛ թերթերից և թե՛ գրքերից իմացած պետք է լինեն մեծագույն ցեղասպանության մասին, որի առաջ Հիտլերի կատարած ցեղասպանությունը հրեաների դեմ ոչինչ է: Կարդացեք Անգլիայի վարչապետի (Ասքվիտի) հրատարակած գիրքը՝ իր բոլոր մանրամասնություններով ու վկայություններով, կարդացեք Ֆրանսիայի և Իտալիայի խորհրդարաններում արտասանված ճառերը, որոնք արձանագրված են ժամանակի թերթերում: Կարդացե՛ք մանավանդ Թուրքիայում Միացյալ Նահանգների դեսպան պրն Մորգենթաուի հաստատորը, որտեղ պիտի տեսնեք թուրք ոճրագործի իսկական պատկերը:

Հ. - 1915-ի ցեղասպանության և հայ ժողովրդի արդար դատի ցույցեր անո՞ւմ էիք:

Պ. - Այո՛, 1918-ից ի վեր բողոքում ու պահանջում ենք մեր 2 միլիոն նահատակների արյան գինը և միջազգային դաշնագրով ճանաչված մեր պատմական հողերի վերադարձը: Ամեն տարի ապրիլի 24-ին աշխարհի չորս կողմերում գտնվող հայերը, որոնք փախել են Թուրքիայից, ցույցեր են անում և պահանջներ ներկայացնում թուրքական կառավարությանը:

Հ. - Պրն դատախազն ասաց, թե նոր քեմալական Թուրքիան նախկինի պես չէ. արաբական գրերը փոխել են և ունեն լատինական գիր, ֆեսը հանել և գլխարկ են գործածում, այժմ ավելի կրթված են, բազմակնությունը վերացված է. ի՞նչ է ձեր կարծիքը:

Պ. - Գրերը փոխելով, ֆեսերը հանելով՝ թուրքը երբեք չի փոխվել, վայրենությունն իրենց ազգային բնազդն է, մահացնելը՝ սրբազան պարտականություն, քրիստոնյա մորթելը սրբություն է նույնիսկ ներկա սերնդի համար: Թուրքը միշտ թուրք է՝ նույն բարբարոսը, նույն ոճրագործը:

Պաշտպան փաստաբան պրն Լինզին, դառնալով երդվյալ դատավորներին, ասաց. «Արդյոք տակավին կարիք ունե՞ք ավելի զորավոր փաստերի թուրքերի կատարած ցեղասպանության մասին. թուրքն այժմ ևս հասկանում է գործել նույնը, թուրքի երկու ներկայացուցիչներն են եղել «Բալթիմոր» հյուրանոցում սպանվածները: Ահավասիկ թուրք ժողովրդի նոր սերունդը, որը այժմ էլ պատրաստվում է բնաջնջել գոյություն ունեցող հայությանը: Պրն Յանիկյանը քանիցս անցել է այդ սպանդանոցների և մահվան միջով: Մի վայրկյան մտածեք և ձեր աչքերի առջև բերեք այդ տեսարանները…»:

«…Դատարանը պետք է արդարորեն դատի, ամբաստանյալին հատուցի արդարությամբ: Մենք՝ պաշտպաններս, այստեղ արդեն քանիցս շեշտեցինք, որ գթություն չենք մուրում, որ զգացմունքից բխած մի բան չենք ուզում, այլ այն, որ կիրառվի պատժական օրենքը: Իսկ ներկա հանգամանքում պատմական իրավունքը հանցավորության մասին գրված հարցի ժխտողական պատասխանն է, որովհետև այն պահին, երբ ամբաստանյալը փողոց իջավ և ատրճանակն ուղղեց իր զոհի վրա, նա հանցավոր չէր: Եվ նա հանցավոր չէր նրա համար, որ իր կամքը առողջ, ազատ չէր և գտնվում էր որոշ ազդեցության տակ: Արդեն ձեզ ասացի, մի օրինակ օգտագործելու համար, որ նա չէր փողոց իջնողը, նրա մեջ իջնում էին դարերը, միլիոնավոր սպանվածները: Նա առաջ պարզած տանում էր իր ողջ ժողովրդի պատվի դրոշը, խոշտանգվածների դրոշը, իր լլկված ընտանիքի դրոշը...»:

ՊԱՇՏՊԱՆ Դ-Ր ՎԵՐԹԱՈՒԵՐ
«Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը»

ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԻՐՅԱՆ

ՀՑԹԻ-ին նվիրաբերվել են Սողոմոն Թեհլիրյանի հազվագյուտ լուսանկարներ:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի լուսանկարների հավաքածուն համալրվեց Սողոմոն Թեհլիրյանի չորս բացառիկ ընտանեկան լուսանկարներով, որոնք սիրահոժար թանգարանին նվիրաբերել է Լևոն Ա. Սարյանը (ԱՄՆ, Գրինֆիլդ):

Սողոմոն Թեհլիրյանը ծնվել է 1896թ.՝ Արևմտյան Հայաստանի էրզրում վիլայեթի Ներքին Բագառիճ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա՝ ավարտել Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանը:

Հայոց ցեղասպանության ընթացքում Ս. Թեհլիրյանն ականատես է եղել իր քույրերի բռնաբարությանն ու ընտանիքի անդամների դաժան սպանությանը թուրքական հրոսակախմբերի կողմից: Տարագրության ընթացքում ծանր վիրավորվելով՝ Թեհլիրյանը երկար ժամանակ համարվել է մահացած: Ավելի ուշ նա տեղափոխվել է Կովկաս՝ անդամագրվելով Անդրանիկի գլխավորած կամավորական ջոկատին:

1921թ. Սողոմոն Թեհլիրյանը ներգրավվեց «Նեմեսիս» օպերացիային՝ Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչների մահապատժի իրականացման գործողություններին: Նրա հիմնական խնդիրն էր գտնել և վրեժխնդիր լինել Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպչից՝ Թալեաթ փաշայից: Երկար որոնումներից հետո, վերջապես, Բեռլինում գտնելով Թալեաթին՝ 1921թ. մարտի 15-ին, Բեռլինի Շառլոտենբուրգ թաղամասի Հայդենբուրգ փողոցում, 25-ամյա Սողոմոն Թեհլիրյանը բազմաթիվ ականատեսների աչքի առջև գնդակահարում է ոճրագործին:

Սողոմոն Թեհլիրյանը ձերբակալվեց Թալեաթ փաշայի սպանության մեղադրանքով. 1921թ. հունիսի 2-ից 3-ը տեղի ունեցած դատավարության ընթացում Ս. Թեհլիրյանը ներկայացրեց Հայոց ցեղասպանության իրողությունն ու իր ընտանիքի սպանության պատմությունը՝ հիմնավորելով իր

Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը

կատարած սպանության պատճառները: Գերմանական դատարանը (նախագահ՝ դոկտոր Լեմբերգ) անմեղսունակ ճանաչեց Սողոմոն Թեհլիրյանին և արդարացրեց նրան:

Սողոմոն Թեհլիրյանի գործը Ռափայել Լեմկինի համար, ով 1944թ. Առաջին անգամ շրջանառության մեջ դրեց ցեղասպանություն եզրը, զայրացնող հանգամանք էր, հետաքննելու համար այն պարադոքսը, թե ինչպես Ս. Թեհլիրյանը կարող էր մեղադրվել մարդասպանության համար, այն դեպքում, երբ սպանվածը՝ Թալեաթը ավելի քան մեկ միլիոն մարդու բնաջնջման ծրագիրը հաջողությամբ իրագործելուց հետո, կարողացել էր խուսափել պատասխանատվությունից:

Սողոմոն Թեհլիրյանը մինչև 1945թ. բնակվեց Բելգիայում, ապա՝ մեկնեց Սան-Ֆրանցիսկո, ուր և մահացավ 1960թ.:

Աղբյուրը՝ www. genocide-museum.am
Սողոմոն Թեհլիրյանի լուսանկարները տե՛ս գունավոր էջում:

Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակը հերքում է

Կը հերքենք Երևանի «Առաւօտ» օրաթերթի այսօրուայ համարին մէջ մեր կազմակերպութեան անունով հրապարակուած, առանց թուականի, կեղծ յայտարարութիւնը, ուր ըսուած է՝ Հ.Ա.Հ.Գ. Բանակը զօրավիգ կը հանդիսանայ Հ.Հ.-Թուրքիա յարաբերութիւններու ներկայ գործընթացին:

Նոյնպէս կը հերքենք մեր կազմակերպութեան տարբեր համակիրներու տեսակետներն ու յայտարարութիւնները, Հ.Ա.Հ.Գ.Բ.-ին վերագրելու միեւնոյն թերթի կողմէ պարբերական քայլերը: Այս թերթը երբէք չէ հրապարակած Հ.Ա.Հ.Գ.Բ.-ի պաշտօնական յայտարարութիւնները, ընդհակառակը միայն տպագրած է մեր կազմակերպութեան անունով կեղծ յայտարարութիւններ եւ թրքամէտ յօդուածներ:

Հ.Հ.-Թուրքիա յարաբերութիւններու ճակատագրական եւ զգայուն ներկայ գործընթացի գծով Հ.Ա.Հ.Գ.Բ.-ի հրապարակային լռութիւնը չի նշանակէր, որ մեր կազմակերպութիւնը ուշադրութեամբ չի հետեւիր ընթացող զարգացումներուն եւ համապատասխան քայլեր չի նախաձեռնէր անոնց նկատմամբ:

Հ.Ա.Հ.Գ.Բ.-ն իրեն կը վերապահէ իրաւունք, այդ քայլերու մասին հանրութեանը հաղորդակից դարձնելու պահը:

Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակ
10.10.2009

Սողոմոն Թեհլիրյանի նորահայտ նկարները, որոնք Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտին նվիրել է Լևոն Ա. Սարյանը (ԱՄՆ Գրինֆիլդ):



7 դեկտեմբեր 1988թ., Սպիտակի երկրաշարժից հետո
Միխայիլ Գորբաչովի այցը աղետի գոտի: